



KALPA-TARU

ISO 9001 CERTIFIED COMPANY

Կալպատարու Փառեր Թրանսմիշն Լիմիթեդ
Մասնաճյուղի գրասենյակ՝ Հայաստանի հանրապետություն, ք. Երևան,
Վ. Սարգսյան 10, Պիացցա Գռանդե շենք, 108 տարածք

Հրագրանից Շինուհայր Միջանցքի Էլեկտրահաղորդման Գծի Վերակառուցման Ծրագիր

Համառոտ Վերաբնակեցման գործողության պլան

Հատված 4. Վայք գիծ

Պայմանագիր

Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 220կՎ ՕԳ-ի կառույցի
նախագծման, մատակարարման և տեղակայման գնում
21.11.2012թ-ի No. HV-W-1/2011 Պայմանագիր

Կազմված՝

Կալպատարու Փառեր Թրանսմիշն Լիմիթեդի կողմից

Ներկայացման ամսաթիվը

28 օգոստոսի, 2015թ.

(վերանայված 2017թ-ի Դեկտեմբերին)

Բովանդակություն

Բովանդակություն

Հապավումներ

Սահմանումներ

Ամփոփ նկարագիր

1.	Ներածություն	12
1.1	Ծրագրի նկարագրություն.....	12
1.2	Ծրագրի աշխարհագրական դիրքը	12
1.3	Ծրագրի նկարագրությունը.....	Error! Bookmark not defined.
1.4	Վերաբնակեցման Գործողության Պլանի կազմման հիմնավորում.....	13
1.5	Վերաբնակեցման գործողության հակիրճ պլանի նպատակը և շրջանակը	14
1.6	Ծրագրի վերջնաժամկետը	15
1.7	Փաստաթղթի հրապարակում	15
2.	Ազդեցության գնահատում.....	19
2.1	Սահմանում	19
2.2	Ուսումնասիրության մեթոդաբանությունը	19
2.3	Ազդեցությունը հողի վրա	20
2.3.1	Հողերի դասակարգումը, ըստ ՀՀ օրենքի.....	20
2.3.2	Հողի կորուստ	20
2.2	Ազդեցությունը մշակաբույսերի վրա	22
2.3	Ազդեցությունը ծառերի վրա	23
2.4	Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների մարդահամարը և ազդեցությունը նրանց կենսամակարդակի վրա	23
2.4.1	Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը	23
2.4.2	Ազդեցություն աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա.....	26
2.4.3	Եկամտի վրա զգալի ազդեցություն կրող ազդակիր ՏՏ-ներ.....	27
2.5	Ազդեցություն՝ ամփոփումը.....	Error! Bookmark not defined.
3.	Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում	30
3.1	Նկարագրություն	30
3.2	Հանրային քննարկումներ և հրապարակման պլան	30
3.3	Հանրային քննարկում.....	30
3.3.1	ՀՎԳՊ-ի կազմման ընթացքում պաշտոնական հանրային քննարկումներ	30
3.3.2	Ոչ-պաշտոնական հանրային քննարկումներ.....	32
3.3.3	ՀՎԳՊ-ի իրականացման և շինարարության ընթացքում հանրային քննարկումներ	33
3.4	Տեղեկատվության հրապարակում.....	33
4.	Բողոքների Կարգավորման Մեխանիզմ և Գործընթացներ	35
4.1	Ներածություն	35
4.2	Բողոքների Կարգավորման Մեխանիզմ.....	35
4.2.1	Առաջին փուլ	35
4.2.2	Երկրորդ փուլ.....	36
4.2.3	Երրորդ փուլ.....	36

4.3	Հիմնական պատասխանատու կողմերը և առկա կապերը բողոքներ ներկայացնելու համար	36
4.4	Բողոքների գրանցման և հասցեագրման գործընթաց	37
4.4.1	Ուսումնասիրում և փաստաթղթավորում	37
4.4.2	Դիտարկում	38
4.5	Ծինարարության փուլում ԲԿՄ	38
5.	Ինստիտուցիոնալ շրջանակ	39
5.1	Ներածություն	39
5.2	ԲԷՑ	39
5.2.1	Ընդհանուր նկարագրություն	39
5.2.2	Հիմնական պատասխանատվությունները	40
5.2.3	ՎԳՊ-ի իրականացման միավոր	40
5.3	ԲԷՑ-ի խորհրդատուները	40
5.3.1	Ծինարար կապալառու	40
5.3.2	Իրականացմանն աջակցող խորհրդատու	40
5.3.3	Անկախ խորհրդատու	41
5.4	Պետական Կառավարման Մարմիններ	41
5.5	Մարզպետարաններ (Տարածաշրջանային լիագոր մարմիններ)	41
5.6	Տեղական Ինքնակառավարման Մարմիններ	41
5.7	Բողոքների Կարգավորման Հանձնաժողով	42
5.8	Հասարակական Կազմակերպություններ	42
5.9	Համաշխարհային Բանկ	42
6.	Օրենսդրական Հայեցակարգ	43
6.1	Տեղական օրենսդրական հայեցակարգ	43
6.2	Հայաստանի օրենքների և Համաշխարհային Բանկի Պարտադրված Վերաբնակեցման Քաղաքականության համեմատությունը	44
6.3	Օրենսդրական բացերի վերլուծություն	46
7.	Իրավասության և Իրավունքների Շրջանակ Իրավասություն	46
7.1	Իրավասություն	46
7.2	Իրավունքների շրջանակը	47
7.2.1	Գյուղատնտեսական նշանակության հող	47
7.2.2	Պետական և համայնքային հողեր	47
7.2.3	Այլ փոխհատուցումներ և դրամական օժանդակություն	48
7.3	Տերմինների աղյուսակ	48
7.4	Վնասված գույքի գնահատում	50
8.	Վերաբնակեցման բյուջեն	51
8.1	Ներածություն	51
8.2	Աղբյուրների և դրամական միջոցների բաշխում	51
8.3	Փոխհատուցում հողի, մշակաբույսերի, ծառերի և այլ կորուստների դեպքում	51
8.3.1	Գնահատման և փոխհատուցման հաշվարկային մոտեցումը	51
8.3.2	Փոխհատուցում մասնավոր հողատարածքների կորստի համար	52
8.3.3	Փոխհատուցում մշակաբույսերի համար	52
8.3.4	Փոխհատուցում ծառերի համար	54
8.3.5	Զգալի ազդեցության համար դրամական աջակցություն	55
8.3.6	Դրամական աջակցություն խոցելի խմբերին	57

8.4	Գրանցման ծախսերը	57
8.5	Բյուջեի ամփոփում.....	59
9.	Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման գործընթաց	60
9.1	Ներածություն	60
9.2	Վերաբնակեցման Գործողությունների Պլանի նախապատրաստական աշխատանքները	60
9.3	Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման նախապատրաստական աշխատանքները	60
9.4	Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման կարևորագույն փուլերը.....	61
9.5	Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման ժամանակացույց.....	63
10.	Մշտադիտարկում.....	64
10.1	Ներածություն	64
10.2	Ներքին մշտադիտարկում	64
10.3	Արտաքին մշտադիտարկում.....	65

Error! Bookmark not defined.

ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 3.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 4.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 5.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 6.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 7.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 8.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 9.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 10.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 11.....	

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՏ	Ազդակիր տնային տնտեսություն
ՇԿ	Շինարար Կապալառու
ՉՈՒ	Չափագրման ուսումնասիրություն
ՎԱ	Վերաբնակեցված անձինք
ԳՕՅՊՆ	Գույքի օտարում հանրային և պետական նպատակներով
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԷՄՅԾ	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ԲԿՄ	Բողոքների կարգավորման մեխանիզմ
ԲԷՑ	Բարձրավոլտ Էլեկտրական Ցանցեր ՓԲԸ
ԻԱԽ	Իրականացմանն աջակցող խորհրդատու
ԿՊԹԼ	Կալպատարու Փաուեր Թրանսմիշն Լիմիթեդ
ՏԻ	Տեղական իշխանություններ
ՏԻՄ	Տեղական Ինքնակառավարման մարմիններ
ԱՄՀՑ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ԳՁ	Գործառնական ձեռնարկ
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձինք
ՀԶ	Հանրային քննարկում
ՀԶՀՊ	Հանրային քննարկման և Հրապարակման Պլան
Ծրագիր	Հրազդանից Շինուհայր միջանցքի ծրագիր

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողության Պլան
ԱԳ	Անվտանգության գոտի
ՎԶԾ	Վերաբնակեցման Քաղաքակառուցության Շրջանակ
ԱԳԿՊԿ	Անշարժ Գույքի Կադստրի Պետական Կոմիտե
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԵԿ	Ենթակայան
ՏԱ	Տեխնիկական Առաջադրանք
ՀՊ	Համայնքապետ
ՀԲ	Համաշխարհային Բանկ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Վերաբնակեցում՝ Բանկի տերմինաբանությամբ նշանակում է հողի զբաղեցումից կամ հողօգտագործման սահմանափակումից առաջացող բոլոր տնտեսական և սոցիալական վնասները, ինչպես նաև դրանից բխող փոխհատուցման և մեղմացման միջոցառումները: Վերաբնակեցումը չի սահմանափակվում իր սովորական նշանակությամբ՝ փաստացի վերաբնակեցում:

Կախված դեպքից, վերաբնակեցումը կարող է ներառել՝ (ա) հողի կամ հողի վրա գտնվող կառույցների ժամանակավոր կամ մշտական ձեռքբերում, ներառյալ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կառույցները, (բ) փաստացի վերաբնակեցում և (գ) տեղահանման տնտեսական հետևանքների հասցեագրում տեղահանված անձանց (ՏԱ) եկամուտների և կենսամակարդակի բարելավման համար (կամ առնվազն նախկին մակարդակի վերականգնում):

Ազդեցության ենթարկված անձինք (ԱԵԱ) այն անձինք են, ովքեր տուժում են ծրագրի ուղղակի տնտեսական և սոցիալական ազդեցությունից, որը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

- Ակտիվների կորուստ կամ վնաս,
- Պետական կարիքների համար հողի օտարում,
- Պարտադրված տեղահանում,
- Բացասական ազդեցություն ձեռքբերված կամ սեփականություն հանդիսացող (ժամանակավոր կամ մշտական) ցանկացած բնակելի շինության, հողի (ներառյալ հողի վրա գտնվող շինությունները, գյուղատնտեսական նշանակության հողերը և արոտավայրերը) կամ ցանկացած այլ հիմնական միջոցի նկատմամբ իրավունքների, սեփականության իրավունքի կամ այլ տնտեսական շահերի վրա:
- Բացասական ազդեցություն արտադրական նշանակության ակտիվների հասանելիության վրա (ժամանակավոր կամ մշտական):
- Բացասական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության, զբաղվածության, աշխատանքի կամ բնակության վայրի վրա:

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը (ՎԳԾ)՝ վերաբնակեցումը կարգավորող փաստաթուղթ է, որը պատրաստվում է, երբ ծրագրի գնահատման փուլում վերաբնակեցման ծավալներն ու աշխարհագրական տեղանքները հստակ հայտնի չեն, քանի որ ծրագիրն ունի բազմաթիվ բաղադրիչներ կամ ծրագրի վերջնական նախագծի մշակումը (ինչպես որ այս դեպքում) ավարտվելու է ավելի ուշ (շինարարության փուլի աշխատանքային նախագծեր): Քաղաքականության շրջանակը սահմանում է ծրագրի իրագործման ընթացքում հնարավոր վերաբնակեցման գործողության նպատակներն ու սկզբունքները, կազմակերպական լուծումները և ֆինանսավորման մեխանիզմները: Շրջանակը նաև գնահատում է ազդակիր անձանց և վերաբնակեցումների հավանական թիվը, հատկապես ֆինանսական

միջնորդություն ենթադրող ծրագրերում, և գնահատում հնարավոր վերաբնակեցման նախապատրաստման, իրականացման և վերահսկողության ինստիտուցիոնալ կարողությունները: Երբ ծրագրի իրականացման ընթացքում վերաբնակեցման չափերը հստակեցվում են, ապա մինչ ծրագրի ֆինանսավորման հաստատումը ՎԳՊ (կամ համառոտ ՎԳՊ՝ կախված ազդեցությունների աստիճանից և խստությունից) Է պատրաստվում (ԳՁ 4.12, պարբ. 29–30):

Վերաբնակեցման գործողությունների այլսը (ՎԳՊ)՝ վերաբնակեցման փաստաթուղթ Է, որը պատրաստվում է երբ հստակեցվում է ծրագրի աշխարհագրական դիրքը, այն է՝ հայտնի են էլեկտրահաղորդման գծի մանրամասն ծրագիծը և հենասյուների հստակ դիրքերը: Եթե էլեկտրահաղորդման գծի վերջնական ծրագիծը չի բավարարում օրենքով սահմանված անվտանգության գոտու նվազագույն պահանջները, ապա հողի ձեռքբերումը հանգեցնում է մարդկանց ֆիզիկական տեղահանման և/կամ ապաստանի կորստի, և/կամ եկամտի աղբյուրի կորստի, և/կամ տնտեսական ռեսուրսների անհասանելիության կամ հասանելիության սահմանափակման: ՎԳՊ-ն պատրաստում է մարդկանց կամ նրանց եկամուտների վրա ազդեցության սկզբնապատճառ հանդիսացող կողմը: ՎԳՊ-ն պարունակում է մանրամասն և իրավական տեսանկյունից պարտավորություն ունեցող պահանջներ, որին համաձայն պետք է կատարվի մարդկանց վերաբնակեցումը և փոխհատուցումը մինչ բացասական հետևանքներ ունեցող միջոցառումների իրականացումը: ՎԳՊ-ն պարունակում է ծրագրի ազդեցությունը կրողների մարդահամարի արդյունքները, ներառյալ կադաստրային տեղեկատվությունը և կորուստների մանրամասն ցուցակը:

Փոխհատուցում՝ վճարում հողի օտարման կամ այլ ակտիվների, ներառյալ հիմնական միջոցների, մասնակի կամ ամբողջական կորստի դիմաց, որը կատարվում է բնափրային, դրամական կամ այլ ակտիվներով փոխհատուցման եղանակով:

Հողի ձեռքբերում՝ հողի, շինությունների կամ դրա վրա գտնվող այլ գույքի նկատմամբ ծրագրի իրականացման նպատակով իրավունքների ձեռքբերում կամ օտարում:

Գյուղատնտեսական նշանակության հողակտորների փոխհատուցման արժեք՝ հավասար արտադրողական կամ օգտագործման ներուժով և ծրագրից տուժած հողակտորի մոտակայքում գտնվող այլ հողակտորի մինչև ծրագրի սկիզբը կամ տեղահանումը ունեցած արժեքն է՝ գումարած հետևյալ ծախսերը՝ հողակտորի նախապատրաստման, որպեսզի այն ունենա նույն հատկանիշները, ինչ որ ծրագրի ազդեցությանը ենթարկված հողակտորը, պետական գրանցման տուրքերն ու վճարները, փոխանցման հետ կապված հարկերը և այլ հողակտորի տրամադրման հետ կապված վճարներն ու տուրքերը:

Տների կամ այլ շինությունների փոխհատուցման արժեք՝ ծրագրից տուժած շինությունների որակին հավասար կամ ավելի լավ որակի և նույն տարածքում գտնվող կառույցների շուկայական արժեքը: Այդ արժեքը պետք է ներառի.

- ա) շինարարական կյութերը,
- բ) շինհրապարակ շինանյութերի տեղափոխման ծախսերը,
- գ) վարձու աշխատողների և կապալառուների վարձատրությունը,
- դ) գրանցման բոլոր ծախսերը:

Վերջնաժամկետ՝ ծրագրի աշխարհագրական սահմաններում ծրագրի ազդեցությանը ենթարկվածների մարդահամարի մեկնարկման ամսաթիվ: Դա այն ամսաթիվն է, որից հետո ծրագրի նպատակներով հողի զբաղեցման կամ ձեռքբերման դիմաց ոչ մի փոխհատուցում չի տրամադրվում:

Խոցելի տնային տնտեսությունները վերաբերում են տնային տնտեսություններին, որոնք չեն կարողանում դիմակայել ճգնաժամի կամ ցնցումների իրավիճակներին, պահպանելու իրենց բարեկեցությունը կամ ապրուստը: Գործնականում դրանք հաճախ են.

- այրիներ, հաշմանդամներ, մարզինալացված խմբեր, ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններ եւ ոչ ֆորմալ սեկտորի աշխատողներ;
- անաշխատունակ տնային տնտեսություններ, որոնք ոչ ոք չի կարող աշխատել և,
- երեխայի ղեկավարած տնային տնտեսություններն ու փողոցային երեխաներ:

Այս տնային տնտեսությունները վերը նշված հատկանիշներից բացի բնութագրվում են ցածր սննդակարգով, ցածր կամ առանց որևէ կրթության, զբաղվածության կամ եկամտի, տարեցները, ազգային փոքրամասնությունները և գենդերային կողմնակալության ենթարկված անձինք:

Ծրագրի շրջանակներում խոցելի տնային տնտեսություններ են համարվում.

- Աղքատ տնային տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի կենսապահովման համակարգում (MLSI) և ստանում են համապատասխան նպաստ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Տնային տնտեսությունները, որոնք ղեկավարվում են միայնակ, այրի, կամ կերակրողին կորցրած կանանցով, եթե այլ աշխատող տարիքի անձ չկա, բացառությամբ կենսաթոշակային տարիքից, որը ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն կատարող անձինք, հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կարգ ունեցող հաշմանդամները, կամ մինչև 23 տարեկան առկա կրթություն ստացող ուսանողները:

- կենսաթոշակային տարիքի մարդկանց (տարեցների) ղեկավարած տնային տնտեսությունները, որտեղ առկա չէ աշխատանքային տարիքի անձ, բացառությամբ կենսաթոշակային տարիքի անձից, ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն կատարող անձինք, հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կարգ ունեցող հաշմանդամները, կամ մինչև 23 տարեկան առկա կրթություն ստացող ուսանողները:

Անվտանգության գոտի (ROW). Օդային ուղեգծի տարածք, որը սահմանափակվում է երկու կողմից հորիզոնական հարթությունից 25մ ուղղաձիգ ներքև, սահմանային լարից 25 մ հեռավորության վրա:

Ամփոփ նկարագիր

Համաշխարհային Բանկի կողմից (ՀԲ) ֆինանսավորված Հրազդանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման վերակառուցման ծրագիրը (Ծրագիր) իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ԲԷՑ) կողմից, Հայաստանի Կառավարության (ՀՀԿ) ենթավարկով: Ծրագիրը նպատակ ունի ամբողջովին վերափոխել Հրազդանի ՋԷԿ-ից (Հայաստանի հյուսիս-արևելք) մինչև Շինուհայրի ենթակայան (հարավ) ձգվող 230 կմ երկարությամբ բարձրավոլտ գիծը ցանցի հուսալիությունը բարձրացնելու, գծի թողունակությունը ավելացնելու և Հայաստանում էներգամատակարարման բացը լրացնելու նպատակով:

Ծրագիրը նախատեսում է նոր հենասյուների մոնտաժում, ներառյալ հիմքերը, ինչպես նաև էլեկտրահաղորդման լարերի, մեկուսիչների և այլ առանցքային ենթակառուցվածքների փոխարինում: Գործող գիծը շահագործման է հանձնվել 1956թ.-ին և հասել է իր օգտակար ծառայության սահմանագծին և տեխնիկապես այլևս չի համապատասխանում ժամանակակից ստանդարտներին: Վերականգման արդյունքում ներկայիս 300 մմ² լայնակի կտրվածքի մակերեսով էլեկտրահաղորդիչ լարերը կփոխարինվեն նոր 400 մմ² տրամագծով էլեկտրահաղորդիչ լարերով գծի թողունակությունը և հուսալիությունը բարելավելու համար:

Նոր գիծը մեծամասամբ զուգահեռ է լինելու հին (մոտ 50 մետր հեռավորության վրա): Այն հիմնականում անցնելու է նույն անվտանգության գոտիով (ԱԳ): Այնուամենայնիվ, ներկայիս գիծն անցնում է մեծ թվով գյուղական և քաղաքային բնակավայրերով, որտեղ անվտանգության գոտին առանց հողի ձեռքբերման հնարավոր չի լինի 50 մետրով տեղաշարժել: Այդ իսկ պատճառով, բնակավայրերից և բնակիչների պարտադրված վերաբնակեցումից խուսափելու համար ընտրվել են շրջանցման ուղիներ: Շեղումները նախագծվել են ոչ միայն բնակավայրերը, այլ նաև մշակութային նշանակության հատվածները և դժվարին տեղանքը գոյություն ունեցող անվտանգության գոտուց շրջանցելու համար:

Համառոտ վերաբնակեցման Գործողության Պլանի նախապատրաստման գործընթացը հեշտացնելու և ամբողջ ծրագիրն իրականացնելու համար ծրագիրը բաժանվել է 5 հատվածների (ինչպես ներկայացված է այս զեկույցի 1.4 ենթաբաժնում), որոնց համար պատրաստվել են առանձին ՀՎԳՊ- ներ:

Էլեկտրահաղորդման գծի անվտանգության գոտում գտնվող բնակելի տարածքների համար պատրաստվել է առանձին ՀՎԳՊ- ներ: Բնակելի հողերը հայտնաբերվել են միայն 2-րդ, 3-րդ և 4-րդ հատվածներում: Ընդհանուր առմամբ, 6 ՀՎԳՊ-ներ են պատրաստվել ամբողջ ծրագրի համար:

Այս ՀՎԳՊ-ում ներկայացվում են Հատված 4-ի՝ Եղեգնաձոր-Սպանդարյան, 68.6կմ, վերաբնակեցման խնդիրները: Այս ՀՎԳՊ- ն նախապես հավանության էր արժանացել ՀԲ-ի կողմից 2015թ. հուլիսի 20-ին, սակայն ծրագրի իրականացման ընթացքում ակնհայտ դարձավ, որ ՀՎԳՊ-ն պետք է վերանայվի

Կադաստրային քարտեզների հետ կապված խնդիրների պատճառով: Կատարվել է կադաստրային հետազոտություն, որից ակնհայտ դարձավ, ծառերի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով նախագծի լրացուցիչ վերանայման կարգ կա: (մեկ հատվածում մոտ 400 ծառ) և գործունեություն (ձկնաբուծություն): Հայտնաբերվեցին¹ նաև կադաստրային քարտեզների հետ կապված խնդիրներ:

Նախագծային խումբը տրամադրել է Նոր նախագծային փոփոխություններ (շտկումներ) 4 հենարանների տեղակայման վայրերի համար ծառերի և ձկնաբուծարանի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: Կադաստրային քարտեզների հետ կապված այս խնդիրը լուծելու համար Կապալառուի կողմից վարձվել է լրացուցիչ խորհրդատու: Խորհրդատուն կատարել է պահանջվող չափման աշխատանքները, և 9 համայնքների համար ճշտված քարտեզները ներկայացվել են համապատասխան համայնքի վարչական կենտրոններ: Համայնքի ղեկավարները ԲԵՑ-ի աջակցությամբ դիմել են Պետական Կադաստր, և մոտ 40 հատ հենարանների տեղակայման վայրերի համար ճշտված կադաստրային քարտեզները գրանցվել են: Հաշվի առնելով, որ Կապալառուն տեղանքում է եղել, և շինարարական աշխատանքները ընթացքի մեջ էին պետական հողատարածքներում, անհրաժեշտ էր արագացնել ՎԳՊ-ի կազմման և իրականացման գործընթացը ոչ խնդրահարույց վայրերում, իսկ խնդրահարույց վայրերը հանվել էին նախնական ՀՎԳՊ-ից, պայմանով, որ դրանք կներառվեն վերանայված ՎԳՊ-ում: Պետական Կադաստրը վերանայել է տվյալները, և մեկ անգամ ևս կատարվել է մարդահամարը, սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունն ու գնահատումը, և ՀՎԳՊ վերանայվել է երկու անգամ միայն կադաստրային քարտեզներում առկա սխալների ուղղման արդյունքն արտացոլելու համար: Առաջին անգամ ՀՎԳՊ վերանայվել է 2016 թվականի մայիսին և երկրորդ անգամ 2017 թվականի մայիսին: Ազդակիր հողատարածքները, որոնք ենթարկվել են փոփոխության (Նոր կամ վերանայված հողեր), և դրա արդյունքում ճշտված տվյալները ընգծված ներկայացված են Հավելված 9-ում²: Վերջին վերանայումը ամփոփ ներկայացված է Աղյուսակ 1.1-ում: Լրացուցիչ հանրային քննարկում և տեղեկատվության հրապարակում է կազմակերպվել վերանայված ՀՎԳՊ-ի համար:

Ծրագրի իրականացմանը նպաստելու և միևնույն ժամանակ թույլ տալով կադաստրային քարտեզների ուղղումը տեղի ունենա, երբ առկա էր այդ խնդիրը, 3-րդ հատվածի 38 և 4-րդ հատվածի 44 հենարանների տարածքում ավարտվեց և անցավ համապատասխանության ստուգումը Արտաքին Մշտադիտարկման Գործակալության՝ ԱՄԳ-ի կողմից հանձնեց Արտագնա մոնիտորինգի գործակալության և ձեռք բերված փորձը հաշվի է առնվել ՎԳՊ-ի վերանայման ընթացքում:

Ոչ մի աշխատանք չի իրականացվի ազդակիր հողատարածքների վրա, մինչև ազդակիր տնային տնտեսություններին չվճարվի ամբողջական փոխհատուցումը: Քանի որ տարբեր հենարանների տեղակայման վայրերի համար հողատարածքները սփռված են, հնարավոր կլինի կազմակերպել բոլոր շինարարական աշխատանքներն այնպես, որ չփոխհատուցված հողատարածքները ազդեցության չենթարկվեն:

Աղյուսակ 1.1: Փոփոխությունների ամփոփում (մասնավոր և առանց գրանցման հողեր)

Կարգավիճակ	Հողակտորներ
Նոր հողակտորներ ³	12
Հողեր, որոնք այլևս ազդակիր չեն (հանվել են այս ՎԳՊ-ից)	28
Որտեղ ազդեցությունը վերանայվել է	52

ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

¹ Կադաստրային խնդիրները ներառում են կադաստրային քարտեզների և համայնքների / ԱԵԱ-ների կամ դիտարկումների տեղեկությունները, կադաստրային քարտեզների սխալները և այլն: Սա թույլ չի տվել հարցման թիմին բացահայտել ճիշտ հողատերերին, վարձակալներին եւ օգտագործողներին:

² Քանի որ ՎԳՊ-ն թարմացվել է երկու անգամ, առաջին անգամ վերանայված տողերը նշվում են կարմիրով եւ երկրորդ անգամ կապույտով:

³ Նոր հողերի նշանակությունը գյուղատնտեսական է:

Ազդակիր անձանց ազդեցության ուսումնասիրությունը, մարդահամարը և ազդակիր անձանց գույքագրումը պարզել է, որ ծրագրի իրականացման համար պահանջվում է ընդհանուր առմամբ 70,637.30 ք.մ հող, որոնք գտնվում են 276 հողատարածքներում՝ մեկ քաղաքային և 11 գյուղական համայնքներում, որոնք գտնվում են Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում: 90 հողակտոր 21,955 ք.մ մասնավոր է. (Գյուղատնտեսական կամ բնակավայրերի նշանակության), որոնք կազմում են ընդհանուր ձեռք բերված հողի 3,832.30ք.մ. 31.08% -ը: 17 հողակտոր չգրանցված հողեր են, որը կազմում են ընդհանուր ձեռք բերվող հողերի 5.42% -ը: 44,202 .մ. 167 հողակտորներ համայնքային հողեր են, որը կազմում է ընդհանուր ձեռք բերվող 648 ք.մ հողերի 62.58% - ը: 2 հողակտոր պետական հողեր են, որը կազմում է ընդհանուր ձեռք բերման 0,92% -ը: Ընդհանուր առմամբ 184 ՏՏ կենթարկվի որոշակի ազդեցության:

Բոլոր 90 մասնավոր հողատարածքները գյուղատնտեսական նպատակներով են օգտագործվում՝ անկախ հողատեսքից: Բոլոր 167 համայնքային հողատարածքները չեն օգտագործվում: 1 համայնքային հողակտոր նախատեսված է անտառի⁴ համար և 7 հողակտոր արդյունաբերական նշանակություն ունեն: Գոյություն ունեն 2 պետական հողակտորներ, որոնք չեն օգտագործվում: Ազդակիր բոլոր հողատեսքերի սեփականատերերը, բացառության պետականի փոխհատուցում կատանան⁵:

Գոյություն ունեն 6 տեսակի մշակաբույսեր, որոնք հանդիպել են 35 ազդակիր հողակտորներում, որոնք կազմել են 9,659 ք.մ. Տարեկան առումով ընդամենը 4,464.30 կգ մշակաբույսերի կորուստ կլինի: Այս ազդակիր հատվածում 11 տեսակի ծառեր՝, հասուն պտղատու և հասուն ոչ պտղատու ծառեր կան: Ընդհանուր առմամբ 228 ծառեր ազդեցության են ենթարկվել::

184 ազդակիր տնտեսություններից 177 ում մարդահամար է կատարվել, որտեղ ընդհանուր առմամբ 855 ազդակիր մարդ է հաշվառվել: Գոյություն ունեն 27 խոցեյի տնտեսություններ, ներառյալ այն տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ընտանեկան նպաստի համակարգում, որոնք աղքատության նպաստ են ստանում որոնց ընտանիքի ղեկավարը կանայք կամ տարեցներ են հանդիսանում: .

ԲԱՏԱՌԻՎ՝ ԳԵՐԱԿԱ ԾԱՅԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Սույն հատվածի համար բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 14-ին, իսկ կադաստրային քարտեզների ուղղման ենթարկված հողակտորների համար 2017 թվականի ապրիլին:

Բողոքների լուծում

Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) հաստատվել է յուրաքանչյուր համայնքում ՀՎԳԴ իրականացումից առաջ, մասնավորապես. բողոքների համակարգման պատասխանատուն և ազդակիր համայնքի առաջադրված ներկայացուցիչն ապահովում են ԱԵԳ-երի համար ԲԼՄ հասանելիությունը և, որպեսզի ԱԵԳ-ն կարողանա բողոքարկել հողի կամ այլ գույքի փոխհատուցման արդյունքում առաջացած ցանկացած որոշում, գործունեություն կամ գործողություն: ԱԵԳ-երը տեղեկացված են իրենց բողոքները ԲԼՄ միջոցով կամ այլ հանրային իշխանություններին ուղղելու իրավունքների և ընթացակարգերի վերաբերյալ: Բացի ԲԼՄ-ի հասանելիությունից, ԱԵԳ-երը ազատ են դիմելու երկրի իրավական համակարգին ԲԼՄ գործընթացի ցանկացած փուլում:

Աղյուսակ 1.2: Ազդակիր համայնքների նշանակված ԲԿՄ ներկայացուցիչներ

N	համայնք	Պաշտոնը	Անուն ազգանուն	հեռախոս
1	Եղեգնաձոր	Համայնքի ղեկավար	Ղավիթ Հարությունյան	(+374 281) 2-20-20,2-51-20
2	Ագարակաձոր/Արենի	Համայնքի	Հուսիկ Սահակյան	(+374 281) 6 00 01

⁴ Այդ հողերի կատեգորիաների փոփոխման գործընթացն արդեն ավարտված է: Հողում եւ հարեւան տարածքում ծառեր չկան: Նախագիծը փոխանցվել է նաեւ ՀՀ բնապահպանության նախարարության Էկոլոգիական փորձաքննությանը

⁵ Մասնավոր սեփականություն հանդիսացող հողը կփոխհատուցվի ՎԳԴ-ի բյուջեից, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կփոխհատուցվեն ԲԵՏ-ի բյուջեից:

3	Մալիշկա	Ղեկավար Համայնքի ղեկավար	Միեր Մովսիսյան	(+374 281) 2-20-84
4	Արին/Վայք*	Ղեկավար Համայնքի ղեկավար	Տարո Ավետյան	(+374 282) 9-28 66,2-11-66
5	Գնդեվազ/Զերմուկ**	Ղեկավար Համայնքի ղեկավար	Վարդան Հովհաննիսյան	(+374 287) 2 12 12, 2 12 02
6	Սարավան/Չառիթափ** *	Ղեկավար Համայնքի ղեկավար	Սիմոն Բաբայան	(+374) 93 93-33-99
7	Անգեղակոթ	Ղեկավար Համայնքի ղեկավար	Արմենակ Մարկոսյան	(+37494) 208971
8	Շաղաթ	Ղեկավար Համայնքի ղեկավար	Տիգրան Խաչատրյան	(+374 93) 052244
9	Sarnakunk****	Ղեկավար Համայնքի ղեկավար	Առուստամ Առուստամյան	(374 94) 405252
10	Գորայք			
11	Տղուկ****			
12	Սպանդարյան****			
* Համայնքը կցված է Վայքի համայնքին				
** Համայնքը կցված է Զերմուկ համայնքին				
*** Համայնքը կցված է Չառիթափ համայնքին				
**** Համայնքը կցված է Գորայք համայնքին				

Հանրային քննարկումներ ԵՎ տեղեկատվության հրապարակում

Բոլոր ազդեցության ենթակա համայնքներում ԱԵԱ-երի ներկայացուցիչների և տեղական իշխանությունների հետ գույքագրող և գնահատող ընկերության կողմից ոչ պաշտոնական քննարկումներ են կազմակերպվել չափագրման, գույքագրման և մարդահամարի իրականացումից առաջ և ընթացքում:

ԲԵՑ-ը հանրային քննարկումներ է անցկացրել 4-րդ հատվածի ԱԵԱ-երի հետ ՀՎԳՊ պատրաստման, իրականացման և փոխհատուցումների հարցերով, ներառյալ ՀՀ կառավարության կողմից նախնական ուսումնասիրության մասին որոշման ընդունման և գույքագրման աշխատանքների մեկնարկի հարցերով: Նախնական ՀՎԳՊ-ում ընդգրկված ԱԵԱ-երի համար հանրային քննարկումներ (ՀՔ) են անցկացվել 2015 թվականի մարտից մինչև ապրիլ ընկած ժամանակահատվածում: ՀՔ ժամանակ ԱԵԱ-երին և տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվել է ՀՎԳՊ տեղեկատվական գրքույկ՝ հայերեն լեզվով:

2017 թվականի ապրիլին լրացուցիչ քննարկումներ և տեղեկատվության հրապարակում է կազմակերպվել այն ԱԵԱ-երի համար, որոնք ընդգրկվել են վերանայված ՀՎԳՊ (2017-ի մայիս) մեջ: Զանի որ նոր հողերն ընդամենը 12 են, որոնք տեղայնված են 5 տարբեր համայնքներում, ԱԵԱ-երի հետ խորհրդատվությունն անց է կացվել հեռախոսով և ուսումնասիրության աշխատանքների ժամանակ, ինչպես նաև պաշտոնական նամակներով ԱԵԱ-երին են ուղարկվել ՀՎԳՊ տեղեկատվական գրքույկը՝ հայերեն լեզվով, և գերակա շահի ու գույքագրման վերաբերյալ մանրամասները: ՀՔ կողմից հաստատվելուց հետո վերանայված ՀՎԳՊ հայերեն տարբերակը հասանելի կլինի յուրաքանչյուր ազդակիր համայնքում և ԲԵՑ-ի գրասենյակում: Վերջնական վերանայված ՀՎԳՊ անգլերեն տարբերակը կհրապարակվի ՀՔ կայքում: Վերջնական վերանայված ՀՎԳՊ հայերեն և անգլերեն տարբերակները կհրապարակվի ԲԵՑ-ի կայքում:

Աղյուսակ 1.3: Հանրային քննարկումներին մասնակցած ԱԵԱ՝ Ազդեցության ենթարկված Անձանց թիվը համայնքներում

N	Համայնք	Հանրային քննարկումների օրը	Մասնակիցներ
1	Եղեգնաձոր	Ապրիլ 14, 2015	12
2	Agarakadzor	Ապրիլ 14, 2015	16

3	Malishka	Ապրիլ 14,2015	18
4	Arin	Ապրիլ 14,2015	12
5	Gndevaz	Մարտի 10, 2015	11
6	Saravan	Մարտի 10, 2015	7
7	Gorayk	Ապրիլ 29, 2015	13
8	Tsghuk	Ապրիլ 29, 2015	17
9	Sarnakunk	Մարտի 10, 2015	11
10	Spandaryan	Ապրիլ 28,2015	12
11	Angeghakot	Ապրիլ 28,2015	19
Ընդամենը			148

ՀՎԳՊ ԲՅՈՒՋԵՆ

ՀՎԳՊ իրականացումը կտևի մոտ 3 ամիս: 4-րդ հատվածի վերանայված ՎԳՊ իրականացումը կարժենա **68 916 670** ՀՀ դրամ (**143 278** ԱՄՆ դոլար):

Մշտադիտարկում ԵՎ գնահատում

ՀՎԳՊ իրականացումը ենթարկվում է ներքին մշտադիտարկման ԲԷՑ-ի ու Վերահսկման խորհրդատուի կողմից և մշտադիտարկման արդյունքները ներկայացվում են ՀԲ Ամսական և Եռամսյակային վերահսկման հաշվետվություններում: Արտաքին մշտադիտարկման խորհրդատու (ԱՄԽ) է վարձվել ԲԷՑ-ի կողմից արտաքին մշտադիտարկում անցկացնելու համար: Մեկ հաշվետվություն, որը ներառում է 3-րդ և 4-րդ հատվածների տեղամասերի մի մասը, մշակվել և ՀԲ է ներկայացվել 2016 թվականի օգոստոսի 22-ին: Մնացած տեղամասերի համար (վերանայված ՀՎԳՊ-ում ներառված) մեկ այլ հաշվետվություն կմշակվի: Սպասվում է, որ 3-րդ և 4-րդ հատվածների մնացած տեղամասերի համապատասխանության հաշվետվությունը կներկայացվի ՀԲ մինչև 2018 թվականի Փետրվարի 28-ը: ԱՄԽ իրականացնում է ՀՎԳՊ իրականացման մշտադիտարկում և ներառում է իր մշտադիտարկման արդյունքները համապատասխանության հաշվետվության մեջ, որը պետք է ընդունելի լինի ՀԲ համար, որպես շինարարական աշխատանքները սկսելու նախապայման:

1. Ներածություն

1.1 Ծրագրի նկարագրություն

1. Համաշխարհային Բանկի կողմից (ՀԲ) ֆինանսավորված Հրազդանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման վերակառուցման ծրագիրը (Ծրագիր) իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ԲԷՑ) կողմից, Հայաստանի Կառավարության (ՀՀԿ) ենթավարկով: Ծրագիրը նպատակ ունի ամբողջովին վերափոխել Հրազդանի ՋԷԿ-ից (Հայաստանի հյուսիս-արևելք) մինչև Շինուհայրի ենթակայան (հարավ) ձգվող 230 կմ երկարությամբ բարձրավոլտ գիծը ցանցի հուսալիությունը բարձրացնելու, գծի թողունակությունը ավելացնելու և Հայաստանում էներգամատակարարման բացը լրացնելու նպատակով:

1.2 Ծրագրի աշխարհագրական դիրքը

2. Հայաստանի Հանրապետությունը լեռնային երկիր է 29,743 կմ² տարածքով: Հյուսիսում այն սահմանակից է Վրաստանին, արևելյան մասում Ադրբեջանին, հարավում՝ Իրանին և արևմուտքում՝ Թուրքիային: Ծրագրի տարածքը Հայաստանի հարավային հատվածն է, որի մեջ մտնում են Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը:

3. Էլեկտրահաղորդման գծի վերակառուցման բաղադրիչը բաղկացած է հինգ առանձին հատվածներից՝ Նորաղուզ (45 կմ), Լիճք (25 կմ), Վարդենիս (45 կմ), Վայք (70 կմ) և Որոտան 1 (40 կմ), որոնք անցնում են երկրի կենտրոնական մարզերով (օրինակ՝ Կոտայքի մարզ)՝ հասնելով Վայք քաղաքը, և ավարտվում երկրի հարավում (Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի մերձակայք): Գծի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 232,5 կմ: Ենթակայաններն ու էլեկտրակայանները գտնվում են Հրազդանում (Հրազդանի ջերմային էլեկտրակայան), Գավառում, Լիճքում, Եղեգնաձորում, Շաղաթ գյուղում (Սպանդարյան հիդրոէլեկտրակայան) և Շինուհայրում:

Պատկեր 1. Ծրագրի աշխարհագրական դիրքը



1.3 Ծրագրի նկարագրությունը

4. Ծրագիրը նախատեսում է նոր հենասյուների մոնտաժում, ներառյալ հիմքերը, ինչպես նաև էլեկտրահաղորդման լարերի, մեկուսիչների և այլ առանցքային ենթակառուցվածքների փոխարինում: Գործող գիծը շահագործման է հանձնվել 1956թ.-ին և հասել է իր օգտակար ծառայության սահմանագծին և տեխնիկապես այլևս չի համապատասխանում ժամանակակից ստանդարտներին: Վերականգման արդյունքում ներկայիս 300 մմ² լայնակի կտրվածքի մակերեսով էլեկտրահաղորդիչ լարերը

կփոխարինվեն Նոր 400 մ² տրամագծով էլեկտրահաղորդիչ լարերով գծի թողունակությունը և հուսալիությունը բարելավելու համար:

5. Նոր գիծը մեծամասամբ զուգահեռ է լինելու հին (մոտ 50 մետր հեռավորության վրա): Այն հիմնականում անցնելու է Նույն անվտանգության գոտիով (ԱԳ): Այնուամենայնիվ, ներկայիս գիծն անցնում է մեծ թվով գյուղական և քաղաքային բնակավայրերով, որտեղ անվտանգության գոտին առանց հողի ձեռքբերման հնարավոր չի լինի 50 մետրով տեղաշարժել: Այդ իսկ պատճառով, բնակավայրերից և բնակիչների պարտադրված վերաբնակեցումից խուսափելու համար ընտրվել են շրջանցման ուղիներ: Շեղումները նախագծվել են ոչ միայն բնակավայրերը, այլ նաև մշակութային նշանակության հատվածները և դժվարին տեղանքը գոյություն ունեցող անվտանգության գոտուց շրջանցելու համար:

1.4 Վերաբնակեցման Գործողության Պլանի կազմման հիմնավորում

6. Զանի որ Նոր գիծը ամբողջությամբ չի գտնվելու գոյություն ունեցող գծի անվտանգության գոտու սահմաններում, ապա հողակտորների և հողօգտագործման վրա մշտական ազդեցության դեպքում առաջանալու է հողի ձեռքբերման անհրաժեշտություն (հաշվի առնելով բարձրության սահմանափակումները): Հողի ձեռքբերումը պահանջվում է հենարանների հիմքերի շինարարության համար: Եթե գծի անվտանգության գոտում հայտնվեն տներ և անվտանգ հեռավորության նվազագույն պահանջները չբավարարվեն, ապա կառաջանա վերաբնակեցման անհրաժեշտություն: Այնուամենայնիվ, ծրագրի մանրամասն նախագծման շնորհիվ հնարավոր է եղել գտնել լուծումներ, որոնք թույլ են տվել խուսափել ազդակիր անձանց ուղղակի տեղահանումից:


7. Ծրագրով չի պահանջվում հողերի Էական ձեռքբերում և չի ներառելու ԱԵԱ-ց ֆիզիկական վերաբնակեցում: Այդ իսկ պատճառով կազմվել է հակիրճ ՎԳՊ, ըստ ԳՁ 4.12, Հավելված Ա, պարբ. 2:

Ա. ՀԿԳՊ-ի կազմման գործընթացը հեշտացնելու և ամբողջ Ծրագիրն իրականացնելու համար ծրագիրը բաժանվել է հետևյալ հինգ հատվածների, որոնց համար առանձին ՎԳՊ-ներ կազմվում են կամ արդեն կազմվել են:

1. Հրազդանի ՋԷԿ - Կամո (Նորադուզ)՝ միաշղթա 41.1 կմ + երկշղթա 3.5 կմ
2. Կամո - Լիճք (Լիճք)՝ միաշղթա 29.8 կմ
3. Լիճք - Եղեգնաձոր (Վարդենիս)՝ միաշղթա 49.1 կմ
4. Եղեգնաձոր – Սպանդարյան ՀԷԿ (Վայք)՝ միաշղթա 64 կմ + երկշղթա 4.6 կմ
5. Սպանդարյան ՀԷԿ - Շինուհայր (Ռոտտան 1)՝ միաշղթա 36.4 կմ

Այս ՎԳՊ-ում ներկայացվում են Հատված 4-ի՝ Եղեգնաձոր-Սպանդարյան, 68.6կմ, վերաբնակեցման խնդիրները

Պատկեր 2. Հատված 4 ի աշխարհագրական դիրքը



Ճ 4 ի աշխարհագրական դիրքը

1.5 Վերաբնակեցման գործողության հակիրճ պլանի նպատակը և շրջանակը

8. ՀՎԳԴ-ի հիմնական նպատակը ծրագրի ազդեցությանը ենթարկված անձանց հայտնաբերելն ու աջակցելն է նրանց կյանքի որակը և կենսակերպը վերականգնելու և առնվազն այն մակարդակին հասցնելու համար, որը նրանք ունեցել են մինչև Ծրագիրը:

9. Երբ կազմվել է մանրամասն նախագիծը՝ հիմնվելով կադաստրային չափագրման վրա, որում ազդեցության ենթարկված գույքերը սկզբնական անվտանգության գոտու հետ միասին բացահայտվել են, Կառավարությունը ընդունել է 2014թ-ի հունիսի 12 N 599-Ն նախնական ուսումնասիրության վերաբերյալ որոշումը, ըստ որի չափագրող թիմին թույլատրվում է կատարել գույքագրում և կազմել գույքերի վերջնական ցանկը Չերակա Հանրային Շահ ճանաչելու համար, որով կընդունվի Ծրագիրը բացառապես որպես պետական (հանրային) հետաքրքրություն:

10. Նախնական ուսումնասիրության վերաբերյալ որոշումն ընդունվելուց հետո ՎԳԴ-ի կազմման համար ձեռնարկվում են հետևյալ քայլերը՝

1. ԱԵԱ , ազդակիր տնային տնտեսությունների մարդահամարի ավարտում և կորուստների գույքագրում,
2. Մանրամասն չափագրումների, նկարագրության ավարտում և ազդեցության ենթարկված հողերի, մշակաբույսերի գնահատում,
3. ԱԵԱ հետ հանրային քննարկումների ավարտում,
4. Բոլոր տեսակի կորուստների համար փոխհատուցման մանրամասն բյուջեի կազմում:

11. Այս ՀՎԳԴ-ն ներկայացնում է մանրամասն հաշվետվություններ փոխհատուցման, վերաբնակեցման և վերականգնման համար՝

1. ԱԵԱ նկարագիրը,
2. Ենթածրագրի կորուստների և ազդեցությունների չափը,
3. Տեղեկատվության հրապարակումը, հանրային քննարկումները և մասնակցությունը,
4. Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը փոխհատուցման վճարումների և վերականգնման համար,

5. Բողոքների կարգավորման մեխանիզմը,
6. Վերաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ գնահատումը և փոխհատուցումը կորցրած ակտիվների և վերականգնման համար,
7. Վերաբնակեցման պլանի իրականացման ժամանակացույցը և ինստիտուցիոնալ բաղադրիչների հայեցակարգը, և
8. ՎԳԴ-ի իրականացման մշտադիտարկումը:

1.6 Ծրագրի վերջնաժամկետը

12. Ծրագրի վերջնաժամկետը 2015թ-ի մարտի 10-ն է, երբ սկսվում են մարդահամարը և գույքագրումը: Սխալ կադաստրային քարտեզներով հողատարածքների համար վերջնաժամկետ է սահմանվել 2016թ-ի մայիսի 1-ը (ՀՎԳԴ առաջին վերանայման համար) և, քանի որ ՀՎԳԴ երկրորդ վերանայման համար մարդահամարը և գույքագրումը սկսել է ապրիլի 1-ին, վերջնաժամկետ սահմանվել է 2017 թվականի ապրիլի 1-ը: Բոլոր մարդիկ, կազմակերպությունները, որոնք վերջնաժամկետից հետո տեղափոխվում են Ծրագրի տարածք և/կամ մարդիկ, որոնք իրականացնում են շինարարական աշխատանքներ, տնկում են ծառեր և այլն, համարվում ենք իրավունք չունեցող ԱԵԱ, և այսպիսով չեն ստանում ոչ մի փոխհատուցում: Հայտարարությունը փակցվում է տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) գրասենյակներում յուրաքանչյուր բնակավայրում հանրային քննարկումների սկսման ամսաթվին: Վերջնաժամկետի վերաբերյալ հայտարարության մանրամասները հրատարակվել են ԱԵԱ պաշտոնական հանրային քննարկման (ՀՔ) հանդիպումների ժամանակ: ՀՎԳԴ երկրորդ վերանայման վերջնաժամկետը փոստով ծանուցվել է ԱԵԱ-երին: Եթե կտրուկ կվազել է ակտիվների գնահատման վրա ազդող նշանակալից գնաճը, ապա դա հաշվի կառնվի մինչև փոխհատուցման վճարումը:⁶

1.7 Փաստաթղթի հրապարակում

13. Վերանայված ՀՎԳԴ-ն կիրառարակվի ԲԷՑ-ի կայքում հայերեն և անգլերեն լեզուներով, Համաշխարհային բանկի կողմից հաստատվելուց հետո: ՀՎԳԴ-ն կազմվել է համատեղ: ՀՎԳԴ-ի կազմման ժամանակ մի շարք հանրային լուսմներ են իրականացվել ազդակիր համայնքներում (մանրամասները ներկայացված են համապատասխան գլխում): Այն կիրառարակվի և կներկայացվի Հանրային քննարկումների ժամանակ բոլոր ազդակիր համայնքներում և կվերանայվի ԱԵԱ և շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների համաձայն: Վերանայված ՀՎԳԴ-ն հասանելի կլինի բոլոր ազդակիր համայնքներում՝ տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում:

1.8 Իրականացման ընթացքում ձեռք բերված փորձը

14. Այս ՀՎԳԴ-ը թարմացվել է միայն երկու անգամ, արտացոլելու համար կադաստրային քարտեզներում կատարված սխալների ուղղումները: Առաջին թարմացումը տեղի է ունեցել 2016 թ. Մայիսին և երկրորդը՝ 2017 թ. Մայիսին: ՀՎԳԴ իրականացումը 3-րդ հատվածի 38 տեղամասերի համար և 4-րդ հատվածի 44-ի համար արդեն ավարտվել է և վերջիններս անցել են Արտաքին Մշտադիտարկման Գործակալության համապատասխանության վերանայում: Ստորել բերված աղյուսակում ներկայացված դասերը, ինչպես նաև ՀՎԴԳ իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացման համար ԱՄԳ-ի կողմից արվախ առաջարկությունները ներկայացվածն են ստորև:

Աղյուսակ 1.4. ԱՄԳ- ի առաջարկություններն ու քաղված դասերը

N	ԱՄԳ- ի առաջարկություններն ու քաղված	ԲԷՑ-ի կատարած աշխատանքները
---	-------------------------------------	----------------------------

⁶ Նախքան փոխհատուցման վճարումը Լիցենզավորված Գնահատման Խորհրդատուն կտրամադրի հողում այն մասին, թե արդյոք եղել է նշանակալի գնաճ, որն ազդել է ակտիվների գնահատման վրա՝ սկսած վերջնաժամկետից: Եթե այո, ապա ակտիվները կվերագնահատվեն, իսկ ՎԳԴ-ն կթարմացվի (անհրաժեշտության դեպքում):

	դասերը	
1	Ապագայում կադաստրային քարտեզների հետ կապված խնդիրներից խուսափելու համար խորհուրդ է տրվում ազդակիր հողերի չափագրման ժամանակ իրականացնել փաստացի չափագրում և այնուհետև համեմատել տվյալները Պետական Կադաստրի կողմից տրամադրված տեղեկատվության հետ:	Այս պահանջը ներառվել է SU-ում՝ ՎԳՊ-ի նախապատրաստման խորհրդատուի համար:
2	Մենք խորհուրդ ենք տալիս ավելի շատ ջանքեր գործադրել հանրային իրազեկման և խորհրդատվական գործընթացի վրա, ընդգծելով Ծրագրի կողմից ՎԳՊ-ի իրականացման հետ կապված որոշակի փաստաթղթերի համար վճարների / վճարների փոխհատուցումը: Բացի այդ, մենք առաջարկում ենք ընդլայնել ՀԿ-ների ներգրավվածությունը և տարածել Ծրագրի տեղեկատվական բրոշյուրները:	ԲԷՑ-ն ակտիվ կապի մեջ է է հին և նոր ԱԵԱ-երի հետ՝ փոխհատուցման գործիքները անհատ խորհրդակցությունների և համայնքային կենտրոններում հանդիպումների միջոցով մեկ անգամ եւս նկարագրելու համար: Բոլոր ԱԵԱ-ներին հնարավորություն տրվեց հարցեր տալ, բարձրացնել իրենց խնդիրները՝ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես օրինակ՝ փաստաբանների իրավունքը և այլն, և ևս մեկ անգամ նշվել է, որ սեփականության օտարման հետ կապված ԱԵԱ-ների կողմից կատարվող բոլոր ծախսերը կվճարվեն ԲԷՑ-ի կողմից:
3	Իրազեկման և վստահության մակարդակի բարձրացման և ցանկալի արդյունքների հասնելու նպատակով Ծրագրի թիմը պետք է խրախուսի ԱԵԱ-ներին, որ վերջիններս անհամաձայնությունների կամ բողոքների դեպքում օգտագործեն առկա բողոքների լուծման մեխանիզմը:	ԱԵԱ-ները լրացուցիչ տեղեկացվել և հիշեցվել են բողոքների քննարկման մեխանիզմի, մասնավորապես՝ բողոքների համակարգողի առկայության, որն ապահովում է ԱԵԱ-ների մուտքը ԲԼՄ և ապահովում է, որ ԱԵԱ-ն կարողանա բողոքարկել հողի կամ այլ ակտիվների կորստի դիմաց փոխհատուցման ստացված ցանկացած որոշում, պրակտիկա կամ գործունեություն:
4	Բարելավել ազդակիր հողերի բնութագրերի տվյալների բազայի կառուցվածքը՝ այն դարձնելով ավելի հարմար և համապարփակ տարբեր վերլուծությունների և համեմատությունների համար: Մասնավորապես, խորհուրդ է տրվում ավելացնել SS-ների թվաքանակը յուրաքանչյուր հողատարածքների համար և նշել խոցելի խմբերին տրամադրվող նպաստի կատեգորիան:	Հավելված 9-ում ընդգրկված է խոցելիության խմբի վերաբերյալ (աղքատ կամ միայնակ կանանց կամ տարեցների կոմիտեից ղեկավարվող) և յուրաքանչյուր հողի համար SS-ների քանակության վերաբերյալ տեղեկատվությունը:
5	Մենք խորհուրդ ենք տալիս ընդլայնել ներքին դիտարկումների հաշվետվությունների բովանդակությունը՝ ավելի շատ ուշադրություն դարձնելով իրականացման գործընթացների մանրամասներին: Անհրաժեշտ է ներառել	Ներքին մշտադիտարկման հաշվետվությունները կառուցվածքային կերպով վերանայվել են: Ներառվել է ավելի մանրամասն և հասկանալի տեղեկատվություն ներգրավման գործընթացի վերաբերյալ, այդ թվում՝ դաշտային

բողոքների բոլոր գործերը այդ զեկույցներում, ներկայացնելով ներկայացնելու կարգը:	այցելությունների, ԱԵԱ-ների հետ խորհրդակցությունների, դժգոհությունների և այլն:
---	---

15. **Table 1.4: ԱՄԳ-ի խորհուրդները և ձեռք բերված փորձը**

N	ԱՄԳ-ի առաջարկություններն ու քաղված դասերը	ԲԵՑ-ի կատարած աշխատանքները
1	Ապագայում կադաստրային քարտեզների հետ կապված խնդիրներից խուսափելու համար խորհուրդ է տրվում ազդակիր հողերի չափագրման ժամանակ իրականացնել փաստացի չափագրում և այնուհետև համեմատել տվյալները Պետական Կադաստրի կողմից տրամադրված տեղեկատվության հետ:	Պահանջը ներառվել է Տեխնիկական Առաջարկների մեջ՝ ՎԳՊ-ի պատրաստման խորհրդատուի համար:
2	Մենք խորհուրդ ենք տալիս ավելի շատ ջանքեր գործադրել հանրային իրազեկման և խորհրդատվական գործընթացի վրա, ընդգծելով Ծրագրի կողմից ՀԿԳՊ-ի իրականացման հետ կապված որոշակի փաստաթղթերի համար վճարների / վճարների փոխհատուցումը: Բացի այդ, մենք առաջարկում ենք ընդլայնել ՀԿ-ների ներգրավվածությունը և տարածել Ծրագրի տեղեկատվական բրոշյուրները .	ԲԵՑ-ն ակտիվորեն ներգրավված է հին և նոր ԱԵԱ-՝ մեկ անգամ ևս նկարագրել փոխհատուցման գործիքները անհատ խորհրդակցությունների և համայնքային կենտրոնների հանդիպումների միջոցով: Բոլոր ԱԵԱ-ներին հնարավորություն տրվեց հարցեր տալ, բարձրացնել իրենց խնդիրները՝ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես օրինակ՝ փաստաբանների իրավունքը և այլն, և ևս մեկ անգամ հիշեցրեց, որ սեփականության օտարման հետ կապված ԱԵԱ-ների կողմից կատարվող բոլոր ծախսերը կվճարվեն այլ ակտիվների փոխհատուցումով:
3	Իրազեկման և վստահության մակարդակի բարձրացման և ցանկալի արդյունքների հասնելու նպատակով Ծրագրի թիմը պետք է խրախուսի ԱԵԱ՝ Ազդեցության Ենթարկվախ Անձանց առկա անհամաձայնությունների կամ բողոքների դեպքում կիրառել առկա ԲԿՄ-ն՝ Բողոքների Կարգավորման Մեխանիզմը:	ԱԵԱ-ները լրացուցիչ տեղեկացված էին և հիշեցրեցին բողոքների քննարկման մեխանիզմը, մասնավորապես, բողոքարկման համակարգողի առկայությունը, որն ապահովում է ԱԵԱ-ների մուտքը ԲԿՄ և ապահովում է, որ ԲԿՄ-ն կարող է բողոքարկել հողի կամ այլ ակտիվների փոխհատուցումներից ստացված ցանկացած որոշում, պրակտիկա կամ գործունեություն .
4	Բարելավել տուժած տարածքի բնութագրերի վերաբերյալ տվյալների բազայի կառուցվածքը՝ այն դարձնելով ավելի հարմար և համապարփակ տարբեր վերլուծությունների և համեմատությունների համար: Մասնավորապես, խորհուրդ ենք տալիս ավելացնել ԱՏՏ-ների թվաքանակն ըստ հողամասերի և խոցելի խմբերի առանձնացման համար:	Հավելված 9-ում ընդգրկված են խոցելի խմբի (աղքատ, ղեկավարվող միայնակ կանանց կամ տարեցների կողմից) և թվով ԱՏՏ-ների վերաբերյալ տեղեկատվություն:
5	Մենք խորհուրդ ենք տալիս ընդլայնել ներքին մշտադիտարկան հաշվետվությունների բովանդակությունը՝ ավելի շատ ուշադրություն դարձնելով իրականացման գործընթացների մանրամասներին:	Ներքին Մշտադիտարկման Հաշվետվությունները կառուցվածքային կերպով վերանայվել են՝ ներառելու ավելի մանրամասն և հասկանալի տեղեկատվություն ներգրավման գործընթացի վերաբերյալ, այդ

<p>Անհրաժեշտ է ներառել բողոքների բոլոր գործերը այդ զեկույցներում, ներկայացնելով դժգոհությունները ներկայացնելու կարգը:</p>	<p>թվում՝ դաշտային այցելություններ, ԲԿՄ-ների հետ խորհրդակցություններ, դժգոհություններ և այլն:</p>
---	---

2. Ազդեցության գնահատում

2.1 Սահմանում

15. Այս ՀՎԳԴ-ի կազմման համար ընդունված հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ փոխհատուցման բոլոր վճարումները և կենսակերպի վերականգնման աջակցությունը պետք է հիմնվի ազդակիր անձանց Ծրագրի ազդեցությունների մանրամասն ուսումնասիրման վրա: Նախնական ՀՎԳԴ-ի համար մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել 2015թ-ի մարտից մինչև 2015թ-ի ապրիլը: 2016թ-ի մայիսի 1-ից 20-ը և 2017թ-ի ապրիլի 1-20-ը լրացուցիչ ուսումնասիրություններ են կատարվել վերանայված ՎԳԴ-ի համար: Ծրագրի վերաբնակեցման ազդեցությունների չափը ճշգրիտ կերպով գնահատելու համար կատարվել են հետևյալ ուսումնասիրությունները.

1. **Չափագրման ուսումնասիրություն (ՉՈՒ)** – չափել հողերի ազդեցության ենթարկված տարածքները, ինչպես նաև վնասված գույքի քանակն ու տեսակը:
2. **Կորուստների գույքագրում** – որոշել և գնահատել հողերի և ձեռքբերման ենթակա գույքի բնութագրերը:
3. **Վնասված գույքի փոխհատուցման արժեքի գնահատումը** - որոշել կորցրած գույքի, եկամտի, կենսամակարդակի այլ աղբյուրների և ծախսերի փոխհատուցման գումարը ՎԳԴ-ի բյուջեն կազմելու համար:
4. **Մարդահամարի անցկացում** – որոշել ազդակիր տնային տնտեսությունների և նրանց աղաների ճշգրիտ քանակը, ներառելով որոշ տարրական սոցիալական բնութագրերը՝ սեռը, էթնիկ պատկանելիությունը, կրթությունը, կենսամակարդակի աղբյուրները:

2.2 Ուսումնասիրության մեթոդաբանությունը

16. Կալպատարու ընկերությունը վարձել է լիցենզավորված քարտեզագրող և չափագրող ընկերություն, ինչպես նաև լիցենզավորված գնահատող ընկերություն, որպես ենթակապալառուներ՝ չափելու և գնահատելու ցանկացած գույք, որը պետք է ձեռք բերվի: ՉՈՒ-ի և գույքագրման ծավալի մեջ մտնում է հետևյալ գույքերի կամ ակտիվների որոշումը, դասակարգումը, չափագրումը և գնահատումը, որոնք են՝ հողը (գյուղատնտեսական, բնակելի, արդյունաբերական և առևտրային նպատակներով կիրառվող տարածք), ներառյալ այս հողատարածքների վրա բարելավումները, շենքերը/շինությունները (բնակելի և բիզնես կառույցները, ներառյալ շենքերի կատեգորիան և շինությունների տեսակները), ԱԵԱ հողի տիրապետման իրավական կարգավիճակը, մշակաբույսերի տարածքը և տեսակը, ծառերի քանակը և տեսակը, բիզնեսի վրա ազդեցությունը (ազդեցության տեսակը և իրավական կարգավիճակը), զբաղվածության կորուստները, համայնքային/հանրային գույքերի քանակը, տեսակը և տարածքը:

Չափումները իրականացվել են, համաձայն No 283-Ն Որոշման Հավելված 1-ի պահանջների, ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի (ԱԿԿԿ) Նախագահի կողմից 2011թ-ի հոկտեմբերի 20-ին տրամադրված (անշարժ գույքի չափման (գրանցում) հրահանգ: Ազդակիր անձինք տեղանք այցելելուց մեկ օր առաջ հեռախոսով տեղեկացվում են ուսումնասիրության ամսաթվի և ժամանակի մասին: Այս գործընթացը երաշխավորում է, որ գույքագրման ընթացքը վերահսկվում է ԱԵԱ կողմից:

17. Որպես գույքագրման ուսումնասիրության արդյունք, **107** նկարագրության արձանագրություններ են ստորագրվել ԱԵԱ կողմից: Արձանագրության ստորագրման գործընթացը նախատեսված է ՀՀ օրենքով՝ երաշխավորելու, որ բոլոր ազդեցությունները պաշտոնապես ներկայացվել են արձանագրությունում, այնուհետև ստուգվել և հաստատվել են ԱԵԱ կողմից:

18. Ազդակիր տնային տնտեսությունների մարդահամարը իրականացվել է փորձառու հարցազրուցավարների կողմից: Բոլոր ազդակիր անձինք հարցվել են հարցաթերթերի դեմ առ դեմ հարցազրույցի միջոցով կամ հեռախոսով (հարցաթերթը տես Հավելված 1): Յուրաքանչյուր հարցաթերթ լրացնելու համար պահանջվել է 15-20 րոպե: Հավաքված տվյալները մշակվել են՝ օգտագործելով SPSS 22 վիճակագրական փաթեթը: **184** ազդակիր տնային տնտեսություններից ուսումնասիրվել են **169**-ը:

Ազդեցության ենթարկված 15 տնային տնտեսություններ չեն մասնակցել հետազոտությանը, քանի որ ազդակիր ընտանիքները մշտապես բնակվում են արտերկրում⁷:

2.3 Ազդեցությունը հողի վրա

2.3.1 Հողերի դասակարգումը, ըստ ՀՀ օրենքի

19. ՀՀ հողային օրենսգիրքը (մայիս 2001) դասակարգում է հողը հետևյալ ինը կատեգորիաների՝ (1) գյուղատնտեսական, (2) բնակավայրային/բնակելի, (3) արդյունաբերական, հանքավայրային և արտադրական (4) եներգետիկ, տրանսպորտային, կոմունիկացիոն, ճարտարագիտական ենթակառուցվածքի օբյեկտներ (5) հատուկ նպատակներով պաշտպանված հողատարածք, (6) հատուկ նշանակության, (7) անտառային, (8) ջրային և (9) պետական պահուստային հողատարածք: Նպատակային կարևորության յուրաքանչյուր հողատարածք, հիմնվելով իր օգտագործման տիպի վրա, դասակարգվում է ըստ իր ֆունկցիոնալ կարևորության կատեգորիայի: Ազդեցության ենթարկված հողերը խմբավորվում են հետևյալ երեք տիպերի՝ հիմնվելով սեփականության կարգավիճակի վրա.

- **Մասնավոր հողեր**՝ այն հողատարածքներն են, որոնք պատկանում են ֆիզիկական անձի կամ ընկերության, և այս իրավունքը գրանցված է Պետական Կադաստրում:
- **Համայնքային հողեր**՝ այն հողատարածքներն են, որոնք պատկանում են համայնքին և դրանցով զբաղվում են Տեղական հնքնակառավարման Մարմինները: Համայնքային հողերը կարող են լինել չօգտագործված, օգտագործված ընդհանուր նպատակներով, օրինակ որպես արոտավայր համայնքի անդամների կողմից՝ վարձով տրված անհատին/ընկերությանը, անօրինական (չգրանցված) օգտագործված տնային տնտեսության/ընկերության կողմից:
- **Պետական հողեր**՝ հողատարածքներ են, որոնք պատկանում են ՀՀ կառավարությանը: Պետական հողերը կարող են լինել չօգտագործված, օգտագործված հիմնական ճանապարհների, պետական օբյեկտների, զինվորական նպատակների համար և այլն: Որոշ պետական հողեր կարող են տրվել վարձով կամ անօրինական (չգրանցված) ձևով օգտագործվել տնային տնտեսության/ընկերության կողմից:

2.3.2 Հողի կորուստ

20. Ընդհանուր առմամբ կան 276 հողատարածքներ 70,637.30 մ² մակերեսով, որոնցից 3,735 մ² գտնվում է Եղեգնաձորում: Մնացած 66,902.30 մ² գտնվում է Վայոց Ձոր և Սյունիքի մարզերի 11 գյուղերում: Ստորև ներկայացված աղյուսակներ 1-ում և 2-ում նշված են հողի ազդեցության մանրամասները ազդակիր համայնքների համար:

21. 4-րդ հատվածի Ազդակիր հողատարածքները մտնում են հետևյալ երեք խմբերի մեջ՝ հիմնվելով սեփականության կարգավիճակի վրա.

1. **Մասնավոր հողատարածքներ**՝ ընդհանուր առմամբ 90 հողատարածքներ պատկանում են անձանց, ովքեր ունեն իրավունք ազդակիր հողատարածքների վրա: Բոլոր մասնավոր հողերը գյուղատնտեսական և բնակավայրային հողեր են, որոնք սեփականատերերի կողմից օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Նրանցից մեծ մասն օգտագործում են մշակաբույսեր և մրգատու ծառեր աճեցնելու նպատակով:
2. **Համայնքային հողատարածքներ**՝ հետազոտման միջոցով հայտնաբերվել են 167 համայնքային հողեր:

⁷ Սեփականատերերը տեղեկացվել են բարեկամների կամ հարևանների միջոցով, երբ հնարավոր է եղել: Ավելին, լիազորագրերի հայերեն և ռուսերեն օրինակները ուղարկվել են Հայաստանում գտնվող համասեփականատերերին և տեղական ինքնակառավարման մարմիններին, ԱԵԱ-երին օգնելու նպատակով: Եթե սեփականատերերին այդպես էլ հնարավոր չլինի գտնել իրականացման ընթացքում կամ եթե նրանք լիազորագիր չուղարկեն լիազորված անձանց, գույքը կօտարվի դատարանի միջոցով և ԲԷՑ-ը կպահի փոխհատուցման միջոցները ավանդային հաշվի վրա:

3. **Պետական հողատարածքներ`** Այս հատվածի հենարանները կառուցվելու են 2 պետական հողակտորի վրա:
4. **Առանց գրանցման հողատարածքներ` 17** ազդակիր հողատարածքներ գրանցված չեն պետական կադաստրում: Հողամասերի պոտենցիալ սեփականատերերը նույնականացվել են և ԱԵԱ-երը կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատեր, հենց որ օրինականացման գործընթացն ավարտվի և վերջիններիս գույքային իրավունքները կգրանցվեն անշարժ գույքի կադաստրում:

Օրինականացման գործընթացի համար բոլոր ծախսերը կփոխհատուցվեն ծրագրի կողմից: Փոխհատուցումը կկատարվի միայն այն դեպքում, երբ ԱԵԱ-երն օրինականացնեն գույքի նկատմամբ իրենց իրավունքը: Եթե հողը օրինականացված չէ, բայց օգտագործվումը անօրինական է, տվյալ ԱԵԱ-երին կցուցաբերվի օժանդակություն (մանրամասների համար տես` Գլուխ 7 իրավասության և իրավունքների Շրջանակ):

Աղյուսակ 1 Ազդեցության ենթարկված հողերը, ըստ համայնքների⁸

n/ n	Համայնք	Մասնավոր հող		Համայնքային հող		Պետական հող		Առանց գրանցման հող		Ընդամենը	
		Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)
(A) Զաղաքային համայնքներ											
1	Եղեգնաձոր	3	843	6	1,471	0	0	6	1,421	15	3,735
	Ընդամենը	3	843	6	1,471	0	0	6	1,421	15	3,735
(B) Գյուղական համայնքներ											
1	Ագարակաձոր	16	3,730	8	1,280	0	0	3	397.30	27	5,407.30
2	Մալիշկա	17	3,441	14	3,910	0	0	1	273	32	7,624
3	Արին	2	567	30	7,916	1	324	1	128	34	8,935
4	Գևորգավազ	3	774	14	4,231	0	0	0	0	17	5,005
5	Սարավան	3	1,206	31	9,004	0	0	0	0	34	10,210
6	Գորայք	11	2,900	21	5,478	0	0	1	324	33	8,702
7	Ծղուկ	5	673	18	4,442	1	324	0	0	24	5,439
8	Սառնակունք	7	1,716	3	730	0	0	1	241	11	2,687
9	Սպանդարյան	5	1,153	3	439	0	0	1	241	9	1,833
10	Շաղատ	0	0	1	604	0	0	0	0	1	604
11	Անգեղակոթ	18	4,952	18	4,697	0	0	3	807	39	10,156
	Ընդամենը	87	21,112	161	42,731	2	648	11	2,411	261	66,902.30
	Ընդհանուրը	90	22,845	167	45,925	2	648	17	3,832	276	70,637.30

22. Բոլոր **90** մասնավոր հողատարածքներն օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով, անկախ հողի կատեգորիայից՝ գյուղատնտեսական թե՛ բնակավայրային: Բոլոր **167** համայնքային հողատարածքները չեն օգտագործվում: **1** համայնքային չօգտագործվող հող նախատեսված է անտառի համար⁹: **7** համայնքային չօգտագործվող հողատարածքներ արդյունաբերական նշանակության են: Կան **2** պետական հողատարածքներ: Հողատարածքների բոլոր կատեգորիաները, բացառությամբ

⁸⁸ Կադաստրային քարտեզների սխալները շտկելուց հետո նոր հողատարածքներ են ավելացել (վկ. Հավելված 9). Միայն կադաստրային քարտեզները չէին վերաբերում սեփականաշնորհման վկայականներին: Շտկումներից հետո կադաստրային քարտեզները արտացոլեցին այս հողատարածքների իրական պլանը:

⁹Չնայած այն փաստին, որ հողատարածքի նշանակությունը «անտառային» է, այս տարածքում ծառեր չկան, և ծառահատումներ չեն սպասվում: Հողատարածքի նշանակությունը կփոխվի էներգետիկ նշանակության:

պետական հողերի, կփոխհատուցվեն¹⁰: Հողի ազդեցության տվյալները ամփոփվում են հետևյալ աղյուսակներ 1-ում և 2-ում.

Աղյուսակ 2. Ազդեցության ենթարկված հողերը, ըստ հողի կատեգորիայի և հողի սեփականության/օգտագործման կարգավիճակի

Հողի կատեգորիա		Գյուղատնտեսական		Բնակավայրային		Անտառ		Արդյունաբերական, հանքային և արտադրական		Ընդամենը	
		Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)
Մասնավոր	Օգտագործվող	86	21,059	2	456	0	0	0	0	88	21,515
	Չօգտագործվող	2	440							2	440
Համայնքային	Վարձակալված										
	Չօգտագործվող	157	41,069	2	973	1	361	7	1,799	167	44,202
Պետական	Օգտագործվող										
	Չօգտագործվող	2	648	0	0	0	0	0	0	2	648
Առանց գրանցման	Օգտագործվող	6	1,710	0	0	0	0	0	0	6	1,710
	Չօգտագործվող	11	2,122.30	0	0	0	0	0	0	11	2,122.30
Ընդամենը		264	67,048.30	4	1,429	1	361	7	1,799	276	70,637.30

2.2 Ազդեցությունը մշակաբույսերի վրա

23. Այս հատվածում կա 35 ազդակիր հողակտոր, որտեղ ցանված են 6 տեսակի մշակաբույսեր: Այս հատվածում կա 9,659 մ² հողատարածք: Ընդհանուր առմամբ, մշակաբույսի կորուստը տարեկան կկազմի 4,464.30 կգ (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ազդեցության ենթարկված մշակաբույսեր

Մշակաբույսի տեսակը	Հողատարածքների քանակը	Տարեկան արտադրողականությունը կգ/մ ²	Ազդեցության ենթարկված մակերես (մ ²)	Ընդհանուր կորուստը (կգ)
	1	2	3	4
Ցորեն	12	0.30	3,975	1,192.5
Առվույտ/յոնջա	7	0.73	1,970	1,438.1
Բազմամյա մշակաբույս որպես անասնակեր	1	0.73	82	59.9
Վարսակ	1	0.30	273	81.9
Կորնզան	8	0.70	1,789	1,252.3

¹⁰Մասնավոր հողերի համար փոխհատուցումը կլինի ՎԳՊ-ի բյուջեից, իսկ համայնքային հողերի փոխհատուցումը կլինի ԲԷՑ-ի բյուջեից:

Հաճար	6	0.28	1,570	439.6
Ընդհանուրը	35		9,659	4,464.30

2.3 Ազդեցությունը ծառերի վրա

24. Այս հատվածում կա ազդեցության ենթարկված **11** տիպի հասուն բերքատու, հասուն ոչ-բերքատու և երեք տնկի: Ընդհանուր առմամբ, այս հատվածում կա **228** ազդակիր ծառ (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ազդեցության ենթարկված ծառեր

Ծառատեսակ	Հասուն բերքատու	Հասուն ոչ բերքատու	Տնկիներ	Ընդամենը
	No	No	No	No
Դեղձենի	6	5	0	11
Խաղողի	171	0	0	171
Խնձորենի	0	6	1	7
Ծիրանենի	20	0	1	21
Կարագանա	1	0	0	1
Մապրենի	5	0	0	5
Լշենի	2	0	0	2
Սերկեֆիլ	1	2	0	3
Սզնի (ալոճենի)	4	0	0	4
Տանձենի	0	0	1	1
Փշարմավ	2	0	0	2
Ընդամենը	212	13	3	228

2.4 Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների մարդահամարը և ազդեցությունը նրանց կենսամակարդակի վրա

2.4.1 Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը

25. Մարդահամարն անցկացվել է **184** ազդակիր SS-ից **169-ի** ընտանիքում (**855** անդամ): ԱԵԱ տղամարդկանց քանակը ավել է, քան ԱԵԱ կանանց քանակը (**445** տղամարդ (**52%**) և **410** կին (**48%**): Բոլոր ԱԵԱ հայեր են:

26. Հարցվածների տարիքային բաշխվածությունը ցույց է տալիս, որ ազդակիր բնակչության **77.3** %-ը 50 տարեկան կամ ավելի երիտասարդ են: Միայն **8.8%** է բարձր 65 տարեկանից:

Աղյուսակ 5. Տնային տնտեսությունների գլխավորների և անդամների տարիքները

Տարիք	Ազդակիր SS գլխավոր		SS անդամներ		Ընդամենը	
	No	%	No	%	No	%
0-17	0	0.0	220	32.1	220	25.7
18-35	12	7.1	239	34.8	251	29.4
36-50	56	33.1	134	19.5	190	22.2
51-64	52	30.8	67	9.8	119	13.9

65+	49	29.0	26	3.8	75	8.8
Ընդամենը	169	100.0	686	100.0	855	100.0

27. Սոցիալ-տնտեսական հետազոտությունը բացահայտեց ՏՏ-երում ոչ ֆորմալ, սուբյեկտիվորեն որոշվող գլխավոր անդամներին: Աղյուսակ 6-ը ցույց է տալիս, որ ՏՏ գլխավորների ավելի քան 91%-ը ունեն նվազագույնը միջնակարգ կրթամակարդակ: Գրագիտության բարձր մակարդակ է գրանցված նաև ընտանիքի անդամների մեջ (նրանցից 62.2%-ը ունեն նվազագույնը միջնակարգ կրթություն): Տնային տնտեսությունների գլխավորների մոտ 11.2%-ը և ընտանիքի այլ անդամների 7.7%-ը ունեն համալսարանական կրթություն:

Աղյուսակ 6 Ազդակիր ՏՏ գլխավորների և անդամների կրթամակարդակը

Կրթություն	ՏՏ գլխավորներ		ՏՏ անդամներ		Ընդամենը	
	No	%	No	%	No	%
Ոչ մի ֆորմալ կրթություն կամ տարրականից ցածր	0	0.0	53	7.7	53	6.2
Տարրական կրթություն	6	3.6	61	8.9	67	7.8
Միջնակարգ	9	5.3	64	9.3	73	8.5
Ավագ դպրոց	91	53.8	309	45.0	400	46.8
Հատուկ մասնագիտացված	44	26				
Բարձրագույն (բակալավր կամ մագիստրոս)	19	11.2	53	7.7	72	8.4
Կիրառելի չէ (մինչև 6 տարեկանը)	0	0.0	81	11.8	81	9.5
Ընդամենը	169	100	686	100	855	100

28. Այս Հատվածում ՏՏ գլխավորների ավելի քան մեկ երրորդը (35.5%) աշխատում են՝ համեմատած միայն 14.7% ՏՏ այլ անդամների հետ: Սակայն, ՏՏ գլխավորների 24.3%-ը և ՏՏ անդամների 9.8%-ը չեն աշխատում և աշխատանք են փնտրում (Աղյուսակ 7):

29. ՏՏ գլխավորների 33.7%-ը թոշակառու են՝ համեմատած 5.0% ՏՏ այլ անդամների հետ: Սա ավանդական հայկական հասարակության ցուցանիշ է, որտեղ ՏՏ ընտանիքի ամենատարիքով անդամը, սովորաբար անկախ կրթական մակարդակից և զբաղվածության կարգավիճակից, դառնում է ՏՏ գլխավոր: Ազդակիր ՏՏ-ների զբաղվածության տվյալները ներկայացված են 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7. Ազդակիր ՏՏ գլխավորների և անդամների աշխատանքային/զբաղվածության կարգավիճակը

Զբաղվածություն		ՏՏ գլխավոր		ՏՏ անդամ		Ընդհանուր ՏՏ անդամներ	
		N	%	N	%	N	%
1	Աշխատող	60	35.5	101	14.7	161	18.8
2	Թոշակառու	57	33.7	34	5.0	91	10.6
3	Ուսանող (ներառյալ դպրոցական աշակերտները)	3	1.8	197	28.7	200	23.4
4	Չաշխատող և աշխատանք չփնտրող	8	4.7	183	26.7	191	22.3
5	Չաշխատող և աշխատանք փնտրող	41	24.3	67	9.8	108	12.6
6	Չինձառայող	0	0.0	10	1.5	10	1.2
7	Կիրառելի չէ (մինչև 6 տարեկանը և այլ հատուկ դեպքեր)	0	0.0	94	13.7	94	11.0
	Ընդամենը	169	100	686	100	855	100

30. Ստորև ներկայացված 8.1 և 8.2 աղյուսակները ցույց են տալիս ՏՏ տարեկան եկամտի ինքնահաշվետվությունը (ըստ եկամտային խմբերի) և տարեկան եկամտի բաշխվածությունն ըստ եկամտի աղբյուրների:

Աղյուսակ 8.1. Ազդակիր ՏՏ ներկայացրած տարեկան եկամուտը

Ազդակիր ՏՏ տարեկան եկամուտը (ՀՀ դրամ)	N	%
0 - 350,000	0	0
350,001 - 700,000	11	6.7
700,001 - 1,000,000	15	9.1
1,000,001 - 1,350,000	23	13.9
1,350,001 - 1,700,000	18	10.9
1,700,001 - 2,000,000	31	18.8
2,000,001 - 3,000,000	43	26.1
3,000,001 և ավելի	24	14.5
Ընդամենը պատասխաններ	165	100.0
Հրաժարումներ *	4	
Ընդամենը	169	

* Չորս ՏՏ տեղեկություն չեն տրամանդրել իրենց տարեկան եկամուտների մասին:

Աղյուսակ 8.2. ՏՏ կողմից ներկայացված տարեկան եկամուտը, ըստ եկամտի աղբյուրի

Եկամտի աղբյուր	Հարցված ՏՏ (N)	% ընդամենը	Տարեկան եկամուտ (ՀՀ դրամ)	% ընդամենը եկամտի
Գյուղատնտեսական	61	37.0	101,126,142	29.0
Անասնապահություն	49	29.7	75,104,651	21.5
Աշխատավարձ	122	73.9	48,901,240	14.0
Ինքնագբաղվածություն	62	37.6	43,002,030	12.3
Ձեռնարկատիրություն	85	51.5	38,959,536	11.2
Կենսաթոշակ	47	28.5	15,651,365	4.5
Թոշակ	25	15.2	10,072,198	2.9
Հաշմանդամության նպաստ	19	11.5	9,151,751	2.6
Աղքատության ընտանեկան նպաստ	5	3.0	6,051,012	1.7
Այլ տիպի նպաստներ	2	1.2	1,080,000	0.3
Աշխատանք արտերկրում	0	0.0	0	0.0
Եկամտի այլ աղբյուրներ	0	0.0	0	0.0
Ընդամենը պատասխաններ	165		349,099,925	100.0
Հրաժարումներ	4			
Ընդամենը	169			

31. Հարցմանը մասնակցած ՏՏ-երից 61-ը (37%) նշել են գյուղատնտեսությունը (Մրբերի և մշակաբույսերի աճեցում) որպես Հատված 4-ում ՏՏ-երի եկամտի հիմնական աղբյուր՝ (29.0%), որին հաջորդում է անասնապահությունը (21.5%): Աշխատավարձը (14.0%) զբաղեցնում է եկամտի աղյուսակի 3-րդ հորիզոնականը. Ձեռնարկատիրական գործունեությունը՝ 11.2% զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը ինքնագբաղվածությունից հետո՝ 12.3%:

2.4.2 Ազդեցությունն աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա

32. Ծրագիրը նախատեսում է լրացուցիչ աջակցություն խոցելի խմբերի համար, որոնք սահմանվում են որպես աղքատ, միայնակ կին կամ տարեց SS գլխավոր ունեցող տնային տնտեսություններ: Ըստ ՎԶԸ-ի, հետևյալ ազդակիր տնային տնտեսությունները համարվում են խոցելի.

- Անապահով SS, որոնք գրանցված են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության (ԱՍՀՆ) Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
- ՎԶԸ-ում էլ է նշվում, որ եթե նկարագրությունների մշակման ժամանակ ԲԷՑ-ի խորհրդատու ընկերությունները գտնում են, որ ազդակիր SS-ն աղքատ է և դեռ ընգրկված չէ Ընտանեկան Նպաստների Համակարգում, ապա ԲԷՑ-ը պետք է տեղեկացնի ՀՀ ԱՍՀՆ-ին և տվյալ տարածքում սոցիալական ծառայություններ մատուցող մարմիններին, որպեսզի նշված SS-ներին ընգրկի Ընտանեկան Նպաստների Համակարգում, ըստ օրենքով սահմանված կարգի: Այս SS-ները կստանան վերականգնման համար դրամական նպաստ միայն Ընտանեկան Նպաստների Համակարգում գրանցվելուց հետո:
- Այրի կանանց կամ կերակրողներին կորցրած կանանց կողմից ղեկավարվող տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա:
- Տարիքային թոշակառուների (տարեցների) կողմից ղեկավարվող տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա:

33. Այս սահմանումներին հետևելով, հարցման ժամանակ հայտնաբերվել են 27 խոցելի SS այս Հատվածում (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Ազդակիր խոցելի SS, ըստ խոցելիության կարգավիճակի

Vulnerability category	AH	
A. Աղքատ SS	16	AH
B. Կանանց գլխավորությամբ SS	2	
C. Տարեցների գլխավորությամբ SS	8	
D. Dual vulnerability (poor and women-headed)	1	
Total	27	
A. Poor households	16	
B. Women-headed	2	
C. Elderly-headed	8	
D. Կրկնակի խոցելիությամբ SS (աղքատ և կանանց գլխավորությամբ)	1	
ԸՆդամենը	27	

34. Պահանջներին հետևելու համար աղքատության վերլուծություն է իրականացվել՝ հիմնվելով SS կողմից ներկայացված եկամուտների վրա¹¹ (մանրամասները ներկայացված են Աղյուսակ 10-ում): Այս

¹¹ Գիրառվել է Ազգային Վիճակագրական Ծառայության մեթոդաբանություն, ըստ որի աղքատ են համարվում այն ընտանիքները, որտեղ յուրաքանչյուր չափահաս մարդու վրա կատարված ծախսերը ցածր են վերին ընդհանուր աղքատության սահմանից, մինչդեռ ծայրահեղ աղքատ են համարվում այն ընտանիքները, որտեղ չափահաս մարդու վրա կատարված ծախսերը ցածր են պարենային աղքատության շեմից: 2012թ-ին ընդհանուր առմամբ և վերին, և ստորին, և ծայրահեղ աղքատ շեմի ընտանիքում յուրաքանչյուր չափահաս մարդու համար ամեն ամիս գնահատվում է համապատասխանաբար 37.044 ՀՀ դրամ, 30.547 ՀՀ դրամ և 21.732 ՀՀ դրամ: <http://armstat.am/file/doc/99471658.pdf>

Հատվածում **62** SS (հարցված SS-երի **37.6%**-ը) ներկայացվել են որպես պաշտոնապես սահմանված աղքատության գծից ցածր (հիմնվելով SS կողմից ներկայացված եկամուտների տվյալների վրա): Այս **62** աղքատ SS-ներից **27**-ը որոշվել են որպես խոցելի SS-ներ, որոնք գրանցված են ԸՆՀ-ում SS և կրանց համում է խոցելիության նպաստ: Մնացած **35** SS-երի ցանկը ներկայացված է ԲԵՑ-ին, և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը լրացուցիչ այցելություններ կկազմակերպի համայնքներ և կգնահատի արդյոք այս **35** SS-ներից որոշը իրավասու են ստանալ աղքատության նպաստ և գրանցվել Ընտանեկան Նպաստների Համակարգում: Եթե այո, ապա SS-ներին կտրամադրվի լրացուցիչ խորհրդատվություն, և աջակցություն իրենց SS-ն Համակարգում գրանցելու համար: Հենց որ SS-ն գրանցվի ԸՆՀ-ում և իրավասու լինի ԸՆՀ-ում համապատասխան փոխհատուցում ստանալու համար, տվյալ SS-ն իրավունք կունենա ստանալ վերականգնման նպաստ: ԲԵՑ-ը կապահովի, որ գործընթացը ավարտվի մինչև ՀԿԳԴ-ի իրականացումը:

Աղյուսակ 10. Ազդակիր SS-ները, ըստ աղքատության կարգավիճակի՝ հիմնվելով եկամտի ինքնահաշվետվության վրա

Աղքատության կարգավիճակը	ԱՍՏ (N)	%
<i>Աղքատության շեմից բարձր</i>		
Ոչ աղքատ ԱՍՏ (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու համար > 37,044 ՀՀ դրամ)	103	62.4
<i>Աղքատության շեմից ցածր</i>		
Աղքատ ԱՍՏ (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու համար 30,547 - 37,044 ՀՀ դրամ)	23	13.9
Շատ աղքատ ԱՍՏ (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու համար 21,732 - 30,547 AMD)	16	9.7
Ծայրահեղ աղքատ ԱՍՏ (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու համար ≤ 21,732 AMD)	23	13.9
Ընդհանուրը (աղքատության շեմից ցածր)	62	37.6
ԸՆդամենը հարցման մասնակիցները	165	100
Հրաժարումներ	4	
ԸՆԴԱՄԵՆԸ	169	
<i>Ծանուցում՝ Տվյալների աղբյուրը այս ՎԳԴ-ի համար իրականացված մարդահամարն է</i>		

2.4.3 Եկամտի վրա զգալի ազդեցություն կրող ազդակիր SS-ներ

35. Այս հատվածում **8** հողակտոր, որտեղ կան որոշ մշակաբույսեր և ծառեր, ընկնում են եկամտի աղբյուր հանդիսացող գույքի զգալի ազդեցություն ունեցող սահմանման ներքո (10% կամ ավել տարածքի կրճատում): Չգալի ազդեցության ենթարկված այս հողերից **3**-ը պատկանում են խոցելի տնային տնտեսությունների: Մանրամասները ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Խիստ ազդեցություն եկամուտ բերող ունեցվածքի վրա

n/n	Համայնք	Հողի տեսակը	Մշակաբույսի/ծառի տեսակը	Ընդհանուր ազդակիր տարածքը (մ2)	Ընդհանուր տարածքը (m2)	%	SS (N)	խոցելիության կարգավիճակը
1	Ագարակա ձոր	10-004-0120-0008	Ցորեն	324	3,200	10.03	1	
2	Ագարակա ձոր	10-004-0116-0004	Ցորեն	416	3,600	11.56	2	1 poor

3	Ազարակա ձոր	10-004-0129-0017	Յոնջա	403	3,700	10.89	1	
4	Մալիշկա	10-032-0221-0449	Յոնջա	315	2,480	12.70	4	1 poor
5	Մալիշկա	10-032-0225-0078	Կորնգան	179	1360	13	1	1 poor
6	Մալիշկա	10-032-0251-0008	Ծիրանենի (հասուն բերքատու) Ծիրանենի (տնկի) Դեղձ (հասուն բերքատու)	361	2770	13.03	1	
7	Մալիշկա	10-032-0254-0008	Խաղող (հասուն բերքատու) Դեղձենի (հասուն ոչ բերքատու) Տանձենի (տնկի) Սզնի (հասուն բերքատու) Փշարմավ (հասուն բերքատու) Մասրենի (հասուն բերքատու) Կարագանա (հասուն բերքատու)	218	1,250	17.44	1	
8	Մալիշկա	10-032-0221-0465	Ծիրանենի	113	497	22.74	1	
	Ընդամենը			2,329	18,857		11	3

36. Եղեգնածոր-Սպանդարյան հատվածում չի ազդում շենքերը, շինությունները, բիզնեսները և զբաղվածության ցուցիչները: Այնուամենայնիվ, այս հատվածում ազդեցություն կա մշակաբույսերի և ծառերի վրա: Հիմնական ազդեցությունը մասնավոր, համայնքային և պետական հողերի վրա է, ինչպես նաև որոշ տարեկան մշակաբույսերի, տնկիների և հասուն ծառերի (մրգատու և ոչ մրգատու): Ազդակիր SS-ների և ազդակիր անձանց տարբեր կատեգորիաների վերաբերյալ տվյալները առանց կրկնակի հաշվարկի բերված են Աղյուսակ 12-ում: Ընդհանուր առմամբ, Հատված 4-ը ազդեցություն է թողնում **184** SS-ի հողերի վրա: **184** ազդակիր ընտանիքներից **12**-ը կունենան զգալի ազդեցություն իրենց գյուղատնտեսական եկամուտ ապահովող գույքի վրա, **3** SS-ներ խոցելի են:

Աղյուսակ 12. Ազդեցությունների ամփոփում (հողերի մշտական ձեռքբերում)

Ազդեցության տեսակը	Հող (N)	Մակերես (մ2)/ծառերի քանակը	ԱՏՏ (N)
(A) Ազդակիր հող			
Մասնավոր հող (օգտագործվող)	88	21,515	184
Մասնավոր հող (չօգտագործվող)	2	440	
Համայնքային հող	167	44,202	-

Ազդեցության տեսակը	Հոդ (N)	Մակերես (մ ²)/ծառերի քանակը	ԱՏՏ (N)
(չօգտագործվող)			
Պետական հող (բողոքը չօգտագործվող)	2	648	-
Առանց գրանցման հող (օգտագործվող)	6	1,710	-
Առանց գրանցման հող (չօգտագործվող)	11	2,122.30	
Ընդամենը (A)	276	70,637.30	184
(B) ազդեցության ենթարկված մշակաբույսեր	35	9,659	35 (ներառված են A-ում)
(C) ազդեցության ենթարկված ծառեր	11	228 ծառեր	20 (ներառված են A-ում)
(D) զգալի ազդակիր ՏՏ	12	-	12 -ը ներառված են A-ում, որից 9-ը ներառված են նաև B-ում և 3-ը ներառված են նաև C-ում
(F) Խոցելի ՏՏ	27	-	27-ը, ներառված են A-ում, որից 3-ը ներառված չեն նաև D-ում
Ընդամենը (A+B+C+D+F)	-	-	184

3. Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում

3.1 Նկարագրություն

37. Համաձայն Համաշխարհային Բանկի ԳՁ 4.12 ուղեցույցի և ծրագրի ՎԵՇ-ի, ԱԵԱ պետք է լիովին խորհրդատվություն տրամադրվի և հնարավորություն տրվի մասնակցելու ՎԳԴ-ն պատրաստելու և իրականացնելու բոլոր փուլերին: Նույն սկզբունքով, մասնակցության և խորհրդատվության գործընթացը պետք է ներառի խորհրդատվությունը ԱԵԱ, համայնքների, տեղական լիազոր մարմինների, ինչպես նաև ընդհանուր հանրության հետ, ներառյալ Հասարակական կազմակերպությունները (ՀԿ): ԲԵՑ-ը պետք է երաշխավորի, որ ԱԵԱ և ազդակիր համայնքները ստանան ամբողջ համապատասխան տեղեկատվությունը ժամանակին, և առաջարկվեն հնարավորություններ մասնակցելու վերաբնակեցման գործողությունների պլանավորմանը, իրականացմանը և մշտադիտարկմանը:

38. Այս գլխում նկարագրվում է ազդակիր հանրության և շահառուների խորհրդատվության/մասնակցության գործընթացը վերաբնակեցման պլանավորման, իրականացման և մոնիթորինգի մեջ, ինչպես նաև ԱԵԱ և շահառուներին ՀՎԳԴ-ի հետ կապված տեղեկատվության տարածման պլանը, ներառյալ կորցրած գույքերի փոխհատուցման, վերաբնակեցմանն աջակցելու և բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ տեղեկատվությունը: Հատուկ ենթագլխում ազդակիր համայնքներում հանրային քննարկման հանդիպումների վերաբերյալ մանրամասներ են ներկայացված՝ ներառված արտահայտված տեսակետների ամփոփումը, և ինչպես են այս տեսակետները հաշվի առնվել վերաբնակեցման պլանը կազմելու ժամանակ:

3.2 Հանրային քննարկումներ և հրապարակման պլան

39. Ըստ ծրագրի ՎԵՇ-ի, որպես ՀՎԳԴ-ի կազմման առաջին քայլերից մեկը, պատրաստվել է Հանրային քննարկման և Հրապարակման Պլան (ՀԶՀՊ): ՀԶՀՊ-ն մշակվել է 2014թ-ի օգոստոսին և նպատակ է ունեցել զարգացնել կիրառելի գործընթացները, մեխանիզմները և ՀԶ սկզբունքներն ու տեղեկատվության հրապարակումը: ՀԶՀՊ-ի պատճեն կցված է հաշվետվությանը (Հավելված 2):

3.3 Հանրային քննարկում

40. ՀՎԳԴ-ի կազմման ընթացքում ԲԵՑ-ը Կապալառուի միջոցով իրականացրել է լայնածավալ հանրային քննարկումներ (տես ստորև ներկայացված աղյուսակը) պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների միջոցով ԱԵԱ և ՏԻՄ-ի ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև գրավոր ծանուցումներ է ներկայացրել հողի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների վերաբերյալ՝ սահմանված ՀՀ օրենքով:

41. 2017 թվականի ապրիլին լրացուցիչ քննարկումներ և տեղեկատվության հրապարակում է կազմակերպվել այն ԱԵԱ-երի համար, որոնք ընդգրկվել են վերանայված ՀՎԳԴ (2017-ի մայիս) մեջ: Զանի որ Նոր հողերն ընդամենը 12 են, որոնք տեղայնված են 5 տարբեր համայնքներում, ԱԵԱ-երի հետ խորհրդատվությունն անց է կացվել հեռախոսով և ուսումնասիրության աշխատանքների ժամանակ, ինչպես նաև պաշտոնական նամակներով ԱԵԱ-երին են ուղարկվել ՀՎԳԴ տեղեկատվական գրքուկը՝ հայերեն լեզվով, և գերակա շահի ու գույքագրման վերաբերյալ մանրամասները:

3.3.1 ՀՎԳԴ-ի կազմման ընթացքում պաշտոնական հանրային քննարկումներ

42. ԲԵՑ-ն իրականացրել է հանրային քննարկումներ Հատված 4-ի ԱԵԱ հետ ՀՎԳԴ-ի կազմման, իրականացման և փոխհատուցման հարցերի շուրջ, ներառյալ ՀՀ Կառավարության Նախնական Ուսումնասիրության վերաբերյալ Որոշումը, և սկսել է գույքագրումը: Հանրային քննարկումները (ՀԶ) կազմակերպվել են 2015թ-ի մարտի 10-ից մինչև ապրիլի 29-ը այն ԱԵԱ համար, ովքեր ներառված էին Նախնական ՎԳԴ-ի մեջ և 2016թ-ի ապրիլի 10-ից մինչև 20-ը այն ԱԵԱ համար, որոնք ունեին

կադաստրային քարտեզների հետ կապված խնդիրներ: ՀՀ իրականացվել են ՏԻՄ-ի գրասենյակներում, որոնք հասանելի են եղել ԱԵԱ համար: Բոլոր ԱԵԱ ՀՀ-ից մեկ շաբաթ առաջ հեռախոսով տեղեկացվել են ՀՀ-ի տեղի և ժամանակի վերաբերյալ: Խորհրդատուները մեկ օր առաջ հիշեցրել են ԱԵԱ ՀՀ-ի վերաբերյալ: Համապատասխան հայտարարությունը ՀՀ-ից մեկ շաբաթ առաջ էլ. փոստով ուղարկվել է տեղական լիազոր մարմիններին և յուրաքանչյուր համայնքում փակցվել է հայտարարությունների տախտակի վրա: Տեղական ՀԿ-ները տեղեկացվել են էլ. փոստով և ՀԿ-ի ցանցերով:

43. ՀՀ-ները իրականացվել են ԲԵՏ-ի կողմից Կապալառուի սոցիալական հարցերով մասնագետի հետ միասին:

44. Ընդհանուր առմամբ 148 մարդ է մասնակցել ՀՀ-ը, որոնցից 45-ը կանայք էին: Ստորև բերված աղյուսակում մանրամասն ներկայացված է տեղի, ժամանակի և մասնակիցների քանակի վերաբերյալ: Հանդիպման արձանագրությունները և մասնակիցների ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

Աղյուսակ 13 Յուրաքանչյուր համայնքում ծրագրի ազդակիր անձանց քանակը, որոնք մասնակցել են հանրային քննարկումներին

N	Համայնք	Օր	Վայր	Մասնակիցների քանակը			Ազդակիր մասնավոր հոդերի քանակը	Ազդակիր հոդերի քանակը, որոնց սեփականատերերը մասնակցել են ՀՀ-ներին
				Կին	Տղամարդ	Ընդհանուր		
1	Եղեգնաձոր	Ապրիլ 14, 2015թ.	համայնքապետարան	5	7	12	10	5
2	Ագարակաձոր	Ապրիլ 14, 2015թ.	համայնքապետարան	6	10	16	22	11
3	Մալիշկա	Ապրիլ 14, 2015թ.	համայնքապետարան	5	13	18	25	12
4	Արին	Ապրիլ 14, 2015թ.	համայնքապետարան	5	7	12	4	2
5	Գնդեվազ	Մարտի 10, 2015թ.	համայնքապետարան	2	9	11	4	4
6	Սարավան	Մարտի 10, 2015թ.	համայնքապետարան	2	5	7	3	2
7	Գորայք	Ապրիլ 29, 2015թ.	համայնքապետարան	3	10	13	13	5
8	Ծղուկ	Ապրիլ 29, 2015թ.	համայնքապետարան	7	10	17	23	12
9	Սառնակունք	Մարտ 10, 2015թ.	համայնքապետարան	4	7	11	11	6
10	Սպանդարյան	Ապրիլ 28, 2015թ.	համայնքապետարան	2	10	12	31	7
11	Անգեղակոթ	Ապրիլ 28, 2015թ.	համայնքապետարան	4	15	19	47	13
	Ընդամենը	-	-	45	103	148	193	79

45. Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ ներկայացվել են վերաբնակեցման գործընթացի հիմնական փուլերը, ներառյալ ծրագրի հետ կապված տեղեկատվությունը, ժամանակացույցը, փոխհատուցման իրավունքները, գնահատման մեթոդաբանությունը և ձեռքբերման գործընթացը: Ի լրումն, տարածվել են ԲԵՏ-ի և Խորհրդատուի մանրամասն կոնտակտային տվյալները: Ծրագրի տեղեկատվական գրքույկը, որը տրամադրվել է մասնակիցներին, կցված է Հանրային քննարկման հրապարակման պլանում (ՀԶՀԴ) Հավելված 2-ում: Հիմնվելով ԲԵՏ-ի կողմից հանդիպումների ժամանակ ստացած տվյալների վրա՝ ԱԵԱ, որոնք մասնակցել են, գոհ են եղել քննարկումների գործընթացից:

Հիմնական հարցերը, խնդիրները և մտահոգությունները, համապատասխան պատասխաններով և պլանավորված/նախաձեռնած գործողություններով, ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

Աղյուսակ 14 Հարցեր ու մտահոգություններ, որոնք բարձրացվել են ՀՔ-ի ժամանակ և պատասխաններ/գործողություններ, որոնք պետք է նախաձեռնվեն

N	Հարց/մտահոգություն	Պատասխան/նախաձեռնվող գործողություն
1	<p>Մենք ամբողջովին աջակցում ենք ծրագրին և պատրաստ ենք համագործակցել: Մենք միայն անհանգստանում ենք օրենսդրության դեպքում հողը վերագրանցելու բյուրակրատական գործընթացի համար Դա չափից շատ ժամանակ է պահանջում: Մենք շնորհակալ կլինենք, եթե ծրագրին օգնի մեզ կրճատել այս գործընթացի տևողությունը:</p>	<p>ԲԷՏ-ը իրավաբան է նշանակել այս աշխատանքն իրականացնելու համար Ձեզ աջակցելու հարցում: Նոր տրամադրված գրքույկների մեջ կան հեռախոսահամարներ: Բացի այդ, հայտարարության տեքստում, որը ես տվել քաղաքապատարանում փակցնելու համար, առկա է ԲԷՏ-ի կոնտակտային համարը: Առաջարկում եմ ցանկացած ժամանակ զանգել այդ համարով և ստանալ Ձեզ անհրաժեշտ օգնությունը: Բոլոր ծախսերը, որոնք առաջացել են գրանցման գործընթացի ևճեր գույքը վերագրանցելու ժամանակ, նույնպես կփոխհատուցվեն ԲԷՏ-ի կողմից:</p>
2	<p>Մեր հողը հորս անունով է, ով մահացել է: Ո՛վ է ստանալու փոխհատուցումը:</p>	<p>Հողը պետք է վերագրանցվի Ձեր անունով և նոր սեփականության կադաստրի վկայական պետք է տրամադրվի: Փոխհատուցումը պետք է լինի ձեր անունով: Դուք կստանաք ԲԷՏ-ի կողմից նշանակված իրավաբանի իրավական աջակցությունը: Նրա հետ կապ հաստատելու հեռախոսահամարները նշված են ծրագրի գրքույկում, որոնք ձեզ են տրվել, ինչպես նաև հայտարարության մեջ, որը կփակցվի այստեղ: Նաև հողի սեճականաշնորհման վերագրանցման համար բոլոր ծախսերը կփոխհատուցվեն:</p>
3	<p>Եթե օրինակի համար ես կարտոֆիլ ցանեմ, արդյոք այդ ամենը կոչնչացվի, երբ շինարարությունն սկսվի:</p>	<p>Ձեր ցանած կարտոֆիլի կամ մեկ այլ գյուղատնտեսական բերքի վնասումն անխուսափելի է: Չնայած բոլոր վնասները պետք է փոխհատուցվեն, ծրագիրը նույնպես կանի հնարավորինս ամեն ինչ վնասները նվազեցնելու համար՝ գտնելով լավագույն հնարավոր ուղիները ձեր հողի վրա գտնվող հենարանին հասնելու համար: Սրա համար շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ կլինի ձեր օգնությունը: Դուք կարող եք ցույց տալ շրջակա միջավայրը և խորհուրդ տալ ինչպես ավելի լավ մոտենալ հենարանների տեղակայման վայրերին:</p>
4	<p>Ինչպ՞ս մենք կարող ենք իմանալ կոնկրետ որտեղ հենարանը պետք է տեղադրվի իմ հողի վրա:</p>	<p>Երբ պատրաստ լինի գույքագրման և գնահատման նկարագրության արձանագրությունը, ձեր հողատարածքի քարտեզը հենարանի ճշգրիտ տեղակայման հետ միասին կներկայացվի արձանագրության մեջ և կտրամադրվի ձեզ, ստորագրելու համար:</p>

3.3.2 Ոչ-պաշտոնական հանրային քննարկումներ

46. ԱԵԱ ներկայացուցիչների և տեղական կառավարական մարմինների հետ չափագրման, գույքագրման և մարդահամարի ընթացքում և դրանցից առաջ ոչ պաշտոնական լսումներ կիրականացվեն գույքագրող և գնահատող ընկերության կողմից: Մասնավորապես, ՀԿԳՊ-ի կազմման ընթացքում ԱԵԱ կտեղեկացվեն վերաբերյալ՝ կապված հետազոտման,

ժամանակացույցի, վերջնաժամկետի հետ: Ամենօրյա խորհրդատվություններ են իրականացվում նաև հեռախոսով խորհրդատուի անվտանգության մասնագետի կողմից:

3.3.3 ԶՎԳՊ-ի իրականացման և շինարարության ընթացքում հանրային քննարկումներ

47. ԱԵԱ հետ լրացուցիչ ոչ պաշտոնական քննարկումներ կիրականացվեն ԶՎԳՊ-ի կատարման փուլում, մասնավորապես ԶՎԳՊ-ն իրականացնող մասնագետի/խմբի կողմից պայմանագրերի ստորագրման ընթացքում:

48. Հանրային քննարկման հանդիպումներն ընդհանուր հանրության համար կկազմակերպվեն շինարարությունն իրականացնող կապալառուի և ԲԷՑ-ի կողմից բոլոր համայնքներում մինչև շինարարությունը սկսելը՝ համայնքի անդամներին շինարարության ժամանակացույցի, մոտեցումների, անվտանգության և բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ տեղեկացնելու համար:

3.4 Տեղեկատվության հրապարակում

49. ԶՎԳՊ-ի կազմման, իրականացման և մոնիթորինգի ընթացքում իրականացվել են և կիրականացվեն տեղեկատվության հրապարակման հետևյալ գործողությունները:

- **ՀՀ օրենքով նախատեսված ծանուցումներ՝** Որոշ տեղեկատվության հրապարակման վերաբերյալ օրենքի պահանջները վերաբերում են պլանավորման, իսկ մյուսները իրականացման գործընթացին: Բոլոր ԱԵԱ կծանուցվեն գույքի գնահատման ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ պաշտոնական գրություններով գույքի նկարագրման արձանագրությունների հետ միասին, որոնք կուղարկվեն ապրիլի 3-րդ շաբաթվա ընթացքում¹²: ԱԵԱ պաշտոնապես կուղարկվեն նաև գնահատման արդյունքներով և փոխհատուցման գումարներով պայմանագրերի նախագծերը, հենց որ ԶՎԳՊ-ն վերջնականացվի և հաստատվի: Պաշտոնական ծանուցման միջոցով ԲԷՑ-ը ուղարկել է տվյալների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ԶՎԳՊ-ի իրականացման հետ կապված որոշ տեղեկատվություն, մասնավորապես Հայաստանից¹³ դուրս գտնվող սեփականատերերի և/կամ համասեփականատերերի համար: ԲԷՑ-ը կկցի նոտարական հաստատման նմուշ հայերեն և ռուսերեն լեզուներով ԶՎԳՊ-ի կազմման գործընթացը արագացնելու համար: Հենց որ Գերակա Հանրային Շահ ճանաչելու Որոշումը հաստատվի ՀՀ Կառավարության կողմից 2015թ-ի մայիսի 14-ին, այն կիրատարակվի թերթում ավելի քան 3000 օրինակ տպաքանակով (համաձայն ՀՀ օրենսդրության) ունեցող, և հողի յուրաքանչյուր ազդակիր սեփականատեր կստանա գրություն պաշտոնական ծանուցմամբ: Կադաստրային քարտեզների ուղղման ենթարկված հողամասերի բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է 2017 թվականի ապրիլի 6-ին:
- **Հանրային տեղեկատվական գրքույկների բաժանում՝** Հանրային քննարկման հանդիպումների ընթացքում ԲԷՑ-ը բաժանել է հանրային տեղեկատվական գրքույկներ հայերեն լեզվով (պատճենը ներկայացված է Հավելված 2-ում): Գրքույկում ներկայացված են ծրագրի նկարագրությունը, իրավունքները և փոխհատուցման արյուսակը, հաճախակի տրվող հարցերը, բողոքարկման մեխանիզմը, ինչպես նաև ԲԷՑ-ի կոնտակտային անձի և կապալառուի սոցիալական հարցերով մասնագետի տվյալները:
- **ՎԵՇ-ի հրապարակումը՝** ՎԵՇ-ի պատճենը, ինչպես նաև ծրագրի տեղեկատվական գրքույկների լրացուցիչ պատճենները հրապարակվել են ՏԻՄ-ում և ընդունելի են ԱԵԱ համար:
- **ԶՎԳՊ-ի նախագծի հրապարակում՝** ԶՎԳՊ-ի նախագիծը հրապարակվել է 2015թ-ի սեպտեմբերի 18ին, 20 օրյա ժամկետի ընթացքում, ինչպես պահանջվել է ՎԵՇ-ի կողմից, որը ժամանակ է տվել բոլոր շահագրգիռ և ազդակիր կողմերին ներկայացնելու իրենց

¹² ՎԳՊ-ի իրականացման ընթացքում բոլոր ԱԵԱ-ք հնարավորություն ունենին ներկայացնել իրենց, ծանոթանալ և ստորագրել արձանագրություններ (մանրամասները ներկայացված են ազդեցություն գլխում): Ըստ ՀՀ ընթացակարգի, ԲԷՑ-ը նույնպես պետք է ստորագրի արձանագրությունը և այն պաշտոնապես ուղարկի ԱԵԱ-ց: Նրանք կունենան 10 օր արձանագրության բովանդակությունը դատարանում վիճարկելու համար:

¹³ Տեղեկատվությունը տրամադրվել է սեփականատերերին կամ Հայաստանից դուրս գտնվող ազդակիր ՏՏ-երի ընտանքի անդամներին փոխանցելու արտասահմանում գտնվող ԱԵԱ-ց:

մեկնաբանությունները և անհանգստությունները ՀՎԳՊ-ի վերաբերյալ: ՀՎԳՊ-ի նախագծի հայերեն լեզվով տարբերակը ուղարկվել է ՏԻՄ-ի բոլոր ազդակիր համայնքներ: ԱԵՍ-ը հնարավորություն են ունեցել հեռախոսով ԲԷՑ-ին ներկայացնելու իրենց մեկնաբանությունները և հարցերը ՏԻՄ-երի միջոցով կամ անձնապես հանրային քննարկումների ժամանակ, որոնք կազմակերպվել են Եղեգնաձորում և Սիսիանում: Բոլոր ԱԵՍ-ը հնարավորության վերաբերյալ տեղեկացվել են հեռախոսով ԿՓԹԼ-ի սոցիալական հարցերով մասնագետի կողմից: Հանրային քննարկումները կազմակերպվել են ԿՓԹԼ կողմից 2015թ-ի հոկտեմբերի 13-ին Եղեգնաձորում և 2015թ-ի հոկտեմբերի 14-ին Սիսիանում ՏԻՄ-ի բոլոր ներկայացուցիչների, ՀԿ-ների և ԱԵՍ-ց համար մարզկենտրոնում ՎԳՊ-ն հրապարակելուց հետո (Հավելված 3-1):

- **Վերջնական ՀՎԳՊ-ի հրապարակում**՝ Յենց որ ՀՎԳՊ-ն հաստատվի ՀԲ-ի կողմից, ՎԳՊ-ի հայերեն և անգլերեն տարբերակները կիրապարակվեն ԲԷՑ-ի և ՀԲ-ի կայքերում: Հաստատված ՎԳՊ-ի պատճեն առկա կլինի ազդակիր համայնքներում տարածաշրջանային լիազոր մարմինների և ՏԻՄ-ի գրասենյակներում:
- **Վերանայված նախագծային ՀՎԳՊ-ի հրապարակում**՝ հենց որ ՀՎԳՊ-ն թարմացվի՝ հիմնվելով վերանայված նախագծի և/կամ վերանայված կադաստրային քարտեզների վրա, վերանայված ՀՎԳՊ-ն կիրապարակվի 20 օրյա ժամկետի ընթացքում, որը ժամանակ կտա բոլոր շահագրգիռ և ազդակիր կողմերին ներկայացնելու իրենց մեկնաբանությունները և անհանգստությունները վերանայված ՀՎԳՊ-ի վերաբերյալ: Վերանայված ՀՎԳՊ-ի նախագծի հայերեն լեզվով տարբերակը կուղարկվի ՏԻՄ-ի բոլոր ազդակիր համայնքներ լրացուցիչ բացատրությամբ, թե ինչու է եղել թարմացում: ԱԵՍ-ը հնարավորություն կունենան հեռախոսով ԲԷՑ-ին ներկայացնելու իրենց մեկնաբանությունները և հարցերը ՏԻՄ-երի միջոցով կամ անձնապես հանրային քննարկումների ժամանակ, որոնք կկազմակերպվեն մարզկենտրոնում: Բոլոր նոր ԱԵՍ-ը հնարավորության վերաբերյալ կտեղեկացվեն հեռախոսով ԿՓԹԼ-ի սոցիալական հարցերով մասնագետի կողմից: Հանրային քննարկումները կկազմակերպվեն ԿՓԹԼ կողմից 20 օրյա ժամկետի ընթացքում ՏԻՄ-ի բոլոր ներկայացուցիչների, ՀԿ-ների և ԱԵՍ-ց համար մարզկենտրոնում ՀՎԳՊ-ն հրապարակելուց հետո:
- **Վերջնական վերանայված ՀՎԳՊ-ի հրապարակում**՝ Յենց որ վերանայված ՀՎԳՊ-ն հաստատվի ՀԲ-ի կողմից, վերանայված ՀՎԳՊ-ի հայերեն և անգլերեն տարբերակները կիրապարակվեն ԲԷՑ-ի և ՀԲ-ի կայքերում: Հաստատված վերանայված ՀՎԳՊ-ի պատճեն առկա կլինի ազդակիր համայնքներում տարածաշրջանային լիազոր մարմինների և ՏԻՄ-ի գրասենյակներում:

4. Բողոքների Կարգավորման Մեխանիզմ և Գործընթացներ

4.1 Ներածություն

50. Եվ ծրագրի, և ԱԵԱ օգտին է մշակել մեխանիզմ, որի միջոցով բողոքները և անհամաձայնությունները, որոնք վերաբերում են ՀՎԳՊ-ի իրականացմանը, կարող են լուծվել: ԲԵՑ-ը մշակել է Բողոքարկման Մեխանիզմ (ԲՄ) վստահեցնելու, որ դա պատասխանն է մտահոգությունների և բողոքների, մասնավորապես ծրագրի տարածքում գտնվող ԱԵԱ: Շատ դեպքերում բողոքարկման մեխանիզմը կարող է որոշման հնարավորություն տալ անկախ միջնորդության կամ վեճերի լուծման այլընտրանքային միջոցով դատական երկարատև գործընթացին կամ բողոքների ուսումնասիրմանը հակառակ: ԲՄ-ի հատուկ նպատակը կլինի արագացնել գործընթացը, երաշխավորել արդյունավետ և ժամանակին կայացված որոշում՝ սույնով նվազեցնելով վեճերի առաջացման ռիսկը և խուսափելով ավելորդ ուշացումներից: Հանրային Ձևարկումների հանդիպումների, ինչպես նաև ծրագրի տեղեկատվության հրապարակված գրքույկների միջոցով բոլոր ազդակիր անձանց ծանուցվել է ԲՄ-ի վերաբերյալ:

4.2 Բողոքների Կարգավորման Մեխանիզմ

4.2.1 Առաջին փուլ

51. Առաջին փուլում փորձ կարվի բողոքները լուծել համայնքային մակարդակով բանակցային գործընթացով ոչ պաշտոնական միջնորդի և համայնքային լիազոր մարմինների հետ: Ազդակիր համայնքների ներկայացուցիչները ներկայացված են աղյուսակ 14.1 Համայնքային լիազոր մարմինները կիրորհրդակցեն ԲԵՑ-ի բողոքները համակարգողի հետ, որպեսզի պատրաստեն պատասխանները ԱԵԱ մտահոգությունների վերաբերյալ: Երաշխավորելու համար, որ բոլոր բողոքները կարգավորվում են պատշաճ ձևով, ԲԵՑ-ը կկազմակերպի դասընթացներ ՏԻՄ-ի ներկայացուցիչների համար և կբացատրի գործընթացը, որին պետք է հետևել բողոքների գրանցման և հասցեագրման ժամանակ (մանրամասները ներկայացված են Բաժին 4.4-ում): Ուսուցումը կիրականացվի, հենց որ ՀՎԳՊ-ի նախագիծը հրապարակվի ԱԵԱ-ց վերջնական հանարային լուսմների ժամանակ, որպես ՀՎԳՊ-ի իրականացման առաջին նախապատրաստական գործողություն:

Աղյուսակ 14.1: Ազդակիր համայնքների ԲԿՄ ներկայացուցիչներ

N	Համայնք	Պաշտոնը	Անուն, ազգանուն	Հեռախոս
1	Եղեգնաձոր	Համայնքի ղեկավար	Ղավիթ Հարությունյան	(+374 281) 2-20-20,2-51-20
2	Ագարակաձոր/Արենի	Համայնքի ղեկավար	Հուսիկ Սահակյան	(+374 281) 6 00 01
3	Մալիշկա	Համայնքի ղեկավար	Միեր ՄՈՎսիսյան	(+374 281) 2-20-84
4	Արին/Վայք*	Համայնքի ղեկավար	Տարո ավետյան	(+374 282) 9-28 66,2-11-66
5	Գևղեվազ/Չերմուկ**	Համայնքի ղեկավար	Վարդան Հովհաննիսյան	(+374 287) 2 12 12, 2 12 02
6	Սարավան/Չառիթափ**	Համայնքի ղեկավար	Սիմոն Բաբայան	(+374) 93 93-33-99
7	Անգեղակոթ	Համայնքի ղեկավար	Արմենակ Մարկոսյան	(+37494) 208971
8	Շաղատ	Համայնքի ղեկավար	Տիգրան Խաչատրյան	(+374 93) 052244
9	Սառնակունք****	Համայնքի ղեկավար	Առուստամ Առուստամյան	(374 94) 405252
10	Գորայք			

1	Տղուկ****		
1			
2	Սպանդարյան****		
* Համայնքը միացվել է Վայք համայնքին			
** Համայնքը միացվել է Ջերմուկ համայնքին			
*** Համայնքը միացվել է Չառիթափ համայնքին			
**** Համայնքը միացվել է Գորայք համայնքին			

52. Միաժամանակ, ԱԵԱ կարող են ներկայացնել բողոքները ՏԻՄ-ի միջոցով կամ անմիջապես ԲԵՑ-ին: ԲԵՑ-ը ունի բողոքները համակարգող անձ և հանրային քննարկումների ժամանակ ԱԵԱ տրամադրվել է նրա կոնտակտային տվյալները: Յուրաքանչյուր բողոքի պետք է պատասխան տրվի առավելագույնը 30 օրվա ընթացքում: Տարբեր մակարդակների ԲԿՄ-ի տեղական մարմինների, ներառյալ տեղական կառավարության և ԲԵՑ-ի կոնտակտային տվյալները կտրամադրեն ԱԵԱ-ց ցանկացած ժամանակ ծրագրի հետ առնչություն ունեցող անձանց կողմից (ԲԵՑ, ԿՓԹԼ-ի ճարտարագետներ, չափագրող ընկերություն և այլն), որոնք այցելում են տեղանք, ազդակիր գույքերը գնահատելու կամ ԱԵԱ-ց հետ խոսելու:

4.2.2 Երկրորդ փուլ

53. Եթե բողոքը շարունակվում է, ԱԵԱ կարող ներկայացնել բողոքի ձևը էլեկտրոնային կամ տպված տարբերակով անձամբ կամ ՏԻՄ-ի¹⁴ մջոցով Բողոքների Կարգավորման Հանձնաժողովին (ԲԿՀ), որը պետք է ձևավորվի ԲԵՑ-ի կողմից: ԲԿՀ-ի հետ հանդիպումը կկազմակերպվի Երևանում, ԲԵՑ-ի գրասենյակում բողոքը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Հանձնաժողովը բաղկացած կլինի մշտական և ոչ մշտական անդամներից:

1. Մշտական անդամներ՝ ԲԵՑ, Կապալառու և իրավաբան:
2. Ոչ մշտական անդամներ՝ համապատասխան մարզի համայնքի և ՀԿ-ի ներկայացուցիչներ:

54. Ոչ պաշտոնական անդամները կծանուցվեն հանդիպման ամսաթվի և տեղի վերաբերյալ հանդիպումից 10 օր առաջ: Ոչ մշտական անդամների բացակայությունը չի կարող պատճառ հանդիսանալ հանդիպումը չեղյալ համարելու համար: Իրավաբանը կարող է ներկայացվել մշտական անդամներից մեկի կողմից: Հանձնաժողովը պետք է որոշում կայացնի 15 օրվա ընթացքում:

4.2.3 Երրորդ փուլ

55. Բողոքների կարգավորման մեխանիզմը ձախողվելու դեպքում ԱԵԱ կարող են ներկայացնել իրենց գործը դատարան:

4.3 Հիմնական պատասխանատու կողմերը և առկա կապերը բողոքներ ներկայացնելու համար

56. ԱԵԱ-ք կարող են ներկայացնել իրենց հարցերը, բողոքները և մտահոգությունները մի քանի կապերի միջոցով, մասնավորապես,

- Տեղական Կառավարություն
- ԲԵՑ-ին հեռախոսի, էլ. փոստի միջոցով կամ անձամբ այցելելով
- Բողոքների կարգավորման կոմիտե

57. Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունը պարտավոր է իրականացնել աշխատանքը, համաձայն պայմանագրային պահանջների, որը ներառում է.

¹⁴ Բոլոր ՏԻՄ գրասենյակները ունեն համակարգիչներ, էլ. փոստեր և ինտերնետ

- անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի համար և կտրամադրի տեխնիկական աջակցություն ԲԵՑ-ին կարգավորելու ցանկացած բողոք, որը կարող է առաջանալ ՎԳՊ-ի կազմման և իրականացման ընթացքում,
- կանոնավոր մշտադիտարկման հաշվետվությունների պատրաստում ՎԳՊ-ի կազմման և իրականացման կարգավիճակի վերաբերյալ, ներառյալ ցանկացած առաջացած բողոքի վերաբերյալ մանրամասներ և ինչպես են դրանք կարգավորվել,
- եթե խոցելի ազդակիր անձինք որոշվում են՝ հետևելով մարդահամարի ավարտմանը, ապա կապալառուն պետք է նշանակի մասնագիտացված փաստաբաններ (սոցիալական աշխատողներ/իրավաբաններ) աջակցելու այս մարդկանց ամբողջ գործընթացի ժամանակ և նրանց համար գործի որպես անկախ իրավաբան, եթե որևէ բողոք առաջանա: Իրավախորհրդատու է ընտրվել, ով տեղեկացվել է աշխատանքների ծավալի վերաբերյալ և տրամադրվել ծրագրի հետ կապված համապատասխան փաստաթղթերը, և նա կմիանա խմբին, հենց որ ԲԵՑ-ը ստանա բողոքները:
- ԲԵՑ-ի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով:

58. ԲԵՑ-ը կիրականացնի աշխատանքներ, որոնք ներառում են.

- Անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի կարգավորման համար, սույնով վկայակոչվում է որպես բողոքները կարգավորող (ներառյալ առաջին շփումը, միջնորդության նպատակով պարբերաբար տեղանք այցելելը պետք է իրականացվի կապալառուի կողմից):
- Յեռախոսի համարը, էլ. փոստի հասցեն և կոնտակտային անձի անունը ծրագրի համար նախատեսված հայտարարությունների տախտակների վրա:
- Կապալառուի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով:
- Կապը դատարանի հետ:
- ԲԵՑ-ը կվերահսկի տեղական լիազոր մարմինների կողմից ստացված բոլոր բողոքները, երաշխավորելու համար, որ դրանք պատշաճ կերպով կարգավորվում են և համապատասխանաբար զեկուցի առաջընթացի հաշվետվության մեջ:

59. Բողոքարկման Հանձնաժողովի տեխնիկական առաջադրանքը (ՏԱ) հետևյալն է.

- հստակ հասկանալ ԱԵԱ կողմից բարձրացված հարցերը՝ կապված Հայաստանում էլեկտրահաղորդման գծի անցկացման հետ,
- արբիտրաժ և բանակցություն՝ հիմնվելով ԱԵԱ և իրականացնող գործակալությունների միջև վեճերի դեպքում կողմերի դեպքերի թափանցիկ և անկողմնակալ լսումների վրա,
- կայացնել անաչառ և արդարացի որոշումներ նրանց կողմից ներկայացված բոլոր բողոքներին,
- խորհուրդ տալ ԲԵՑ-ին ինչպես լավագույն կերպով կարգավորել ԱԵԱ բողոքները,
- ստանալ ԱԵԱ բողոքների իրականացման կարգավիճակը:

60. ՀԲ-ն անմիջապես Բողոքարկման գործընթացի մաս չէ, բայց պետք է ստանա հաշվետվություններ, ինչպիսի բողոքներ են ստացվել և ինչպես են դրանք հետևել/մեղմացվել:

4.4 Բողոքների գրանցման և հասցեագրման գործընթաց

61. Մշակվել է հետևյալ գործընթացը, երաշխավորելու, որ բոլոր հարցերն ու մտահոգությունները գրանցվել, գնահատվել և պատշաճ կերպով հասցեագրվել են:

4.4.1 Ուսումնասիրում և փաստաթղթավորում

62. Բողոքները համակարգի միջոցով պետք է ուսումնասիրվեն և մշտադիտարկվեն: Պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- սկզբնական բողոքի ստացում և գրանցում
- բողոքի մանրամասներ և հանգամանքներ, ներառյալ ուսումնասիրման համարները
- բողոքի դասակարգում և տրամադրված ծանուցումներ
- բողոքները կարգավորելու համար ռեսուրսների ակտիվացում
- պատասխան(ներ) բողոքին և վերջնական արդյունքին
- շահառուների պատասխան(ներ)ը և պահանջները լրացուցիչ գործողության համար, եթե կա անհրաժեշտություն
- հատուկ գործողության պլանների իրականացում

- գործողության պլանների վերաբերյալ առաջընթացի կարգավիճակի հաշվետվություններ
- վերջնական և գնահատման հաշվետվություն ձեռնարկած գործողության արդյունավետության վերաբերյալ:

4.4.2 Դիտարկում

63. ՎԳՊ-ի կազմման/իրականացման հետ կապված բողոքների թարմացումը կտրամադրվի ծրագրի առաջընթացի յուրաքանչյուր եռամսյակային հաշվետվության մեջ:

4.5 Զինարարության փուլում ԲԿՄ

64. Ազդակիր անձին (ԱԵԱ) խրախուսում են գործել հետևյալ ձևով.

- կապ հաստատել կապալառուի կողմից նշանակված բողոքարկման անձնակազմի հետ անձամբ պարբերաբար տեղանք այցելելու ժամանակ կամ նշանակված հեռախոսահամարով¹⁵ կամ համայնքի ղեկավարի կամ ՀԿ-ի անձնակազմի միջոցով
- բողոք ներկայացնել և դեպքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել
- համաձայնվել կապալառուի հետ մեղմացման միջոցների վերաբերյալ
- համաձայնվել կապալառուի հետ բողոքների լուծման համար ժամանակի սահմանափակման վերաբերյալ: Բողոքները պետք է լուծվեն երկու շաբաթվա ընթացքում կամ այլ կերպ հատկորոշվեն մշակված համաձայնագրում
- ստորագրել, եթե մեղմացման միջոցը կիրառվել է, ինչպես համաձայնեցվել էր
- լուծումը փնտրել ԲԵՑ-ից, եթե բավարարված չէ վերը նշված գործընթացով
- լուծումը փնտրել Բողոքների կարգավորման հանձնաժողովից, եթե գոհ չէ ԲԵՑ-ի պատասխանից
- լուծումը փնտրել դատարանում, եթե այս բոլորը ձախողվում է:

65. Այնուամենայնիվ, վերը նշված բողոքների մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացու իրավունքը դեպքի համար դիմել անմիջապես դատարան բողոքարկման մեխանիզմի հենց սկզբնական փուլում: Բողոքների մեխանիզմը նախատեսված է խուսափելու համար երկարատև դատական գործընթացից:

¹⁵ Մինչև շինարարական աշխատանքներն սկսելը հանրային քննարկման ժամանակ տրամադրված տեղեկատվական գրքույկներում նշված կլինի մանրամասն կոնտակտային համարները:

5. Ինստիտուցիոնալ շրջանակ

5.1 Ներածություն

66. Մի քանի հաստատություններ, յուրաքանչյուրը տարբեր դերերով և պատասխանատվությամբ, պատասխանատու են ՀԿԳԴ-ի վերահսկման և իրականացման համար ՎԶԸ-ի սկզբունքների և նպատակների, ՀՀ օրենքների և կանոնադրությունների և ՀԲ ԳՁ 4.12 հետ միասին: Ներառված հաստատությունների գործառնական դիրքը ներկայացվում է ստորև:

5.2 ԲԵՑ

5.2.1 Ընդհանուր նկարագրություն

67. ԲԵՑ-ը էլեկտրահաղորդման ոլորտում պետական ընկերություն է, որը հիմնադրվել է 1998թ-ին և պատասխանատու է երկրում բարձր լարման էլեկտրահաղորդման ցանցի շահագործման, շինարարության և տեխնիկական սպասարկման համար: Ծրագրի այս բաղադրիչ մասը, ինչպես նաև ԲԵՑ-ի ամբողջ գործողությունները, կվերահսկվեն ԲԵՑ-ի Ղեկավարության Խորհրդի կողմից ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գլխավորությամբ և բաղկացած ութ անդամներից, որոնք ներկայացնում են ԲԵՑ-ը, Կառավարությունը և Էներգետիկ սեկտորի կազմակերպությունները: ԲԵՑ-ի հիմնադրման իրավական հիմքը եղել է 1998թ-ի հուլիսի 20-ին Կառավարության No 450 Որոշումն ընդունելուց հետո: 1998թ-ի օգոստոսի 21-ին ԲԵՑ-ը վերակազմավորվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն: ԲԵՑ-ի կանոնադրությունը հաստատվել է 1998թ-ի օգոստոսի 21-ին ՀՀ Էներգետիկայի նախարարության No 254-ԳՄ Որոշմամբ: ԲԵՑ-ի բաժնետոմսերի բացառիկ սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է: Բաժնետոմսերի ղեկավարումը փոխանցվել է ՀՀ Էներգետիկայի նախարարությանը, համաձայն ՀՀ Կառավարության 2003թ-ի նոյեմբերի 6-ի No 1694-Ն Որոշման:

68. ԲԵՑ-ի հիմնական գործունեությունը հետևյալն է՝ էլեկտրահաղորդում, էլեկտրականության արտադրություն (հողմակայան), կառուցում, վերակառուցում, արդիականացում, Էներգետիկ օբյեկտների վերականգնում, բարձր լարման ցանցերի կառուցում, Էներգետիկ օբյեկտների հետազոտման և զարգացման աշխատանքներ:

69. **Աշխատանքային սկզբունքները.** Համաձայն Էներգետիկայի մասին ՀՀ Օրենքի Հոդված 23-ի (Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորում) էլեկտրաէներգիայի տեղափոխումը, ինչպես նաև էլեկտրահաղորդման ցանցերի կառուցումը լիցենզավորված գործողություն է Հայաստանում: Միայն էլեկտրահաղորդման գծի շահագործման համապատասխան լիցենզիաներ ունեցողները կարող են զբաղվել էլեկտրական և ջերմային էներգիայի և բնական գազի վաճառքով/առքով (գնում վաճառելու նպատակով), համաձայն լիցենզիայի պայմանների եւ շուկայի կանոնների: Ի լրումն դրան, համաձայն էլեկտրական գծի (հաղորդման (փոխադրման) լիցենզիաներ) վերաբերյալ Հոդված 36-ի՝ էլեկտրաէներգիայի տեղափոխման լիցենզիայի իրավունք տրվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրաէներգիա տրամադրելու և Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկիր էլեկտրաէներգիա տեղափոխելու համար: Էլեկտրաէներգիայի (հզորության) փոխադրման լիցենզիան պետք է համապատասխանի շուկայական կանոններին և պայմանագրերին:

70. **Գործառնական սկզբունքները.** ԲԵՑ-ը իրականացնում է գոյություն ունեցող բարձր լարման էլեկտրահաղորդման ցանցի և դրվածքների նախագծում, շահագործում և տեխնիկական սպասարկում, ներառելով, բայց չսահմանափակվելով բարձր լարման ենթակայաններով (220կՎ/ 110կՎ /35կՎ /6կՎ), բարձր լարման էլեկտրահաղորդման գծերով (330կՎ /220կՎ /110կՎ), Պուշկինի լեռնանցքում տեղադրված հողմակայանով (2.64 ՄՎ հզորությամբ): ԲԵՑ-ն իրականացնում է նաև կառուցման համար ներդրման Նոր ծրագրեր, ներառելով, բայց չսահմանափակվելով բարձր լարման ենթակայաններով (220կՎ), բարձր լարման էլեկտրահաղորդման գծերով (400կՎ/ 220կՎ):

5.2.2 Հիմնական պատասխանատվությունները

71. ԲԷՑ-ն ամբողջապես պատասխանատվություն է կրում Ծրագրի համար, ներառյալ նախապատրաստական աշխատանքները, իրականացումը և բոլոր փոխհատուցումների և վերաբնակեցման առաջադրանքների ֆինանսավորումը և միջգերատեսչական համակարգումը, հանրային քննարկումները, խորհրդատուների վարձակալումը և այլն: ԲԷՑ-ը լիովին պատասխանատվություն է կրում սույն ՎԳԴ-ի ներքո գտնվող բոլոր գործողությունների վերահսկման ու մշտադիտարկման համար:

5.2.3 ՀՎԳԴ-ի իրականացման միավոր

72. Ծրագրի համար ՀՎԳԴ-ն իրականացնելու նպատակով ԲԷՑ-ում արդեն կազմավորվել է հատուկ միավոր: Միավորը բաղկացած է հինգ մասնագետից, որոնցից մեկը խմբի ղեկավարն է, երկուսը տեղանքում վերաբնակեցման մասնագետները, կես դրույքով աշխատող իրավաբան և երկու մասնագետներ, որոնք աշխատում են գրասենյակում: Ծրագրում վերաբնակեցման իրականացման և մշտադիտարկման նպատակով ՎԳԴ-ի իրականացման միավորը պատասխանատու կլինի հետևյալ առաջադրանքների համար, մասնավորապես երաշխավորելով, որ ԱԵԱ արագ կերպով կծանուցվեն, ըստ ՀՎԳԴ-ի և ՀՀ օրենքների ու կանոնակարգերի, պայմանագրի ստորագրման, անհրաժեշտության դեպքում բռնագրավման գործընթացի կազմակերպման, ազդեցության ենթարկված ունեցվածքների գրանցման և վերագրանցման, պայմանագրի ստորագրման գործընթացի ընթացքում ԱԵԱ աջակցության, իրականացման ընթացքում ստացված բողոքների հավաքման և համակարգման համար (մանրամասները ներկայացված են Հավելված 5-ում):

5.3 ԲԷՑ-ի խորհրդատուները

73. Հաշվի առնելով վերաբնակեցման գործողությունների մեծ մասշտաբը՝ վերաբնակեցման հետ կապված առաջադրանքների և գործողությունների համար ԲԷՑ-ին աջակցություն են ցուցաբերում տարբեր խորհրդատուներ, մասնավորապես շինարար կապալառու Կալպատարու Փաուեր Թրանսմիշն Լիմիթեդ ընկերությունը և իրականացմանը աջակցող խորհրդատու (Hifab OY&EA Energy Advisory):

5.3.1 Շինարար կապալառու

74. Շինարար Կապալառուն (ՇԿ) կազմել է նախագիծ Ծրագրի համար: ՇԿ-ն պատասխանատու է ծրագրի ծրագծի և հենարանների գտնվելու վայրի որոշման համար, համաձայն ՎԶՇ-ի սկզբունքների, Ծրագրի ազդեցությունից խուսափելու կամ այն նվազագույնի հասցնելու համար: ՇԿ-ն պատասխանատու է ՀՎԳԴ-ի կազմման համար, ներառյալ բոլոր պահանջվող չափագրումները, գույքի նկարագրման արձանագրությունների կազմումը և գնահատումը: ՇԿ-ն ՀՎԳԴ-ի կազմման և շինարարության ընթացքում կազմակերպել է հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում: ՇԿ-ն խոցելի տնային տնտեսություններին, ինչպես նաև օրինականացման գործընթացի ժամանակ օրնականացման ենթակա ԱԵԱ, եթե այդպիսիք կան, կտրամադրի իրավաբանական աջակցություն:

5.3.2 Իրականացմանն աջակցող խորհրդատու

75. Իրականացմանն Աջակցող խորհրդատուն (ԻԱԽ) նշանակվել է շինարարական աշխատանքները վերահսկելու, նախագծի, ինչպես նաև սոցիալական և շրջակա միջավայրի լրիվ պահանջների հետ համապատասխանությունը երաշխավորելու համար: ԻԱԽ-ն ծրագրի համար վերանայել է ՎԶՇ-ն և ԲԷՑ-ին կտրամադրի սոցիալական մասնագետների վերաբերյալ մոնիթորինգի հաշվետվություններ ամբողջ շինարարության ընթացքում:

5.3.3 Անկախ խորհրդատու

76. ԲԷՑ-ը կվարձի անկախ խորհրդատու ՀՎԳՊ-ի իրականացման համապատասխանության հաշվետվություն կազմելու նպատակով (տես նաև պարբերություն 10.4, էջ 48):

5.4 Պետական Կառավարման Մարմիններ

77. Վերաբնակեցման շրջանակներում ԲԷՑ-ը կարող է միանալ և համակարգել մի շարք նախարարությունների և կոմիտեների հետ: ՀՎԳՊ-ի իրականացման ընթացքում բոլոր պետական կառավարման մարմինները կարող են հաշվի առնվել և անհրաժեշտության դեպքում դառնալ Բողոքների կարգավորման կոմիտեի անդամ: Հիմնական նախարարություններից ՎԵՇ-ում նշվում է հետևյալները՝ (ա) Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, (բ) Բնապահպանության նախարարություն Պաշտպանվող տարածքների բաժնի և բնապահպանական փորձաքննության ՊՈԱԿ-ի հետ, (գ) Գյուղատնտեսության նախարարություն և նրա Հայաստան ՊՈԱԿ (անտառ), (դ) Մշակույթի նախարարություն Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հետ, (ե) Ֆինանսների նախարարություն:

78. ՀՀ Կառավարության Անշարժ Գույքի Կադաստրի Պատական Կոմիտեն (ԱԳԿՊԿ) ՀՎԳՊ-ի կազմման և իրականացման մեջ ներգրավված ամենահիմնական պետական կազմակերպությունն է, մասնավորապես կապված ԱԵԱ ունեցվածքի և գույքի իրավունքների որոշման, վավերականացման, գրանցման, վերագրանցման և այլնի հետ:

5.5 Մարզպետարաններ (Տարածաշրջանային լիազոր մարմիններ)

79. Մարզպետարաններում պետական լիազոր մարմինները վարում են ՀՀ Կառավարության տարածքային քաղաքականությունը հետևյալ ոլորտներում՝ ֆինանսավորում, քաղաքաշինություն, բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովագրություն, մշակույթ և սպորտ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն, առևտուր, հանրային մեդիա սպասարկում: Վերը նշված ոլորտներում տարածքային քաղաքականությունը իրականացվում է մարզպետարանների, ինչպես նաև համապատասխան մարզերին ենթակա կազմակերպությունների միջոցով: Մարզպետարանի ներկայացուցիչները ՀՎԳՊ-ի կազմման և իրականացման ընթացքում հաշվի են առնվել և հաշվի կառնվեն որպես տեղական պետական լիազոր մարմիններ հողային հարաբերության կարգավորման համար: ԲԷՑ-ը դիմել է մարզպետարաններ Հանրային քննարկումների կազմակերպմանը աջակցելու համար: Նախագծման փուլում մարզպետարանները նույնպես մասնակցել են ՀԶ-երին, ինչպես նաև մասնակցել են Բնապահպանական Սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) շրջանակում ներկայացված ՀԶ-ներին:

5.6 Տեղական Ինքնակառավարման Մարմիններ

80. Զանի որ Ծրագիրն իրականացվելու է գյուղական տարածքներում, Տեղական Ինքնակառավարման Մարմինները (Տեղական Մարմինները (SU)) կարևոր դեր կխաղան և Ծրագրի ընդհանուր իրականացման և վերաբնակեցման հետ կապված գործողությունների ընթացքում: SU-ի հետ արդեն խորհրդակցել են ՀՎԳՊ-ի կազմման ժամանակ և ակտիվ կերպով ներգրավվել են համայնքներում ԱԵԱ հետ Հանրային քննարկումներ կազմակերպելու ընթացքի մեջ: Նրանք աջակցել են գույքագրման հետազոտման ընթացքում ազդակիր հողատարածքների սեփականության կարգավիճակը, ԱԵԱ որոշելու, հետազոտությունները կազմակերպելու հարցում: Նրանց հետ խորհրդակցել են և նրանք կներգրավվեն որպես միջնորդներ բողոքների կարգավորման գործընթացի ժամանակ, մինչև կներկայացվեն Բողոքների Կարգավորման Հանձնաժողով:

5.7 Բողոքների Կարգավորման Հանձնաժողով

81. Բողոքների կարգավորման հանձնաժողովը (ԲԿՅ) Ծրագրի ընթացքում նշանակվել է, որպեսզի ներկայացվեն վերաբնակեցման հետ կապված բողոքները և լուծվեն դատարան ներկայացված բոլոր անհամաձայնությունները (մանրամասները ներկայացված են Բաժին 4-ում):

5.8 Հասարակական Կազմակերպություններ

82. Հայաստանում և մասնավորապես ծրագրի հետ կապված տարածքներում գործող Հասարակական Կազմակերպությունները (ՀԿ-ներ) սերտորեն ներառված են համայնքային կյանքի մեջ: Մեծամասամբ ՀԿ-ներն են օգնում լուծել համայնքային խնդիրները, առաջ քաշել խոցելի խմբերի շահերը, պահպանել շրջակա միջավայրը, տրամադրել հիմնական սոցիալական ծառայություններ, կազմակերպել տեղեկատվական քարոզարշավներ և այլն: ՀԿ-ների կազմման ընթացքում ՀԿ-ները¹⁶ հրավիրվել են մասնակցել ԱԵԱ հետ Հանրային Զննարկումներին ծրագրի ազդեցությանը ենթարկված տարածքներում: ՀԿ-ները կներառվեն նաև ՀԿԳՊ-ի իրականացման գործընթացում, մասնավորապես ազդակիր համայնքներում կազմակերպվող բոլոր հանրային քննարկումներում, որտեղ նրանք կկարողանան արտահայտել իրենց տեսակետը և ներկայացնել գործընթացի վերաբերյալ իրենց առաջարկությունները և աջակցել ԱԵԱ: ՀԿ-ներին առաջարկվել է ցանկության դեպքում նաև մասնակցել Բողոքների կարգավորման մեխանիզմի գործընթացին:

5.9 Համաշխարհային Բանկ

83. ՀԲ-ն Ծրագրի ֆինանսավորող գործակալությունն է: Ծրագիրը պարբերաբար վերահսկելուց բացի, ՀԲ-ն իրականացնում է նաև համապատասխանության մոնիթորինգ, ՀԿԳՊ-ի վերանայում և հաստատում և թույլտվություն է տալիս պայմանագիր կնքելու և ստորագրելու համար շինարարական աշխատանքները սկսելու նպատակով:

¹⁶ ԿԳՊ-ին է կցված Հանրային քննարկումների և Տեղեկատվության Հրապարակման Պլանի ներկայացման ժամանակ ներկա գտնված ՀԿ-ների ցանկը:

6. Օրենսդրական Հայեցակարգ

6.1 Տեղական օրենսդրական հայեցակարգ

84. Հայաստանում հասարակության և պետության կարիքների նպատակով սեփականության օտարումը համակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: ՀՀ Սահմանադրության Հոդված 31-ի 3-րդ կետի համաձայն, սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է: Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են՝ ա) օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով, բ) օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում (այսուհետ՝ Փոխհատուցում):

85. Հասարակության և Պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենքը (ՀՊԿՀՍՕ ՀՀ օրենքը) սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը և դրա որոշման կարգը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն): Գերակա հանրային շահը կարող է հետապնդել պետական պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը, էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի ուսումնասիրման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը, շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

86. «Անշարժ գույքի գնահատման գործունեության» մասին ՀՀ օրենքը ընդունվել է 2005 թ-ին: Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում անշարժ գույքի գնահատման գործունեության հետ կապված հարաբերությունները: Անշարժ գույքի գնահատման գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ է համապատասխան լիցենզավորում (հոդված 9): Հոդված 6-ը սահմանում է անշարժ գույքի գնահատման օբյեկտները: Սույն օրենքի հոդված 8-ի համաձայն, անշարժ գույքի գնահատումը պարտադիր է՝

- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման դեպքերում, բացառությամբ պետական գույքի մասնավորեցման և պետական կամ համայնքային հողերի օտարման դեպքերում,
- անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում,
- անշարժ գույքն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու դեպքերում,
- անշարժ գույքի բռնագանձման հետևանքով իրացման դեպքերում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

6.2 Հայաստանի օրենքների և Համաշխարհային Բանկի Պարտադրված Վերաբնակեցման Քաղաքականության համեմատությունը

Աղյուսակ 15 ՀՀ օրենքների և ՀԲ-ի ԳՁ 4.12 համեմատությունը

Համեմատվող կատեգորիան	Հայաստանի օրենքներ և նորմեր	Համաշխարհային Բանկի ոչ կամավոր վերաբնակեցում ԳՁ 4.12	Կիրառող համակարգը
Ազդեցությունը փոխհատուցվում է	Փոխհատուցում են ստանում միայն հողի սեփականության օրինական իրավունք ունեցող հողատերերը	Հողի ոչ կամավոր ձեռք բերման կատարման արդյունքում՝ (i) ապաստարանի տեղափոխման կամ կորստի դեպքում, (ii) ակտիվների կորստի կամ մուտքի բացակայության ընթացքում, (iii) եկատրի աղբյուրների կամ ապրուստի միջոցների կորստի, անկախ նրանից, թե տուժած անձինք պետք է տեղափոխվեն մեկ այլ վայր, կամ բ) տեղահանված անձանց ապրուստի վրա անբարենպաստ ազդեցության ենթարկված օրինական ճանապարհով սահմանված այգիների և պահպանվող տարածքների մուտքի անհարկի սահմանափակումը:	ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12
Հողամասի փոխհատուցման իրավունքը	Փոխհատուցում են ստանում միայն հողի սեփականության օրինական իրավունք ունեցող հողատերերը	Իրավական սեփականատերերը և իրավասու ԱԵԱ-երը փոխհատուցում են ստանում կորցրած հողի համար: Ոչ իրավասու ԱԵԱ-երին տրամադրվում են վերաբնակեցման օժանդակություն զբաղեցրած հողամասի համար փոխարեն	ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12
Հողամասից բացի այլ ակտիվների կորստի փոխհատուցման իրավունք	Միայն օրինական սեփականատերեն իրավունք ունեն հողից բացի այլ ապրուստի միջոցների կորստի դեպքում:	Միայն օրինական սեփականատերերը, օրինականացման ենթակա և օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-երն են հողից բացի այլ ապրուստի միջոցների կորստի դեպքում: փոխհատուցում ստանում :	ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12
Մշակաբույսերի կորստի փոխհատուցման իրավունք	Մշակաբույսերի կորստի փոխհատուցում սահմանված չէ:	Միայն օրինական սեփականատերերը, օրինականացման ենթակա և օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-երն են հողից բացի այլ ապրուստի միջոցների կորստի դեպքում: փոխհատուցում ստանում :	ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12
Ակտիվի/ հողի գնահատման մեթոդը:	Հողի գնատահատման արժեքը կազմվում է գործող շուկա-յական արժեքին գումարած գնահատված արժեքի 15%-ը (բոլոր հարկերն ու գրանցման ծախսերը ներառյալ):	Գյուղատնտեսական հողերի համար դա նախքան ծրագրի սկսելն ու տեղահանումը , որն ավելի բարձր է, հավասար արտադրողական ներուժով հողի շուկայական արժեքն է կամ ազդակիր տարածքի հարևանությամբ հողի օգտագործումը, ինչպես նաև հողի նախապատրաստման ծախսերը՝ գրանցման և տեղափոխման	Հայաստանի օրենսդրությունն է կիրառվում

Համեմատվող կատեգորիան	Հայաստանի օրենքներ և նորմեր	Համաշխարհային Բանկի ոչ կամավոր վերաբնակեցում ԳՁ 4.12	Կիրառող համակարգը
		վճարները ներառյալ: Զաղաքային հողակտորների համար այն նախքան տեղահանումը հավասար չափի հողակտորի կամ նրա օգտագործման շուկայական արժեքն, նման կամ բարելավված հանրային ենթակառուցների և ծառայությունների հետ որոնք գտնվում են ազդակիր տարածքների հարևանությամբ՝ գրանցման և տեղափոխման վճարները ներառյալ:	
Ակտիվների (տների և այլ կառույցների) գնահատման մեթոդ)	Անշարժ գույքի գնատահատման արժեքը կազմվում է գործող շուկայական արժեքի հիմքի վրա, գումարած գնահատված արժեքի 15%-ը (բոլոր հարկերն ու գրանցման ծախսերը ներառյալ):	Տների և այլ կառույցների համար շինանյութերի շուկայական արժեքն է փոխարինող կառուցի համար, այնպիսի տարածքում և որակի համեմատությամբ որն ավելի լավն է, քան ազդակիր տարածքում եղած կառույցը , կամ մասամբ տուժած կառույցի վերանորոգումը, ինչպես նաև շինանյութերի փոխադրման արժեքը շինհրապարակ, գումարած ցանկացած աշխատուժի և կապալառուի՝ ինչպես նաև գրանցման և տեղափոխման վճարները:	ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12
Հանրային քննարկումներ և Հրապարակումներ	Ազդեցության չափի/ գնահատման, իրավունքների վերականգնման, փոխհատուցման ծավալի և ֆինանսական աջակցության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի և տրամադրվի ԱԵԱ-երին, Գերակա Շահի վերաբերյալ Կառավարության Որոշումն ընդունելուց առաջ կամ Նախնական ուսումնասիրության ժամանակ:	Հանրային քննարկումների և հրապարակումների կազմակերպում ԱԵԱ-երի մասնակցությամբ համայնքային մակարդակով, ՀԶՀՇ պետք է մշակվի և կցվի սույն ՀՎԳԴ-ին: հետ:	Կիրառվում են թե ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12 , և թե ՀՀ Օրենսդրությունը
Կենսամակարդակի վերականգնում մինչև ծրագրի մակառոդակում	Եկամտի/ կենսապահովման վերականգնման միջոցառումների, խոցելի խմբերի և ԱԵԱ-ին նպաստներ կամ վերաբնակեցման ծախսերի վերաբերյալ դրույթներ չկան	Համաշխարհային Բանկը պահանջում է փոխհատուցում եկամտի/ապրուստի համար, ծանր կորուստների, և այն ծախսերի համար, որոնք ԱԵԱ-ին պատճառվել են վերաբնակեցման պատճառով:	ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12
Օդային զծի Անվտանգության Գոտու Բնակավայրի կատեգորիայի Հողերի փոխհատուցում	Օրենսդրությունը սահմանում է , որ օդային զիծը պետք է բնակավայրի սահմանի ԱԳ-ուց հեռավորության վրա լինի:	Այս հարցը չի կարգավորվում ՀԲ ուղեցույց ԳՁ 4.12	Հայաստանի օրենսդրությանը համապատասխանելու համար այն տարածքների համար, որտեղ հնարավոր չէ խուսափել բնակելի հողատարածքները հատելուց, ԲԵՑ-ն ստիպված կլինի ձեռք բերել հողերը կամ փոխել տուժած

Համեմատվող կատեգորիան	Հայաստանի օրենքներ և նորմեր	Համաշխարհային Բանկի ոչ կամավոր վերաբնակեցում ԳՁ 4.12	Կիրառող համակարգը
			տարածքների կատեգորիան գյուղատնտեսական կատեգորիա դարձնել եւ փոխհատուցել արժեքի կորստի համար:

6.3 Օրենսդրական բացերի վերլուծություն

87. ՀՀ օրենսդրական հայեցակարգի և ՀԲ ուղեցույցներ ԳՁ 4.12-ի միջև առկա հիմնական տարբերությունը վերաբերում է ազդեցության տակ գտնվող հողի և բնակելի հատվածների պարտադիր սեփականության կարգավիճակին, որն առկա է ՀՀ Օրենքում, այն դեպքում, երբ ՀԲ ուղեցույցներ ԳՁ 4.12 նախատեսում է փոխհատուցում և վերաբնակեցման աջակցություն, նույնիսկ եթե հողի սեփականության իրավունքը բացակայում է: Նախատեսված ծրագրի համար պետք է օգտագործվի ՀԲ ԳՁ 4.12 ուղեցույցը: Սա նշանակում է, որ եթե ԳՁ 4.12 ուղեցույցի պահանջները ավելի խիստ են, քան ՀՀ օրենսդրության պահանջները, ապա պետք է կիրառվեն ԳՁ 4.12 պահանջները: Ծրագրի իրականացման և վերահսկման փուլում առաջանում են մի շարք այլ խնդիրներ, քանի որ Հայաստանի օրենսդրական հայեցակարգը երբեմն անորոշ է և անհասկանալի: Բավական տարածայնություններ կան ՀՀ օրենքի կիրառման և ՀԲ ուղեցույցներ ԳՁ 4.12 անվտանգության միջոցառումների կիրառման միջև:

7. Իրավասության և Իրավունքների Շրջանակ Իրավասություն

7.1 Իրավասություն

88. Ծրագրի շրջանակներում փոխհատուցման և վերաբնակեցման երաշխիքներ ստացած ԱԵԱ են.

- Բոլոր ԱԵԱ, ովքեր կորցրել են օրինականացված հողատարածքներ կամ ուղղակի մշակվող հողեր, որոնք հնարավոր է սեփականաշնորհել կամ հողեր առանց իրավական կարգավիճակի,
- Սեփականատերեր և վարձակալներ, որոնք գրանցված չեն,
- Հողին կցված կառույցների, բույսերի, ծառերի կամ այլ օբյեկտների սեփականատերեր, և
- ԱԵԱ, ովքեր կորցրել են բիզնեսը, եկամուտը և աշխատավարձերը, հողի ժամանակավոր կամ մշտական ձեռքբերման հետևանքով:

89. Փոխհատուցման ենթակա ԱԵԱ ցուցակագրման վերջնաժամկետը համարվում է 2015թ-ի մարտի 10-ը, այն օրը, երբ մանրամասն մարդահամարը և կորուստների գույքագրումը սկսվեց: Ազդեցության տակ գտնվող վայրերում նոր բնակավայրի բարելավման կամ շինարարական բոլոր տեսակի գործողությունների իրականացումը վերջնաժամկետից հետո ենթակա չէ փոխհատուցման: Այնուամենայնիվ, ԱԵԱ կատանան անհրաժեշտ ծանուցագրեր և կպահանջվի նրանցից, որպեսզի լքեն իրենց սեփականությունները: ԱԵԱ հնարավորություն կունենան ապամոնտաժել վնասման ենթակա կառույցները նախքան ծրագրի իրականացումը, բայց նրանք ստիպված չեն լինի իրենց վրա վերցնել ապամոնտաժման բոլոր ծախսերը: Շինանյութը, որոնք ԱԵԱ ընտրել էին վերաօգտագործման համար, չի առգրավվի, և վերջիններս չեն ենթարկվի ոչ մի տույժ ու տուգանքի: Մնացած կառույցները կամ չօգտագործված նյութերը կապամոնտաժվեն իրականացնող ընկերության կողմից:

7.2 Իրավունքների շրջանակը

90. Հողատարածք, եկամուտ, տուն և այլ կառույցներ կորցրած ԱԵԱ կտրամադրվեն վերակառուցման համար դրամական նպաստներ, որոնք կընդգրկեն երկարաժամկետ կամ ժամանակավոր հողօգտագործման, շենքերի, մշակաբույսերի և ծառերի կորուստների համար տրամադրումները, տեղափոխման նպաստը, բիզնեսի կորստի համար դրամական միջոցները՝ հիմնվելով հարկային հայտարարագրերի և/կամ պաուշալ գների վրա: Ազդեցության բոլոր հնարավոր կատեգորիաների համար մանրամասն իրավունքներ են ներկայացված ծրագրի համար կազմված ՎԶՇ-ում: Այստեղ ներկայացված են այն միակ ազդեցությունները, որոնց ծրագիրը հանդիպել է կոնկրետ այս Հատվածում:

91. ԱԵԱ կարող են դասակարգվել հետևյալ երեք խմբերից մեկում.

(ա) **Օրինական սեփականատերեր**՝ նրանք են, ովքեր ունեն պաշտոնական օրինական իրավունքներ հողի նկատմամբ (ներառյալ սովորուբային իրավունքները երկրի օրենքների ներքո),

(բ) **Օրինականացման ենթակա ԱԵԱ**՝ նրանք են, ովքեր չունեն պաշտոնական օրինական իրավունքներ հողի նկատմամբ այն ժամանակ, երբ սկսվում է մարդահամարի անցկացումը, բայց պահանջ ունեն այսպիսի հողի կամ գույքի նկատմամբ, պայմանով, որ այսպիսի պահանջները ընդունվում են Հայաստանի Հանրապետության օրենքով կամ դառնում են ընդունելի ցանկացած օրինական քայլերի միջոցով, որոնք անհրաժեշտ են երաշխավորելու համար այս ծրագրի ներքո վերաբնակեցման գործողությունների արդյունավետ իրականացումը, ներառյալ, համապատասխան դեպքերում հողի նկատմամբ օրինական իրավունքի պահանջն ընդունելու գործընթացը, ներառյալ պահանջները, որոնք առաջանում են սովորուբային օրենքներից և ավանդական օգտագործումից:

(գ) **Օրինական իրավունք չունեցող**՝ նրանք են, ովքեր չունեն իրավական իրավունք կամ պահանջ այն հողի նկատմամբ, որը նրանք զբաղեցնում են:

7.2.1 Գյուղատնտեսական նշանակության հող

92. **Օրինական սեփականատերերը (մասնավոր) կփոխհատուցվեն** կամ (ա) կանխիկ շուկայական կամ կադաստրային արժեքին (երկուսից ամենաբարձրը) գումարած 15% դրամական օժանդակություն: Եթե չկա ակտիվ առքուվաճառք հողի շուկայում, ապա փոխհատուցման կանխիկ գումարը կկազմի ԱԵԱ կողմից ընդունված միևնույն գյուղում փոխհատուցված հողի արժեքը գումարած 15% դրամական օժանդակություն (բ) կամ կորցրած հողի դիմաց փոխարինված հողի/բերրիության գնահատված արժեքը, որն ընդունելի է ԱԵԱ համար: Հողի ոչ ուղղակիորեն վնասված հատվածները, որոնք դարձել են անմատչելի կամ մշակման և այլ տեսակի գործողությունների համար անկենսունակ, նույնպես կներառվեն վնասված հողերի շարքում: Եթե ԱԵԱ-ց գյուղատնտեսական նշանակության հողի վնասը կազմում է >10%, ԱԵԱ (հողատերերը, վարձակալները և կիսավարձակալ գյուղացիները) կստանան լրացուցիչ զգալի ազդեցության դրամական օժանդակություն: Փոխհատուցումը ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից: Օրինականացման ենթակա ԱԵԱ-ց կաջակցվի ՎԳՊ-ի իրականացման գործընթացի ընթացքում, և նրանք կստանան ամբողջական փոխհատուցում, հենց որ գույքի նկատմամբ իրավունքը գրանցվի Պետական Կադաստրում:

7.2.2 Պետական և համայնքային հողեր

93. Պետական և համայնքային / քաղաքային հողերը օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն և միայն երբ համայնքները փոխել են հողերի կատեգորիան էներգետիկ, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների կատեգորիայի: ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հողերը օտարվում են էներգետիկ, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքի կատեգորիաների հողամասերի կադաստրային արժեքով: Պետական և համայնքային հողերի կատեգորիայից եթե ԱԵԱ օգտագործում է համայնքային կամ պետական հողամաս, ապա վերջինս կհամարվի Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ

կամ վարձակալ և համապատասխանաբար կփոխհատուցվի: Դրանից հետո միայն հողամասը կօտարվի սույն դրույթին համապատասխան:

7.2.3 Այլ փոխհատուցումներ և դրամական օժանդակություն

94. **Մշակաբույսեր՝** կանխիկ փոխհատուցում մեկ տարվա բերքի շուկայական գնին համարժեք չափով և տարեկան բերքատվությամբ: Փոխհատուցումը կվճարվի և սեփականատերերին, և վարձակալներին՝ ելնելով իրենց վարձակալության պայմանագրերից:

95. **Ծառեր՝** Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում պետական կամ համայնային ծառերի դեպքում:

96. **Դրամական աջակցություն ՀՀԳԴ-ի իրականացման հետ կապված փաստաթղթերի վճարների փոխհատուցման համար՝** ԱԵԱ կստանան հետևյալ ֆինանսական աջակցությունը՝ (ա) լիազորագրի համար ծախսերը/վճարները (տրամադրված արտերկրից/այստեղից), (բ) ազգային անձնագրի (նույնականացման քարտի) նորացման հետ կապված ծախսերը/վճարները, այն դեպքում, եթե ժամկետը լրացել է, (գ) ժառանգության ճանաչման հետ կապված ծախսերը/վճարները, (դ) գործարքային հարկերը և հողի ձեռքբերման հետ կապված վճարները կկատարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մի մաս:

97. **Վերականգնման դրամական աջակցություն՝** խոցելի խմբերը (ԱԵԱ , ովքեր աղքատության շեմից ցածր են, այրիներից և ծերերից բաղկացած տնտեսություններ են) կստանան նվազագույն աշխատավարձի 6 ամսվա չափով վերականգնման դրամական աջակցություն՝ ամսական 50 000 ՀՀ դրամ (համարժեք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 6 ամսվա մինիմալ աշխատավարձին) և ծրագրի հետ կապված գործընթացներում աշխատանքի ընդունվելու հնարավորություն:

98. **Խոցելի խմբերի ներկայացուցիչներ համարվում են՝**

(1) Աղքատ տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՄՀՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:

(2) Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա:

(3) Թոշակառուներից, տարեցներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա:

7.3 Տերմինների աղյուսակ

99. Ստորև ներկայացված է Ծրագրի հատուկ տերմինների աղյուսակը: Այն արտացոլում է իրավասությունն ու իրավունքները, որոնք սահմանվել են հենց այս գծի հատվածի համար:

Աղյուսակ 16 ՎԳԴ-ի հատուկ տերմինների աղյուսակ

ԱԵԱ կատեգորիան	Ազդեցության կատեգորիան	Փոխհատուցում
----------------	------------------------	--------------

ԱԵԱ կատեգորի ան	<u>Ազդեցու թյան կատեգորի ան</u>	Փոխհատուցում
Օրինական սեփականա -տերեր	Գյուղատնտ եսական նշանակությ ան հող	<p>(i) կանխիկ փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ամենաբարձրը կլինի)՝ գումարած 15% դրամական նպաստ, կամ</p> <p>ii) նույն համայնքում ԱԵԱ համար ընդունելի հողամասի տեղափոխում գումարած 15% դրամական նպաստ, ըստ ՀՀ օրենքի, կամ</p> <p>(iii) նույն համայնքում ԱԵԱ համար ընդունելի արժեքով/արտադրողականությամբ հավասարագոր բերքատու հողակտորի տրամադրում:</p> <p>Հողամասի ոչ անմիջականորեն վնասված հատվածները, որոնք մշակման համար այլևս կենսունակ չեն, ազդեցության գնահատումից հետո, կընդգրկվեն ազդեցության ենթարկված հողերի ցանկում:</p> <p>Փոխհատուցումն ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից:</p>
Բոլոր տիպի ԱԵԱ-րը անկախ նրանց իրավական կարգավիճա կի	Մշակաբույս եր	Դրամական փոխհատուցումը կսահմանվի բերքի մեկ տարվա շուկայական արժեքի համարժեք չափով: Բերքի փոխհատուցումը կվճարվի և սեփականատերերին, և վարձակալներին՝ հաշվի առնելով վերջինների անհատական հողօգտագործման պայմանագրերը:
Բոլոր տիպի ԱԵԱ-ք, անկախ նրանց իրավական կարգավիճա կի	Ծառեր	Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում՝ պետական կամ համայնային ծառերի դեպքում:
Բոլոր տիպի ԱԵԱ-ք, անկախ նրանց իրավական կարգավիճա կի	Ցանկացած գույք և կառուցվածք ներ	<p><u>ԱԵԱ կտանան հետևյալ ֆինանսական աջակցությունը՝</u> Լիազորագրի համար ծախսերը/վճարները (տրամադրված արտերկրից/այստեղից), Ազգային անձնագրի (տույնականացման քարտի) նորացման հետ կապված ծախսերը/վճարները, այն դեպքում, եթե ժամկետը լրացել է, Ժառանգության ճանաչման հետ կապված ծախսերը/վճարները, Գործարքային հարկերը և հողի ձեռքբերման հետ կապված վճարները կկատարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մի մաս:</p>
Պետական/ համայնքայի և/ քաղաքային	Հողատարա ծք	Այն դեպքերում, երբ օրինական սեփականատերը պետությունը/համայնքն է (գյուղ, քաղաք կամ ՀՀ), հողերը կօտարվեն այն գնով, որը համարժեք է էներգետիկ, տրանսպորտային, հաղորդակցման, կոմունալ ենթակառուցվածքային կատեգորիա ունեցող հողերի կադաստրային գնին: Պետական և համայնքային հողերի կատեգորիաները փոխելու հետ կապված ծախսերը կվճարվեն ԲԷՑ-ի կողմից:
Չգալի կորուստներ ի դրամական աջակցությո ւն		Ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին՝ գյուղատնտեսական եկամտի 10% կորստի դեպքում կտրվի ծանր վնասների դրամական աջակցություն գյուղատնտեսական եկամտի կորստի դիմաց, որը համարժեք կլինի կորցրած հողի տարեկան բերքի շուկայական արժեքին:

ԱԵԱ կատեգորի ան	<u>Ազդեցությ ան</u> <u>կատեգորի ան</u>	Փոխհատուցում
Փոխհատուցո ւմ խոցելի SS- ների համար	Ցանկացած գույք	Ի լրումն այս աղյուսակում նկարագրված իրավունքների, խոցելի խմբերը (ԱԵԱ, ուլթեր աղքատության շեմից ցածր են, այրիներից և ծերերից բաղկացած տնտեսություններ են) կստանան նվազագույն աշխատավարձի 6 ամսվա չափով վերականգնողական դրամական աջակցություն ամսական 50000 ՀՀ դրամ (համարժեք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 6 ամսվա միևնույն աշխատավարձին):

7.4 Վնասված գույքի գնահատում

100. ՀՎԳՊ-ի իրականացման ընթացքում Կապալառուն (ԿՊԹԼ) ընդգրկել է իրագել և տեղեկացված/լիցենզավորված գնահատող, ով պատասխանատու է ազդեցության ենթարկված գույքի տեղափոխման արժեքը որոշելու հարցում: Գնահատման գործընթացի ընթացքում ԱԵԱ, ՏՄ-ի և համապատասխան պետական գրասենյակներին (օրինակ ԱԳԿՊԿ ՀՀ Կառավարության ներքո) խորհրդատվություն է տրամադրվել: Գնահատումն իրականացվել է ՀՀ Գնահատման օրենքի և ՀՀ Գնահատման նորմերի շրջանակներում, ինչպես նաև ըստ Ծրագրի ՎԶԾ-ի պահանջների: Որտեղ ներպետական օրենքը չի համապատասխանել փոխհատուցման ստանդարտներին վերաբնակեցման ամբողջական արժեքով, կիրառվել են վերաբնակեցման արժեքի փոխհատուցման համար ՀԲ-ի քաղաքականությունը, ուղեցույցները և տեխնիկական պահանջները: Հավելված 6-ում ներկայացված են Գնահատող ընկերության կողմից կիրառված միավոր գների գնահատման մանրամասն մեթոդաբանությունը այս ՀՎԳՊ-ի համար:

101. ԱԵԱ վճարման ենթակա վերաբնակեցման ծախսերը որոշելիս գույքի մաշվածությունը և պիտանի կյուլերի արժեքը հաշվի չի առնվել, ոչ էլ ազդակիր գույքի գնահատումից հանված ծրագրից ստացվելիք շահույթների արժեքը:

102. Ինչ վերաբերում է մասնավոր հողերին, տեղափոխման արժեքը (հողի համար շուկայական գինը՝ գումարած ցանկացած գրանցման վճարները կամ հարկերը) որոշվել է՝ հիմնվելով համեմատության մեթոդի վրա, ըստ ՀՀ Գնահատման Ստանդարտի: Երբ հողի շուկայական գինը ավելի ցածր էր, քան կադաստրային արժեքը, կադաստրային արժեքը պետք է հիմք հանդիսանա փոխհատուցման համար: Այնուամենայնիվ, այսպիսի դեպք չկար այդ ՀՎԳՊ-ում: Ինչ վերաբերում է համայնքային և պետական հողերին, կադաստրային արժեքը հաշվարկվել է յուրաքանչյուր ազդակիր հողատարածքի համար:

103. Հողում առկա տարեկան մշակաբույսերը գնահատվել են զուտ տարեկան շուկայական արժեքով մեկ տարվա մշակաբույսի համար: Ազդակիր հասուն ծառերը գնահատվել են՝ հիմնվելով իրենց տարեկան եկամտաբերությանն շուկայական գնի վրա յուր. 1կգ համար և տարիների քանակով պտղաբերության մակարդակի հասելու համար: Մատուցած ծառերը գնահատվել են ըստ շուկայական գնի յուրաքանչյուր տնկիի համար:

104. Անշարժ գույքի գնահատումից հետո գնահատողը պատրաստում է հաշվետվություն անշարժ գույքի գնահատման համար: Օրենքը նշում է հաշվետվության պարտադիր ծավալը, անշարժ գույքի նկատմամբ սեփականությունը և այլ իրավունքները, դրա քանակական և որակական նկարագրությունը, անշարժ գույքի գնահատման մեթոդները, նպատակները և անշարժ գույքի գնահատումը, այս կոնկրետ գնահատման գործընթացով կարգավորվող իրավական ակտերի վկայակոչումները, գնահատողի պահվածքի պահանջները: Այն դեպքում, եթե ԱԵԱ-ք համաձայն չեն հաշվետվության հետ, նրանք կարող են հարցերը կամ բողոքներն ուղղել Պետական Կադաստրին: Վեճերի դեպքում խնդիրը կարող է լուծվել դատական կարգով:

8. Վերաբնակեցման բյուջեն

8.1 Ներածություն

105. Այս բաժինը նկարագրում է մեթոդաբանությունը, որն ընդունվել է միավոր գները, հողի ձեռքբերման ծախսը և փոխհատուցումը որոշելու համար, որը պետք է վճարվի ԱԵԱ Հատվածի պատճառով վերաբնակեցման ազդեցությունների համար: Այս գլխում ներկայացված տարբեր կատեգորայի ԱԵԱ փոխհատուցման վճարումները որոշվել են, համաձայն ՎԵՇ¹⁷-ում (սեպտեմբեր, 2014թ.) ընդունված սկզբունքների: Փոխհատուցման չափը որոշվել է լիցենզավորված անկախ գնահատողի կողմից՝ օգտագործելով Հավելված 6-ում նկարագրված թափանցիկ մեթոդաբանությունը: Գնահատման մեթոդաբանությունը հիմնված է ՀՀ Անշարժ Գույքի Գնահատման օրենքի, ՀՀ Անշարժ Գույքի Գնահատման Ստանդարտների և ՎԵՇ-ի վրա: Նոր ավելացրած հողերի համար գնահատողը կատարել է գնահատում 2015 Դեկտեմբերին և 2016թ Օգոստոսին գները համահավասար են 2014¹⁸ թվականի գներին:

8.2 Աղբյուրների և դրամական միջոցների բաշխում

106. ՀՎԳՊ-ի իրականացման ծախսերը, ներառյալ փոխհատուցումները և դրամական աջակցությունները, ինչպես նաև չնախատեսված, գրանցման և վարչարարական ծախսերը կֆինանսավորվեն ՀԲ-ի կողմից տրամադրվելիք վարկով: ԲԵՑ-ը այն կստանա ենթավարկից ՀՀ Կառավարության կողմից: ԲԵՑ-ը միջոցներ կձեռնարկի գումար ստանալ Ֆինանսների նախարարությունից, որն անհրաժեշտ է ՎԳՊ-ն իրականացնելու համար:

8.3 Փոխհատուցում հողի, մշակաբույսերի, ծառերի և այլ կորուստների դեպքում

8.3.1 Գնահատման և փոխհատուցման հաշվարկային մոտեցումը

107. Համաձայն ՎԵՇ-ի, հողատերերը, վարձակալները, հողօգտագործողները, որոնք ենթակա են օրինականացման, ինչպես նաև չգրանցված հողօգտագործողները իրավասու են ստանալ փոխհատուցում կամ դրամական աջակցություն: Փոխհատուցման/դրամական աջակցության հաշվարկի մանրամասները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 17 Փոխհատուցում/ վերականգնման նպատակով դրամական աջակցություն գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական հողերի համար

Սեփական հողեր Վերականգնման ծախս +15%	Համայնքային պետական հողեր Կադաստրային գնահատում	Օրինականացման ենթակա հողօգտագործող Վերականգնման ծախս+15% (օրինականացումից հետո)
Վարձակալներ վարձակալության մնացած տարիների համար		
Մինչև 1 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.05		
Մինչև 15 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.14		
Մինչև 25 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.20		
25 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.25		

¹⁷ ՎԵՇ- ն պատրաստվել և հավանության է արժանացել Համաշխարհային բանկի կողմից 2014 թ. Սեպտեմբերին «Հրազդան ից Շինուհայր» միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագիր և հետագայում՝ հաշվի առնելով ձեռք բերված փորձը և Նոր նախագծի առանձնահատկությունները, ինչպես նաև Նոր նախագծի առանձնահատկությունները, վերջինս թարմացվել և հաստատվել է 2017 թ. Լավվար եւ Նոյեմբերյան 110 կՎ գծերի փոխարինման ծրագրի համար:

¹⁸ Նախքան փոխհատուցման վճարումը Լիցենզավորված Գնահատման Խորհրդատուն կտրամադրի հողում այն մասին, թե արդյոք եղել է նշանակալի գնած, որն ազդել է ակտիվների գնահատման վրա՝ վերջնաժամկետի ժամանակ: Եթե այո, ապա ակտիվները կվերագնահատվեն, իսկ ՎԳՊ-ն կթարմացվի (անհրաժեշտության դեպքում):

108. Սեփական/վարձակալած հողերի փոխհատուցման հաշվարկման համար հիմք է հանդիսացել հողի շուկայական գինը: Հողի շուկայական արժեք գնահատվել է՝ օգտագործելով համեմատության գնահատման մեթոդը: Համեմատության մեթոդը¹⁹ հիմնված է նմանատիպ հողերի (ամնվազն երեք վաճառքի օրինակներ) վաճառքի վերաբերյալ հուսալի շուկայական տեղեկատվության վրա: Հիմնվելով այս մեթոդի վրա՝ որոշվել է վերջին շրջանում վաճառված հողերի ճշգրտված միջին վաճառքի գինը (նույն տարածքում և նույն/նմանատիպ կիրառման նպատակով/բնույթով: Յուրաքանչյուր հողի գինը որոշվում է առանձին, քանի որ շատ գործոններ են ազդում հողի գնի տարբերության վրա, նույնիսկ ճշգրտված հողատարածքի համար: (Մանրամասն գնահատման մեթոդաբանությունը տես Հավելված 6-ում)

8.3.2 Փոխհատուցում մասնավոր հողատարածքների կորստի համար

109. Փոխհատուցումը, որը պետք է վճարվի մասնավոր հողերի կորստի համար, հաշվարկվել է վերականգնման հաշվարկով՝ գումարած լրացուցիչ 15%, որը Գերակա Շահ ճանաչելու վերաբերյալ ՀՀ օրենքի համաձայն է: Միջին միավոր գինը մասնավոր վարելահողի համար տարբեր է այս մարզերում (Վայոց Ձորի մարզ և Սյունիքի մարզ), ինչպես նաև տարբեր է գյուղատնտեսական և բնակելի կատեգորիայի հողերի համար (վկայակոչում՝ աղյուսակ 18): Փոխհատուցման համար ընդհանուր գումարը սեփական հողերի համար միայն, ինչպես ներկայացված է Աղյուսակ 18-ում, կազմում է **9,460,474 ՀՀ դրամ**:

Աղյուսակ 18 Փոխհատուցում մասնավոր հողերի կորստի համար

Հողի սեփականության կարգավիճակ	Մարզ	Հողի կատեգորիան	Ազդակիր հող		Միավոր գին	Ամբողջ հողի արժեքը	Հողի ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ 15%)
			No	մ2	ՀՀ դրամ/մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Մասնավոր հող	Վայոց Ձոր	Գյուղատնտեսական	44	10,938	229	2,504,802	2,880,522
	Սյունիքի մարզ	Գյուղատնտեսական	44	10,561	385	4,065,985	4,675,883
	Սյունիքի մարզ	Բնակավայրային	2	456	1,230	560,880	645,012
	Ընդհանուրը			90	21,955	-	7,131,667
Առանց պետական գրանցման հող	Գեղարքունիքի մարզ	Գյուղատնտեսական	6	1,613	229	369,377	424,783
	Վայոց Ձորի մարզ	Գյուղատնտեսական	9	1884.30	385	725,456	834,274
	Վայոց Ձորի մարզ**	Գյուղատնտեսական	2	335	1770	0	0
	Ընդհանուրը			17	3,832.30	-	1,094,833
Ընդամենը			107	25,787.30	-	8,226,500	9,460,474

* Նշում՝ մասնավոր և առանց գրանցման հողատարածքների համար աղյուսակը կազմված է միավոր գնի աճման կարգով:
 **Նշում՝ Վայոց Ձոր մարզի երկու գրանցում չունեցող համայնքային հողերի փոխհատուցումը ընդգրկված չէ բյուջեում:

8.3.2 Հողի վնասների փոխհատուցում

110. Անհատական հողի վնասների համար վճարման ենթակա փոխհատուցումը հաշվարկվել է փոխարինման արժեքի գումարած 15% -ի չափով, որը համապատասխանում է «Գերակա շահի մասին» ՀՀ օրենքին: Գյուղատնտեսական նշանակության հողերի միավորի գինը տարբերվում է մարզից մարզից (Վայոց Ձոր ընդդեմ Սյունիքի) եւ տարբերվում է նաեւ գյուղատնտեսական և բնակավայրերի հողերի համար (տես՝ Աղյուսակ 18): Մասնակի սեփականությունն հանդիսացող հողամասերի փոխհատուցման ընդհանուր արժեքը, ինչպես ցույց է տրված Աղյուսակ 18-ում, կազմում է 9,460,474 դրամ:

¹⁹ Անշարժ Գույքի Գնահատման վերաբերյալ ՀՀ օրենք, հոդված 11

Աղյուսակ 18. Հողի փոխհատուցում մասնավոր հողի կորստի համար

Հողի սեփականության կարգավիճակ	Մարզ	Հողի կատեգորիա	Ազդակիր հողատարածք		Միավորի արժեքը	Ընդհանուր հողի արժեքը	Ընդհանուր հողի փոխհատուցում (ներառյալ 15%)
			No	m2			
Մասնավոր հողատարածք	Սյունիք	Գյուղատնտեսական	44	10,938	229	2,504,802	2,880,522
	Վայոց Ձոր	Գյուղատնտեսական	44	10,561	385	4,065,985	4,675,883
	Սյունիք	Գյուղատնտեսական	2	456	1,230	560,880	645,012
Ընդամենը			90	21,955	-	7,131,667	8,201,417
Առանց գրանցման հողատարածք	Սյունիք	Գյուղատնտեսական	6	1,613	229	369,377	424,783
	Վայոց Ձոր	Գյուղատնտեսական	9	1884.30	385	725,456	834,274
	Վայոց Ձոր**	Գյուղատնտեսական	2	335	1770	0	
	Ընդամենը			17	3,832.30	-	1,094,833
	Վայոց Ձոր	Գյուղատնտեսական					
Ընդամենը			107	25,787.30	-	8,226,500	9,460,474

* *Նշում` ինչպես մասնավոր, այնպես էլ չգրանցված հողերի համար աղյուսակը կազմաված է միավորի գների աճման կարգով*

** *Ճանաչություն. Վայոց Ձորի երկու հողատարածքներ առանց գրանցման,`համայնքային հողատարածքը և դրա փոխհատուցումը ներառված չէ բյուջեում:**

111. ՀՀ հողային օրենսգրքի 66 հոդվածի 2 մասի համաձայն, հողերը կօտարվեն «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» կատեգորիայի հողերի կադաստրային արժեքով: Պետական և համայնքային հողերի ձեռք բերման (ներառյալ հողի արժեքը) հետ կապված ծախսերը կվճարվեն ԲԷՑ կողմից` կազմակերպության սեփական միջոցներից

Table 18.1 Համայնքային և պետական հողերի ձեռք բերման բյուջե

n/n	Համայնք	Համայնքային հող		Պետական հող		Ընդամենը		Միավորի արժեքը* ՀՀ Դրամ/մ²	Հողի ընդհանուր արժեքը ՀՀ Դրամ
		Հողակտոր(N)	տարածք(M2)	Հողակտոր(N)	տարածք(M2)	Հողակտոր(N)	տարածք(M2)		
1	Եղեգնաձոր	6	1471	0	0	6	1 471	1242	1 826 982
2	Ագարակաձոր	8	1280	0	0	8	1 280	342	437 760
3	Մալիշկա	14	3910	0	0	14	3 910	528	2 064 480
4	Արին	30	7916	1	324	31	8 240	96	791 040
5	Գնդեվազ	14	4231	0	0	14	4 231	222	939 282
6	Սարավան	31	9004	0	0	31	9 004	144	1 296 576
7	Գորայք	21	5478	0	0	21	5 478	144	788 832
8	Ծղուկ	18	4442	1	324	19	4 766	144	686 304
9	Սառնակուկ	3	730	0	0	3	730	144	105 120
10	Սպանդար	3	439	0	0	3	439	144	63 216

	յան								
11	Շաղատ	1	604	0	0	1	604	144	86 976
12	Անգեղակոթ	18	4697	0	0	18	4 697	342	1 606 374
	Ընդամենը	167	44 202	2	648	169	44 850		10 692 942

112. Հողերի ձեռք բերման ընդհանուր բյուջեն (Ներառյալ համայնքային / պետական հողերը) կազմում է **20 153 416 դրամ**

8.3.3 Փոխհատուցում մշակաբույսերի համար

113. Մշակաբույսերի համար փոխհատուցումը կվճարվի կանխիկ շուկայական գնով, այսինքն յուրաքանչյուր 1մ² ազդակիր մշակաբույսերի համար նախատեսված գնով: Միավոր գները որոշվել են՝ հիմնվելով 2014թ-ի ընթացքում հիմնական մշակաբույսերի բերքի և գների վրա: Մշակաբույսերի համար ընդհանուր փոխհատուցումը կազմում է **472,557** ՀՀ դրամ (վկայակոչում՝ աղյուսակ 20.1):

Աղյուսակ 20.1 Փոխհատուցում մշակաբույսերի համար

Մշակաբույսի տեսակը	Ազդակիր տարածքը (մ2)	Գինը յուր կգ համար (ՀՀ դրամ)	Փոխհատուցման ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)
	1	2	3
Ցորեն	3,975	54,0	214,650
Առվույտ/յուղա	1,970	21.9	43,143
Խոտ, որպես անասնակեր	82	21.9	1,796
Վարսակ	273	54,0	14,742
Կորնզան	1,789	42,0	75,138
Հաճար	1,570	78.4	123,088
Ընդհանուրը	9,659	-	472,557

8.3.4 Փոխհատուցում ծառերի համար

114. Այս հատվածում կան ազդեցության ենթարկված տնկիներ և հասուն ծառեր: Տնկիների համար փոխհատուցումը կվճարվի կանխիկ շուկայական գնով, այսինքն 1 տնկիի գնով (վկայակոչում՝ աղյուսակ 20.2): Հասուն ոչ մրգատու ծառերի համար փոխհատուցումը կվճարվի առձեռն մեկ ծառի համար որոշված գնով յուրաքանչյուր հասուն ոչ մրգատու ծառի համար (վկայակոչում՝ աղյուսակ 20.3): Հասուն մրգատու ծառերի համար փոխհատուցումը կվճարվի առձեռն՝ հիմնվելով տարեկան բերքի վրա (ծավալը կգ-ով), հաշվելով միավոր գինը յուրաքանչյուր 1կգ բերքի և տարիների քանակի համար, մինչև ծառը դառնա բերքատու (վկայակոչում՝ աղյուսակ 20.4): Ծառերի համար ընդհանուր փոխհատուցումը կազմում է **9,793,855** ՀՀ դրամ:

Աղյուսակ 20.2 Փոխհատուցում տնկիների համար

Տեսակը	Սածիլների արժեքը	Ծառեր	Ընդհանուր փոխհատուցումը
	ՀՀ դրամ/ծառ	No	ՀՀ դրամ

Խնձորենու տնկի	1,000	1	1,000
Տանձենու տնկի	1,500	1	1,500
Ծիրանենու տնկի	1,590	1	1,590
Ընդհանուրը		3	4,090

Աղյուսակ 20.3 Փոխհատուցում հասուն ոչ բերքատու ծառերի համար

Տեսակը	Յուր ծառի համար միավոր արժեքը	Ազդակիր ծառեր	Փոխհատուցումը
	ՀՀ դրամ	No	ՀՀ դրամ
Դեղձենի	2,674	4	10,696
Խնձորենի	8,510	6	51,060
Սերկեֆիլ	10,110	2	20,220
Ընդհանուրը	-	13	84,650

Աղյուսակ 20.4. Փոխհատուցում հասուն բերքատու ծառերի համար

Տեսակը	Տարեկան բերք	Միավոր արժեքը	Տարիները բերքատվության մակարդակի վերաճեցնելու և համար	Յուր ծառի համար միավոր արժեքը	Ազդակիր ծառեր	Ընդհանուր փոխհատուցումը
	կգ	ՀՀ դրամ/կգ	No	ՀՀ դրամ	No	ՀՀ դրամ
Դեղձենի	40	327.00	3	39,240	6	235,440
Խաղողի տնկի	25	321.50	4	32,150	171	5497650
Ծիրանենի	80	374.75	6	179,880	20	3,597,600
Կարագանա*	-	-	-	2,310	1	2,310
Մասրենի	5	300.00	3	4,500	5	22,500
Լշենի	15	1,000.00	5	75,000	2	150,000
Սերկեֆիլ	25	824.10	6	123,615	1	123,615
Սզկի (ալոճենի)	5	280.00	5	7,000	4	28,000
Փշարմավ	10	600.00	4	24,000	2	48,000
Ընդհանուրը	-	-	-	-	212	9,705,115

* Կարագանան օգտագործվում է միայն որպես փայտանյութ:

8. 3. 5 Զգալի ազդեցության համար դրամական աջակցություն

115. Ըստ ՎԶԸ-ի, ՏՏ-ները, որոնք կորցնում են իրենց գյուղատնտեսական հողի ավելի քան 10%, կստանան զգալի ազդեցության համար դրամական աջակցություն գյուղատնտեսական եկամտի կորստի համար, որը համարժեք կլինի կորցրած հողի տարեկան բերքի շուկայական արժեքին: Ծրագրի այս Հատվածում զգալի ազդեցության կենթարկվեն **8** հողատարածքներ, որից **5**-ում կլինի ամբողջի, ցորենի և կորնգանի կորուստ և **3** հողատարածքներում կլինի ընդհանուր առմամբ **74** հասուն ծառերի՝ խաղողի, դեղձենու, սզկի, փշարմավի, մասրենու և կարագանայի կորուստ: Այս կորուստների համար դրամական աջակցության մանրամասն հաշվարկները ներկայացված են Աղյուսակ 21.1-ում և

համապատասխանաբար Աղյուսակ 21.2-ում: Ընդհանուր առմամբ, ազդակիր մշակաբույսերի և ծառերի համար զգալի ազդեցության դրամական աջակցությունը կկազմի **837,984** ՀՀ դրամ (մշակաբույսերի համար **63,274** և ծառերի համար **774,710** ՀՀ դրամ):

Աղյուսակ 21.1. Դրամական աջակցությունն եկամուտ բերող ունեցվածքի վրա խիստ ազդեցության համար՝ մշակաբույսեր

n/n	Համայնք	Վայր	Կադաստր-ային կոդ	10% կամ ավել կորուստ	Մշակաբույսի տեսակը	Ազդակիր տարածք (մ ²)	Գինը մշակաբույսի յուր. մ ² համար (ՀՀ դրամ)	Մշակաբույսերի համարական աջակցության ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	SS	խոցելիության կարգավիճակը
	Ագարակաձոր	14	10-004-0120-0008	10.03	ցորեն	324	54	17,496	1	
1	Ագարակաձոր	17	10-004-0116-0004	11.56	ցորեն	416	54	22,464	2	1 աղքատ
2	Ագարակաձոր	21	10-004-0129-0017	10.89	առվույտ	403	22	8,866	1	
3	Մալիշկա	40	10-032-0221-0449	12.70	առվույտ	315	22	6,930	4	1 աղքատ
4	Մալիշկա	52	10-032-0225-0078	13,16	կորնգալ	179	42	7,518	1	1 աղքատ
	Ընդհանուր	-	5 հողեր	-	-	1,637		63,274	9	3 աղքատ

Աղյուսակ 21.2. Դրամական աջակցությունն եկամուտ բերող ունեցվածքի վրա խիստ ազդեցության համար՝ ծառեր

n/n	Համայնք	Վայր	Կադաստրային կոդ	10% կամ ավել կորուստ	Ծառերի տեսակը	Տարեկան բերքատվությունը (կգ)	Միավոր արժեքը (ՀՀ դրամ/կգ)	Ծառերի քանակը	Ծառերի համարական աջակցության ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	SS
1	Մալիշկա	41	10-032-0254-0008	17.44	Խաղող հատուն բերքատու	25	321.50	60	482,250	2
					Սզնի հատուն բերքատու	5	280.00	4	5,600	
					Փշարմավ հատուն բերքատու	10	280.00	2	5,600	
					Մասրենի հատուն բերքատու	5	300.00	4	6,000	
2	Մալիշկա	42	10-032-0221-0465	22,74	Ծիրանենի հատուն բերքատու	80	374.75	2	59,960	1
	Մալիշկա	36	10-032-0251-0008	13.03	Ծիրանենի հատուն բերքատու	80	374.75	5	149,900	1

					Դեղձենի հատուն բերքատու	40	327.00	5	65400	
	Ընդհանուրը	-	-		-	-	-	84	774,710	4

8. 3. 6 Դրամական աջակցություն խոցելի խմբերին

116. Լրացուցիչ դրամական աջակցություն է նախատեսվել խոցելի խմբերի, մասնավորապես այն տնային տնտեսությունների համար, որտեղ կան կանաչք, տարեցներ, ինչպես նաև աղքատ տնային տնտեսությունների համար: Այսպիսի դրամական նպաստները համարժեք են 6 ամսվա նվազագույն աշխատավարձին՝ 55,000²⁰ ՀՀ դրամ: Ի լրումն, այդ SS-ների ԱԵԱ կունենան աշխատանքով ապահովելու առաջնահերթություն Ծրագրի շրջանակում: Ընդհանուր դրամական նպաստները, որոնք պետք է հատկացվեն 27 խոցելի տնային տնտեսություններին, կազմում է **8,100,000** ՀՀ դրամ (վկայակոչում Աղյուսակ 22): Եթե ՎԳՊ-ի իրականացման ընթացքում SS-ները, որոնք համարվում են աղքատ, մարդահամարի անցկացման ընթացքում կգրանցվեն Ընտանեկան նպաստների Համակարգում և կդառնան իրավասու դրամական նպաստ ստանալու համար, նրանք կփոխհատուցվեն չնախատեսված ծախսերից:

Աղյուսակ 22 Դրամական աջակցություն սոցիալապես խոցելի խմբերին

խոցելիության կարգավիճակը	SS (N)	Աղքատության նպաստ	Ընդամենը
A. Աղքատ SS	16	300,000	4,800,000
B. Կանանց գլխավորությամբ SS	2	300,000	600,000
C. Տարեցների գլխավորությամբ SS	8	300,000	2,400,000
D. Կրկնակի խոցելիությամբ SS (աղքատ և կանանց գլխավորությամբ)	1	300,000	300,000
Ընդամենը	27		8,100,000

a. Գրանցման ծախսերը

117. ՎԶԾ-ի ներքո չեն լինի պահումներ (հանումներ) ԱԵԱ-ց վճարված փոխհատուցումներից, և բոլոր պարտադիր վճարները և հարկերը լիովին կվճարվեն ԲԵՑ-ի կողմից: Ձեռքբերման պայմանագրերի ստորագրման և գույքերի վերազնահատման ընթացքում հատուկ պարտադիր վճարներ և հարկեր պետք է մուծվեն, համաձայն ՀՀ օրենքի: Բոլոր վճարները տարբեր գումարների պաուշալ գներն են՝ հիմնվելով հողի կատեգորիայի վրա: Հետևյալ վճարները և հարկերը պետք է մուծվեն, համաձայն ՀՀ օրենքի:

- Անշարժ գույքի գործակալությունում իրավունքների պետական գրանցման հետ կապված վճար՝ իրավունքի փոփոխություն²¹,
- Անշարժ գույքի գործակալության համատեղ վկայականի տրամադրման համար վճար²²
- Անշարժ գույքի²³ գրանցման և անշարժ գույքի օտարման պայմանագրերի²⁴ համար պետական տուրքեր,

²⁰ Հայաստանում նվազագույն աշխատավարձը 2015 թ.-ին փոխվել է, և այժմ 55 000 դրամ է, բայց քանի որ Ծրագրի համար ՎԶԾ- ն հաստատվել է 2014 թ. սեպտեմբերին և 38 տեղամասերի համար փոխհատուցումն արդեն վճարվել է, նոր տեղամասերի համար խոցելիության նպաստը հաշվարկվել է, հաշվի առնելով ՎԶԾ- ում (2014 թ. սեպտեմբերին

²¹ Իրավունքների պետական գրանցում կադաստրում

²² Նույն տեղում

²³ Պետական տուրքերի վերաբերյալ ակտ.

²⁴ Նույն տեղում

- Համայնքային և պետական հողերի համար կադաստրային տիպի փոխման համար պետական տուրքեր:

118. Եթե ձեռքբերման գործընթացի ընթացքում կիրառելի կլինեն որևէ լրացուցիչ ծախսեր գրանցման համար, որը հիմա չի կարող նախատեսված լինել, այն կվճարվի ՀՎԳՊ-ի բյուջեի չնախատեսված ծախսերից: Լրացուցիչ կանխիկացման գումարը հաշվարկվել է և կավելացվի ՀՎԳՊ-ին տրվելիք փոխհատուցման/դրամական միջոցների գումարին:

119. Ի պատասխան Հանրային Քննարկումների ժամանակ ԱԵԱ կողմից բարձրացված հարցերի, ԲԷՑ-ը վերանայել է ՎԶԾ-ն և կաջակցի ԱԵԱ Հայաստանից դուրս գտնվող սեփականատերերի համար նոտարական լիազորագրերի, ազգային անձնագրերի նորացման, ժառանգության գրանցման հարցում և ԱԵԱ կտրամադրի լրացուցիչ դրամական միջոցներ ՀՎԳՊ-ի իրականացման գործընթացի ընթացքում: Զանի որ յուրաքանչյուր դեպքը յուրահատուկ է, և պահանջվող վճարները կարող են լինել շատ տարբեր, միջին գումարն է վերցվել, որպես բյուջեի պլանավորման հիմք:

120. Ընդհանուր առմամբ, հողի ձեռքբերման համար գրանցման բյուջեն՝ իրավաբանական ծախսերը հողի ձեռքբերման համար կազմում է **11,573,500** ՀՀ դրամ:

Table 22.1: Մասնավոր հողի ձեռք բերման/գրանցման բյուջե

Փուլ	Վճար	Արժ Դրամ /հողակտոր
Հողի առանձնացում և ձեռք բերում	Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրքեր (2000x2, 2000 ՀՀ դրամ մեկ հողակտորի համար ը) *	4 000
	Մեկ միավոր սովորական լիազորագրի տրամադրման համար վարձավճար	500
	Անշարժ գույքի գրանցման համար պետական տուրք/հողի օտարման համար	1 000
	Ընդամենը մեկ հողատարածքի համար	5 500
	Ընդհանուր և մասնավոր չգրանցված հողակտորներ	107
	Ընդամենը	588 500

121. Պետական և համայնքային/մունիցիպալ հողերն օտարվում ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ Հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, և միայն համայնքների կողմից հողի կատեգորիան «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» (այսուհետ՝ Էներգետիկ կատեգորիա) կատեգորիայի փոխելուց հետո:

Աղյուսակ 22.2: Համայնքային հողերի ձեռք բերման գրանցման բյուջեն*

Փուլ	Վճար	Արժեքը (ՀՀ Դրամ/Հողակտոր)
Հողի առանձնացում	Անշարժ գույքի գրանցման և անշարժ գույքի օտարման պայմանագրերի համար պետական տուրքեր	1 000
	Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրք	2 000
Հողատեսքի փոփոխություն	Անշարժ գույքի գրանցման պետական վճարները և անշարժ գույքի օտարման պայմանագրերը	1 000
	Անշարժ գույքի գրանցման/ օտարման պայմանագրի պետական տուրք	25 000
Ձեռք բերում	Անշարժ գույքի միավորի միասնական վկայականի տրամադրման համար վճարը	10 000
	Անշարժ գույքի գրանցման եւ անշարժ գույքի օտարման պայմանագրերի պետական տուրքերը	1 000

	Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրք	25 000
	Ընդամենը մեկ հողակտոր համար	65 000
	Ընդամենը պետական/համայնքային հողակտորներ	169
	Ընդամենը	10 985 000

a. Բյուջեի ամփոփում

122. Այս Հատվածի համար ՀՎԳՊ-ի իրականացման ընդհանուր ծախսը կազմում է **68 916 670** ՀՀ դրամ, որը համարժեք է **143 278** ԱՄՆ դոլարին, ինչպես ներկայացված է հետևյալ աղյուսակում (Աղյուսակ 23):

Աղյուսակ 23 Բյուջեի ամփոփում

Միավոր	Գումար	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար*
1. Հողի փոխհատուցում (մասնավոր հողի համար)	9,460,474	19,668
2. Համայնքային պետական հողերի ձեռք բերման բյուջե	10 692 942	22 231
3. Փոխհատուցում մշակաբույսերի և ծառերի համար	10 266 412	21 344
4. Չգալի կորուստների համար փոխհատուցում	837,984	1740
5. Խոցելիության դրամական աջակցություն	8,100,000	16,840
6. Գրանցման (իրավաբանական) ծախսեր մասնավոր հողի ձեռքբերման համար	588 500	1223
7. Գրանցման (իրավաբանական) պետական համայնքային հողի ձեռքբերման համար	10 985 000	245
8. Կանխիկացման ծախս (փոխհատուցման դեպոզիտների 0.3%-ը) ԱԳ 1-5	118 073	245
9. Վարչական ծախսեր (20%) ԱԳ 1-8	10 209 877	21 226
10. Չնախատեսված ծախսեր (15%) ԱԳ 1-8	7 657 408	15 920
Ընդհանուր	68,916,670	143,278
Ծանուցում՝ ԱՄՆ դոլար փոխարժեք 24,10.2017թ-ի դրությամբ, 1ԱՄՆ դոլար = 481 ՀՀ դրամ		

Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման գործընթաց

9.1 Ներածություն

123. Այս գլխում նկարագրվում են նախապատրաստական քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն ՀՎԳՊ-ի իրականացման համար և հետագա գործողությունները երաշխավորելու համար ՎԳՊ-ի հաջող իրականացումը: Այս գլխի վերջում ներկայացված է իրականացման ժամանակացույցը համապատասխան պատասխանատու կազմակերպություններով:

9.2 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի նախապատրաստական աշխատանքները

124. ՀՎԳՊ-ի կազմման ընթացքում ԲԷՑ-ն արդեն հաջող կերպով ավարտին է հասցրել մի քանի առաջադրանքներ: Մինչ այժմ վերջնականացրած հիմնական նախապատրաստական առաջադրանքների առանձնահատկությունները հետևյալն են՝

- Վերջնական մանրամասն նախագծման ավարտում,
- Ազդակիր տարածքներում նախնական ուսումնասիրության վերաբերյալ ՀՀ Կառավարության Որոշման հաստատում,
- ԱԵԱ հետ Հանրային Զննարկումներ,
- 2014թ-ի օգոստոսի 11-ը որպես պաշտոնական վերջնաժամկետ սահմանելն ու հրապարակելը,
- Մանրամասն չափագրում, կորուստ կրած ունեցվածքի գույքագրում,
- Մարդահամարի անցկացում
- Գույքին հասցված վնասի գնահատում
- Գույքի նկարագրման արձանագրությունների կազմում և հրապարակում բոլոր ԱԵԱ , ըստ ՎԳ-ի ընթացակարգերի,
- Հանրային և պետական նպատակներով (Գերակա Շահ) ունեցվածքի օտարման վերաբերյալ ՀՀ Կառավարության Որոշումը նախաձեռնվել է: Որոշումը հաստատվել է 2015թ-ի մայիսի 14-ին,
- ՀՎԳՊ-ի կազմում, ներառյալ բյուջեն և իրականացման ժամանակացույցը,
- ՎԳՊ-ի հաստատումը ԲԷՑ-ի կողմից և դրա տրամադրումը ՀԲ-ին հաստատման համար:

9.3 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման նախապատրաստական աշխատանքները

125. ՀՎԳՊ-ի իրականացման գործընթացն արագացնելու նպատակով ԲԷՑ-ն արդեն սկսել է որոշ գործողություններ/աշխատանքներ, որպես հիմնաքար և կոնկրետ նախապատրաստական առաջադրանքներ ՀՎԳՊ-ի իրականացման համար:

126. **Բողոքների Կարգավորման Մեխանիզմի հիմնում**՝ ԲԿՄ-ը որոշվել և ներկայացվել է ԱԵԱ Հանրային Զննարկումների ժամանակ: ԲԿՄ-ի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ գրքույկներ կտրամադրվեն հանրային լսումների ժամանակ,ինչպես նաև ԲԿՄ-ի վերաբերյալ կոնստակտային

տվյալներով քարտեր կբաժանվեն համայնքներում ծրագրի ներկայացուցիչների կողմից համայնք կատարած յուրաքանչյուր այցելության ընթացքում:

127. **ՎԳՊ-ն իրականացնող միավորի հիմնում՝** ՎԳՊ-ն իրականացնող միավոր է հիմնվել ԲԷՑ-ում (մանրամասները ներկայացված են Բաժին 5-ում, Ինստիտուցիոնալ Կարգավորումներ): Սոցիալական և վերաբնակեցման հարցով խորհրդատուները ուսուցում են կազմակերպել խմբի համար ՎԳՊ-ի վերջնականացման ժամանակ:

128. **Առանց որևէ պետական գրանցման հողերի գրանցում՝** ԲԷՑ-ն արդեն սկսել է Պետական Կոմիտեի և ՏԻՄ-երի հետ կապի մեջ մտնել չօգտագործված հողերի սեփականատերերին հայտնա բերելու ուղղությամբ (առանց որևէ պետական գրանցման հողերի վերաբերյալ մանրամասները ներկայացված են Ազդեցություն Գլխում):

129. **Առևտրային Բանկերի որոշում և համաձայնագրեր՝** ըստ ՀԲ ԳԶ 4.12., ԱԵԱ պետք է ստանան փոխհատուցում ամբողջական վերականգնման արժեքի չափով, առանց որևէ առարկության, ներառյալ կանխիկացված գումարի վճարները: ԲԷՑ-ն սկսել է առևտրային բանկ(եր)ի որոնման գործընթացը, որը կապահովի լավագույն պայմանները ԱԵԱ համար և կգտնվի ազդակիր տարածքի մոտակայքում, եթե հնարավոր է ԱԵԱ համար հաշվեհամարներ բացելու և փոխհատուցման գումարներն ու դրամական նպաստները փոխանցելու համար:

130. **ԱԵԱ հետ ձեռքբերման պայմանագրերի և համաձայնագրերի կազմում՝** ԲԷՑ-ը, խորհրդատուների աջակցությամբ կազմել է գրանցված գույքերի համար գույքի ձեռքբերման պայմանագրերի նախագծի նմուշներ, և չգրանցված գույքերի ու դրամական աջակցության համար համաձայնագրեր: Պատճենները ներկայացված են Հավելված 7-ում:

131. **ՏԻՄ-ի ներկայացուցչի և ԲԿՀ անդամների ուսուցում՝** Տեղական մակարդակով բոլոր ազդակիր համայնքներում ԲԷՑ-ը կկազմակերպի ուսուցում ՏԻՄ-ի ներկայացուցիչների համար, ովքեր ներգրավված կլինեն ԲԿՀ-ի մեջ: Ուսուցումը կանցկացվի ՀՎԳՊ-ի նախագծի հրապարակման ժամանակ և ամբողջությամբ կավարտվի մինչև ՀՎԳՊ-ի վերջնական հաստատումն ու իրականացումը: ԲԿՀ-ի անդամները կուսուցանվեն Երևանում նախքան ՀՎԳՊ-ի իրականացումն սկսելը:

9. 4 Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման կարևորագույն փուլերը

132. ՀԲ-ի կողմից ՀՎԳՊ-ի հաստատումից անմիջապես հետո ԲԷՑ-ը կսկսի դրա իրականացումը: Իրականացումը կավարտվի, երբ փոխհատուցումներն ամբողջովին վճարվեն բոլոր ԱԵԱ և հաստատվեն Իրականացման Աջակցող Խորհրդատուի կողմից: ՀՎԳՊ-ի իրականացման գործընթացը, համաձայն ՎԶԾ-ի, ՀՀ օրենքների և նորմերի, ներկայացված է ստորև:

133. **ՎԳՊ-ի իրականացման համար բյուջեի բաշխում՝** ՀՎԳՊ-ի իրականացման բյուջեի միակ աղբյուրը վարկն է: Հենց որ ՀՎԳՊ-ն հաստատվի, ԲԷՑ-ը հարցում կուղարկի ՀՀ Կառավարություն/Պետական Գանձապետարան վերաբնակեցման գործողություններն իրականացնելու նպատակով գումար տրամադրելու համար: Տեղաբաշխումները կդիտարկվեն եռամսյակային հիմունքներով՝ հիմնվելով ՀՎԳՊ-ի կողմից նշված բյուջեի պահանջների վրա:

134. **Պայմանագրերի նախագծի ուղարկում՝** Ըստ ՎԶԾ-ի ԱԵԱ հետ փոխհատուցման շուրջ բանակացությունները կսկսվեն ՀՎԳՊ-ի իրականացման փուլում, հենց որ ՀՎԳՊ-ն, ներառյալ փոխհատուցման հաշվարկման մեթոդաբանությունը և համապատասխան բյուջեն հաստատվեն ՀԲ-ի կողմից: Այս փուլում ձեռքբերողը փորձում է բանակցել սեփականատիրոջ և/կամ վարձակալի հետ՝ ուղարկելով պայմանագրի նախագիծ գույքի օտարման վերաբերյալ: ԱԵԱ կարող են տրամադրել իրենց բանկային հաշվեհամարները կամ ներկայացնել իրենց մեկնաբանությունները պայմանագրի նախագծի վերաբերյալ 90 օրվա ընթացքում:

136. **Հողի իրավունքի պատշաճ գրանցում**՝ սկսած ՀՀԳԴ-ի կազմման ժամանակահատվածից, այն ԱԵԱ-ք, որոնք չունեն հողի իրավունքի պատշաճ գրանցում, ԲԷՑ-ը կաջակցի նրանց պետական Կադասրում գրանցվելու համար: Առանց պետական գրանցման հողատարածքները կուսումնասիրվեն պատական կադաստրի կողմից և կգրանցվեն:

137. **Պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրում**՝ այն դեպքում, եթե բանակցությունները հաջող են անցում, ԲԷՑ-ը պայմանագիր կստորագրի ԱԵԱ հետ օրինական գույքերի դիմաց փոխհատուցում կատարելու և առանց նոտարական հաստատման կստորագրի համաձայնագրեր դրամական աջակցություն տրամադրելու համար: Պայմանագրի նախագիծը տարածելուց հետո երեք ամսվա ընթացքում ԲԷՑ-ը պետք է ԱԵԱ հետ ստորագրի վերջնական պայմանագիր:

138. **Ձեռքբերման գործընթաց**՝ պայմանագրի նախագիծն ուղարկելուց հետո 3 ամսվա ընթացքում բանակցությունների ձախողման դեպքում ԲԷՑ-ը պետք է մեկ ամսվա ընթացքում գրավադրի փոխհատուցման գումարը ԱԵԱ անուևով դատարանի դեպոզիտային հաշվին: Ձեռքբերման ենթակա գույքի փոխհատուցման գումարը կհաշվարկվի (անհրաժեշտության դեպքում կվերահաշվարկվի) մեկ շաբաթ առաջ մինչև գումարը հաշվի վրա նստեցնելը: ԱԵԱ ԲԷՑ-ի կողմից երեք օրվա ընթացքում կծանուցվեն փոխհատուցման գումարը հաշվեհամարին նստելու վերաբերյալ: ԱԵԱ իրավունք ունեն դեպոզիտային հաշվից հանել գումարը 7 օրվա ընթացքում: Այս դեպքում պայմանագիրը կհամարվի ստորագրված: Հակառակ դեպքում, ԲԷՑ-ը կսկսի ձեռքբերման գործընթացը և գործը կուղարկի դատարան: Այսպիսի դեպքում կոնկրետ հողատարածքներում ոչ մի շինարարական աշխատանք չի կարող սկսվել, մինչև որ ձեռք չբերվի դատարանի որոշումը, այն չմտնի ուժի մեջ և ունեցվածքի նկատմամբ ԲԷՑ-ի իրավունքը չգրանցվի Պետական Կադաստրում:

139. **Փոխհատուցումների/դրամական միջոցների վճարում**՝ պայմանագիրը ստորագրելուց հետո 15 օրվա ընթացքում փոխհատուցման գումարը կվճարվի, որը կփոխանցվի ԱԵԱ բանկային հաշվեհամարի վրա: Եթե ԱԵԱ չունի բանկային հաշվեհամար, ապա Ծրագրի շրջանակներում նրա համար կբացվի հաշվեհամար Ծրագրի/ԿԳԴ-ի բյուջեի ծախսերով:

140. **Տեղանքն ազատելը**՝ լրիվ փոխհատուցում/դրամական աջակցությունն ստանալուց հետո ԱԵԱ կունենան 30 օր տեղաբնակեցվելու համար:

141. **Բացակա ԱԵԱ**՝ եթե սեփականատերը Հայաստանում չէ, ապա գործարքը կարող է կատարել ԱԵԱ պաշտոնական ներկայացուցիչը՝ հիմնվելով լիազորագրի վրա: Եթե ոչ մի ներկայացուցիչ չի նշանակված, ապա ունեցվածքը պետք է օրինական ձևով ձեռք բերվի դատական գործընթացի միջոցով, և փոխհատուցումը պետք է փոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին, ինչպես ներկայացված է վերևում: Դատարանը կվճարի այս փոխհատուցումը ցանկացած անձի, ով կհաստատի իր օրինական իրավունքը այն ստանալու համար:

142. **Շինարարական աշխատանքների սկիզբ**՝ շինարարական աշխատանքներն սկսելու նպատակով ԲԷՑ-ը չի կարող իր տնօրինության տակ վերցնել ոչ մի հողատարածք առանց ազդակիր հողի սեփականատերերին և նրանց վարձակալներին փոխհատուցման ենթակա ամբողջ վճարումը կատարելու և Պետական Կադաստրում սեփականության իրավունքը վերագրանցելու: Ձեռքբերման ենթակա հողատարածքներում շինարարական աշխատանքները կարող են սկսվել միայն դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց և ազդակիր գույքը ԲԷՑ-ի անուևով Պետական Կադաստրում վերագրանցելուց հետո: Սա պետք է կարգավորվի բողոքների վերաբերյալ հաշվետվությունով՝ կազմված Իրականացման Աջակցող Խորհրդատուի և հաստատված ՀԲ-ի կողմից:

143. **Բողոքները կամ առարկությունները** (եթե կան) պետք է կարգավորվեն, ըստ այս ՀՀԳԴ-ում ընդունված բողոքների կարգավորման գործընթացի: ՀՀԳԴ-ի շարունակական առաջադրանքները, որպես բողոքների կարգավորում և մշտադիտարկում կշարունակվի շինարարական աշխատանքների իրականացման փուլում, որպեսզի ապահովի ԱԵԱ պահանջներին ժամանակին պատասխանելը և վերաբնակեցման գործընթացի ճշգրիտ իրականացումը:

9.5 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման ժամանակացույց

144. Հետևյալ ժամանակացույցում ներկայացված ժամկետները պարզորեն ցույց են տալիս ՀՎԳՊ-ի կազմման, վերջնականացման և իրականացման փուլերը:

Աղյուսակ 24 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման ժամանակացույց

N	Գործողություն	Պատասխանատու կողմ	Սկիզբ	Վերջ
Ա	Վերաբնակեցման Գործողությունների Պլանի նախապատրաստում (ՀՎԳՊ)			
1	ՎԶԾ-ի գնահատում	ՄԱԽ	01.04.2013	05.05.2014
2	Վերջնական նախագծման Ավարտ	ՇԿ	24.04.2013	02.08.2014
3	Մարդահամարի և Կորուստների մակրամասն Գույքագրման, ՀՎԳՊ ժամկետների հարցումների / ուսումնասիրության անցկացման ձևերի պատրաստում	ՇԿ/ՄԱԽ	01.05.2014	15.06.2014
4	Կադաստրային տեղեկատվության և հողակտորների քարտեզների ձեռքբերում	ԲԷՑ/ՇԿ	29.05.2014	15.07.2014
5	ԱԵԱ և Համայնքային Ղեկավարների հետ անմիջական խորհրդատվություն և քննարկում	ԲԷՑ/ՇԿ	29.08.2013	05.06.2014
6	Նախնական հետազոտությունների վերաբերյալ Կառավարության Որոշման հաստատում	ՀՀ Կառավարություն	12.06.2014	
7	ԱԵԱ հետ Հանրային լսումների անցկացում	ՇԿ/ԲԷՑ	10.03.2015	24.04.2015
8	Մարդահամարի կազմակերպում	ՇԿ	10.03.2015	30.04.2016
9	Հողի սեփականության իրավունքների ճշտում ու ոչ օրինական հողօգտագործողների հայտնաբերում հողի օրինականացման հարցում միջազգային իրավական խորհրդատուների կողմից աջակցություն ստանալու նպատակով, որտեղ կիրառելի է, ներառյալ	ՇԿ/անկախ իրավական փորձագետներ/ ԲԷՑ	12.03.2015	30.04.2015
10	Մանրամասն տեղազննում	ՇԿ-ն լիցենզավորված չափագրող մասնագետների միջոցով	10.02.2015	15.04.2016
11	Գույքագրում	ՇԿ	20.04.2015	05.05.2016
12	Գույքին հասցված վնասի գնահատում	ՇԿ-ն լիցենզավորված գնահատողների միջոցով	25.04.2015	10.05.2016
13	Գույքի նկարագրման արձանագրությունների ստորագրում	ՇԿ	30.04.2015	10.05.2016
14	Հանրային Շահ ճանաչելու վերաբերյալ Որոշում	ՀՀ Կառավարություն	14.05.2015	
15	Նախնական ՀՎԳՊ-ի կազմում	ՇԿ	01.05.2015	17.08.2015
16	Վերահսկող խորհրդատուի կողմից վերանայում	ՄԱԽ	15.08.2015	17.08.2015
17	ՀԲ-ի կողմից նախնական ՀՎԳՊ-ի հաստատում	ՀԲ	17.09.2015	

18	Հանրային քննարկում և նախնական ՅՎԳԴ-ի հրապարակում	ՇԿ/ՄԱԽ	12.10.2015 5	16.10.2015
19	Շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների հիման վրա նախնական ՅՎԳԴ-ի վերանայում	ՇԿ/ՄԱԽ	19.10.2015 5	22.10.2015
20	ՀԲ վերանայում և հաստատում	ՀԲ	<u>20.07.2015</u>	
21	ՀՀ Կառավարությանը ՅՎԳԴ-ի տրամադրում	ԲԷՑ	21.07.2015	
22	ՅՎԳԴ-ի վերանայում և ՀԲ տրամադրում	ՇԿ	<u>15.05.2017</u>	
23	Վերանայված ՅՎԳԴ-ի հաստատումը ՀԲ-ի կողմից	ՀԲ	<u>Մինչև 31.07.2017</u>	
Բ	Նախնական ՅՎԳԴ-ի իրականացում			
1	Փոխահատուցման վճարներ	ԲԷՑ	<u>21.07.201</u> 5	<u>15.06.2016</u>
2	Նախնական ՅՎԳԴ-ի համար Համապատասխանության հաշվետվության կազմում և տրամադրում ՀԲ	ՄԽ	<u>10.06.201</u> 6	<u>14.07.2016</u>
3	Նախնական ՅՎԳԴ-ի համար Համապատասխանության հաշվետվության հաստատում ՀԲ կողմից	ՄԽ	<u>By 22.08.2016</u>	
Գ	Վերանայված ՅՎԳԴ-ի իրականացում			
1	Փոխահատուցման վճարներ	ԲԷՑ	<u>31. 11.2017</u>	<u>31.01.2017</u>
2	Վերանայված ՅՎԳԴ-ի համար Համապատասխանության հաշվետվության կազմում և տրամադրում ՀԲ	ՄԽ	<u>20.01.2018</u>	<u>28.02.2018</u>
3	Վերանայված ՅՎԳԴ-ի համար Համապատասխանության հաշվետվության հաստատում ՀԲ կողմից	ՄԽ	<u>31.03.2018</u>	

Մշտադիտարկում

10.1 Ներածություն

145. Վերահսկողության մեխանիզմները նախատեսված են փոխահատուցման և վերաբնակեցման գործողությունները ժամանակին և արդյունավետ իրականացնելու համար: ՅՎԳԴ-ի իրականացումը ենթակա կլինի և ներքին և արտաքին մշտադիտարկում:

10.2 Ներքին մշտադիտարկում

146. Վերաբնակեցման գործողությունները բոլոր բաղադրիչներով պետք է կանոնավոր կերպով վերահսկվեն և մշտադիտարկման ենթարկվեն ԲԷՑ-ի կողմից: Ներքին մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվությունը պետք է իրականացվի ԲԷՑ-ի կողմից, որի համար ԲԷՑ-ը պայմանագիր է կնքել Կալպատարուի հետ, որը պատասխանատու կլինի պատրաստել մշտադիտարկման վերաբերյալ կանոնավոր հաշվետվություններ ՅՎԳԴ-ի կազմման և իրականացման կարգավիճակի վերաբերյալ, ներառյալ ցանկացած առաջացած բողոք և ինչպես դրանք պետք է կարգավորվեն: Բոլոր ներքին հաշվետվությունները պետք է ընդգրկվեն Ծրագիր Առաջընթացի Հաշվետվության մեջ: Ներքին մշտադիտարկման ցուցիչները կլինեն գործընթացի, անհապաղ եզրակացությունների և արդյունքների հետ կապված ցուցիչները, որոնք թույլ կտան գնահատել ՎԳԴ-ի իրականացման առաջընթացը և աշխատանքային ծրագրի կարգավորումը: Մշտադիտարկման հատուկ չափանիշները կլինեն:

- Տեղեկատվության տարածման և ԱԵԱ հետ ունեցած քննարկումների քանակը
- Ժամանակին ուղարկված նախագծային պայմանագրերի քանակը
- Ժամանակին ստորագրված վերջնական պայմանագրերի/համաձայնագրերի քանակը
- Ժամանակին կատարված վճարումները
- Ժամանակին Պետական Կադաստրում գրանցված հողերի քանակը
- Ստացված, լուծված, չվճռված բողոքների քանակը

10.3 Արտաքին մշտադիտարկում

147. Այս առաջադրանքը կիրականացվի յուրաքանչյուր ՀՎԳՊ-ի գործողության իրականացմանը զուգահեռ և կընդգրկի այցելություններ տեղանք և հաղորդակցություն ԱԵԱ հետ: ՎԳՊ-ի կազմման վերջում ՀՎԳՊ-ի Ավարտման Հաշվետվություն պետք է կազմվի արտաքին փորձագետի կողմից (վարձված ԲԵՑ-ի կողմից) և ՀԲ պետք է ներկայացվի՝ նշելով, արդյոք փոխհատուցման ծրագիրն իրականացվել է համաձայն ՎԶԾ-ի, այս ՀՎԳՊ-ի ՀԲ-ի ԳՁ 4.12 դրույթների հիման վրա, և արդյոք ԱԵԱ գոհ են եղել: ՀԲ-ի կողմից Ավարտման Հաշվետվության հաստատումը ԲԵՑ-ի համար պայման կլինի կապալառուին տրամադրելու սկզբի վերաբերյալ գրություն տվյալ հատվածում շինարարական աշխատանքներն սկսելու համար: Արտաքին մշտադիտարկողի դերը անհամապատասխանություն և ՀՎԳՊ-ի դրույթների խախտում գտնելն է՝ ապահովելով դրա կատարումը՝ հայտնաբերելով և գրառելով անհամապատասխանության խնդիրները և խորհուրդ տալով Պատվիրատուին այսպիսի դեպքերում պատշաճ պատասխան տալու վերաբերյալ: Հիմնական գործողություններն են՝ գնահատել և հաշվետվություն ներկայացնել ՀՎԳՊ-ի առաջընթացի վերաբերյալ, ճշտել, որ համաձայնեցված փոխհատուցման վճարումները լիովին տրամադրվել են ազդակիր անձանց և ստուգել, որ բողոքարկման մեխանիզմներն իրականացվել են արդյունավետ ձևով:

- Ճշտել, որ մարդահամարն իրականացվել է բոլոր ԱԵԱ համար,
- Որ ՀՎԳՊ-ն և նախնական վիճակի ուսումնասիրությունը (պատշաճ կերպով) պատրաստվել է, ըստ պահանջվի,
- Գույքի գնահատումն իրականացվել է ՎԶԾ-ի դրույթների համաձայն և ՀՎԳՊ-ին համապատասխան,
- Հետևել, որ վերաբնակեցման գործողություններն իրականացվել են, ինչպես հաստատված է ՀՎԳՊ-ով,
- Վերանայել բողոքարկման դեպքերը, ներառյալ գնահատումը, թե արդյոք բողոքների կարգավորումն իրականացվել է ըստ ՀՎԳՊ-ի դրույթների և բավարարում է ԱԵԱ պահանջները,
- Անհրաժեշտության դեպքում վերաբնակեցման իրականացումը բարելավելու նպատակով ներկայացնել առաջարկներ ծրագրի ՎԶԾ-ում և այս ՀՎԳՊ-ում նշված սկզբունքները և նպատակները առավել արդյունավետ իրականացումը երաշխավորելու համար:

1. ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՄԱՐԴԱՅԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ

ՄԱՐԴԱՅԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ N _____

1. ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ N _____	2. ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱԿՏՈՐԻ ԼՈՏ-ԿՈՂ _____
--	---

3. ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Հարցազրույցի ամսաթիվը		4. Հարցազրուցավարի անուն, ազգանուն	
2. Հարցվողի անուն, ազգանուն		5. Բնակության հասցե	
3. Հեռախոսահամար / <i>կազմակերպության տվյալ</i>		6. Համայնք	

Կազմեցին՝

_____ (կազմակերպություն)

_____ (տնօրեն)

_____ (ստորագրությունը)

_____ (կազմակերպություն)

_____ (տնօրեն)

_____ (ստորագրությունը)

4. ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (հարցվողի հերթական համարը վերցնել շրջանակի մեջ)

No	1. Անուն, ազգանուն 1. Նախ լրացնել բոլոր SS անդամների անուն, ազգանունները սկսած տան գլխավորից, 2. ապա յուրաքանչյուր անդամի մասին տալ 2-7 հարցերը, 3. ապա յուրաքանչյուր անդամի մասին տալ 8-րդ հարցը)	2. Կապը SS գլխավորի հետ 1. Գլխավորը 2. Ամուսին/կին 3. Աղջիկ/ տղա 4. Հայր/ մայր 5. Զույր/ եղբայր 6. Տատիկ/ պապիկ 7. Փեսա/ հարս 8. Թոռնիկ 9. Սկեսուր/ սկեսորայր 10. Այլ	3. Սեռը 1. Իգական 2. Արական	4. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/ տարի)	5. Էթնիկ պատկանելիությունը 1. Հայ 2. Եզդի 3. Զուրդ 4. Ասորի 5. Այլ /ևշել/	6. Ավարտած կրթամակարդակը 1. չունի տարրական 2. տարրական 3. հիմնական 4. միջնակարգ/ ավագ դպրոց 5. միջնակարգ մասնագիտական 6. բարձրագույն (բակալավր կամ մագիստրոս) 7. հետբուհական 98. կիրառելի չէ /մինչև 6 տարեկան/	7. Հաշմանդամության կարգավիճակը 1. I աստիճան 2. II աստիճան 3. III աստիճան 4. Այլ 5. Կիրառելի չէ	8. Չբաղվածություն /Յնարավոր են մի քանի պատասխաններ/ 1. Աշխատող 2. Տարիքային կենսաթոշակառու 3. Աշակերտ 4. Ուսանող (ցերեկային) 5. Հեռակա ուսանող 6. Չի աշխատում և չի փնտրում 7. Գործազուրկ (փնտրում է աշխատանք) 8. Պարտադիր զինծառայող 9. Կիրառելի չէ /մինչև 6 տարեկան և այլ դեպքեր/
1		1						
2								
3								
4								
5								

5. SS-ի ընդհանուր եկամուտը	Եկամուտի տեսակը (ՀՀ դրամ) Նշել տարեկան եկամուտը (երբ հարցվողը դժվարանում է պատասխանել տարվա համար, հարցնել 1ամսվա համար, ճշել համապատասխան ամիսների քանակը և բազմապատկել)						
	1. Գյուղատնտեսական (արտադրություն և վաճառք)				6. Կրթաթոշակ		11. Աշխատանք արտերկրում
	2. Անասնապահական (արտադրություն և վաճառք)				7. Տարիքային կենսաթոշակ		12. Այլ
	3. Վարձու աշխատանք				8. Հաշմանդամության նպաստ		
	4. Ինքնազբաղվածություն				9. Աղքատության ընտանեկան նպաստ		Ընդամենը
5. Ձեռնարկատիրական գործունեություն				10. Այլ նպաստ /ևշել/			

1. ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ և ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԼԱՆ

Հրազդանից Շինուհայր միջանցքի Էլեկտրահաղորդման վերակառուցման ծրագրի համար հանրային քննարկում և հրապարակման պլան

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԵՑ	Բարձրավորտ Էլեկտրացանցեր
ԿՎ	Կիրովոպոլս
ԿՎԺ	Կիրովատոտ/ժամ
ՄԺ	Մեգավատտ/ժամ
ԷԲՊՆ	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձ
ՆՄԱ	Նյութական մշակութային արժեքներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՎԳՊ	Համառոտ Վերաբնակեցման գործողությունների պլան
ԱԳ	Անվտանգության Գոտի
ՎԶԳ	Վերաբնակեցման քաղաքականության հայեցակարգ
ՏԱ	Տեխնիկական Առաջադրանք
ՀԲ	Համաշխարհային Բանկ

1. Նկարագրություն

Համաձայն Համաշխարհային Բանկի ՉՁ 4.12 ուղեցույցների, ԱԵԱ պետք է լիովին խորհրդատվություն տրամադրվի և հնարավորություն տրվի մասնակցելու ՀՎԳՊ-ն պատրաստելու և իրականացնելու բոլոր փուլերին: Նույն սկզբունքով, ԱԵԱ պետք է պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացվի պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՀՎԳՊ-ի իրականացման ժամանակացույցի և գործընթացների վերաբերյալ:

Հանրային տեղեկատվական և խորհրդատվական քարոզարշավները պետք է կատարվեն ԲԵՑ-ի կողմից ՎԶԳ-ի իրականացման գործընթացի ամբողջ փուլերի ընթացքում, որը պետք է կատարվի ծրագրի շինարարական կապալառուի՝ Կալապատարու ընկերության վերաբնակեցման և սոցիալական հարցերով խմբի աջակցությամբ: Ազդեցության ենթարկված կողմերին հնարավորություն կտրվի ներկայացնել իրենց գաղափարները և առաջարկությունները, որպես ներդրում վերաբնակեցման գործողությունների պլանավորման և իրականացման մեջ: Այս հարցով հետաքրքրված տարբեր հասարակական կազմակերպություններ ԲԵՑ-ի կողմից ակտիվորեն կընդգրկվեն հանրային քննարկումների և տեղեկատվության հրապարակման մեջ:

Հանրային քննարկումների և հրապարակումների պլանը (ՀԶԳ) նախատեսված է հանրային քննարկումների (ՀԶ) կիրառելի գործընթացներ, մեխանիզմներ և սկզբունքներ, ինչպես նաև տեղեկատվության հրապարակումներ մշակելու համար:

2. Հանրային քննարկումներ

Ա. Ոչ պաշտոնական հանրային քննարկումներ

ՀԿԳՊ-ի կազմման գործընթացի ժամանակ ԱԵԱ-ի ներկայացուցիչների և տեղական կառավարման մարմինների հետ չափման, գույքագրման և մարդահամարի ընթացքում և դրանցից առաջ ոչ պաշտոնական լուսմներ կիրականացվեն գույքագրող և գնահատող ընկերության կողմից: ԱԵԱ կտեղեկացվեն վերաբնակեցման վերաբերյալ կապված տեղազննման և ժամանակացույցի հետ:

Բ. Վերջնաժամկետի վերաբերյալ հայտարարություն

Վերջնաժամկետի վերաբերյալ ԱԵԱ կտեղեկացվեն տեղազննումն սկսելուց մեկ շաբաթ առաջ: Հայտարարությունը կփակցվի Տեղական Ինքնակառավարման Մարմինների (ՏԻՄ) գրասենյակում (Հավելված 1):

Գ. ՀԿԳՊ-ի կազմման ընթացքում պաշտոնական հանրային քննարկումներ

ԱԵԱ հետ հանրային քննարկումները նրանց փոխհատուցման, վերաբնակեցման տեղեկատվության հրապարակման մասին պետք է երաշխավորվի ՀՀ Կառավարության կողմից Նախնական Հետազոտման վերաբերյալ Որոշման հաստատմամբ:

Վայրը` Բոլոր ազդակիր համայնքներում հանրային քննարկումները կկազմակերպվեն այնպիսի վայրերում, որոնք հասանելի կլինեն ԱԵԱ համար, օրինակ ՏԻՄ-երի գրասենյակում, մշակույթի կենտրոններում, դպրոցներում և այլն: Վայրը կընտրվի և կհամաձայնեցվի ՏԻՄ-երի հետ:

Կազմակերպչական գործողություններ` նախքան լուսմները մի քանի կազմակերպչական գործողություններ կիրականացվեն, որոնք են`

- Ազդեցության ենթարկված բոլոր համայնքների ղեկավարները պաշտոնապես կծանուցվեն ՀԶ-երի ամսաթվերի և օրակարգի վերաբերյալ (ներկայացված է Հավելված 4-ում) և կառաջարկվեն աջակցել կազմակերպչական հարցերով (վայր, ԱԵԱ մասնակցություն):
- ԱԵԱ վերջնական ցանկը մինչև լուսմները կուղարկվի համայնքների ղեկավարներին ապահովելու ԱԵԱ կամ նրանց ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց և խոցելի խմբերին` ապահովելով նրանց ներկայությունը:
- ՀԶ-երի վերաբերյալ հայտարարությունը պետք է հրատարակվի նախքան ՀԶ-ն սկսելը:
 - Հայտարարությունը պետք է հրատարակվի տեղական լրատվամիջոցներում (եթե այդպիսին կա)
 - Հայտարարություն ՏԻՄ գրասենյակում
- Կալպատարու ընկերության ներկայացուցիչը կզանգահարի ազդեցության ենթարկված տնային տնտեսության յուրաքանչյուր գլխավորին կամ անդամին (եթե հեռախոսահամարներն առկա են) և կհրավիրի նրան, ինչպես նաև ընտանիքի ցանկացած այլ անդամի, ով ցանկանում մասնակցել:
- ՀԿ-երը նույնպես կտեղեկացվեն ՀԶ-երի ժամանակացույցի վերաբերյալ (տարածաշրջանում ակտիվորեն ընդգրկված ՀԿ-ների ցանկը կոնտակտային տվյալներով հանդերձ ներկայացված է Հավելված 2-ում):

ՀԶ-երի փաստաթղթերը` Հանրային բոլոր լուսմների վերաբերյալ փաստաթղթերը պետք է կազմվեն Կալպատարու ընկերության կողմից և ներկայացվեն ԲԵՏ-ին:

- Հանրային բոլոր լուսմները պետք է ձայնագրվեն և հանդիպման արձանագրություն պետք է կազմվի:
- Մասնակիցների ցանկը պետք է ներկայացվի, որպես արձանագրության մի մաս:
- ԱԵԱ կողմից բարձրացված խնդիրների, հանդիման ընթացքում պատասխանած հարցերի և անպատասխան մնացած հարցերի ամփոփ նկարագրություն պետք է կազմվի յուրաքանչյուր ՀԶ-ից հետո: Անհրաժեշտության դեպքում գործողության պլան կկազմվի բարձրացված խնդիրները լուծելու համար: Վերջնական որոշումների վերաբերյալ պետք է տեղեկացվեն համայնքները կամ կոնկրետ ԱԵԱ և գրանցվեն:

- ԶԶ-երի ժամանակ պետք է լուսանկարներ արվեն:
- ՎԳՊ-ի մեջ կներկայացվի քննարկումների ամփոփումը: Հանդիպման արձանագրությունը կկցվի ՎԳՊ-ին:

Ներկայացվելու ենթակա տեղեկատվություն՝ ԱԵԱ կտեղեկացվեն ծրագրի, ժամանակացույցի, փոխհատուցման վճարումների, գնահատման մեթոդաբանության և հողի ձեռքբերման գործընթացների վերաբերյալ: Առաջարկված օրակարգը ներկայացված է Հավելված 4-ում: Հանրային տեղեկատվական գրքուկները վերջնաժամկետի, իրավասության չափանիշների և իրավունքների, փոխհատուցման միջոցների, բողոքների կարգավորման մեխանիզմի գործընթացի հետ միասին կտրամադրվեն ազդեցության ենթարկված յուրաքանչյուր տնային տնտեսության (Հավելված 3): Այս նյութերը, ինչպես նաև ՎԶԸ-ի հայերեն պատճենը նույնպես կտրամադրվի ՏԻՄ-երին, այնպես որ բոլոր ԱԵԱ և/կամ համայնքների ղեկավարները կունենան դրանք:

Մասնակիցներ՝ ԶԶ-երը կիրականացվեն ԲԵՑ-ի կողմից, Կալպատարու ընկերության մասնագետների (սոցիալական հարցերով մասնագետի և ճարտարագետի) աջակցությամբ: Գնահատող կազմակերպության գնահատման հարցերով մասնագետը կներկայացնի Գնահատման Մեթոդաբանությունը:

Դ. ՀՎԳՊ-ի կազմման և շինարարության ընթացքում ԶԶ-երը

ԱԵԱ հետ լրացուցիչ ոչ պաշտոնական լսումներ կիրականացվեն ՀՎԳՊ-ի կազմման փուլում, մասնավորապես ՀՎԳՊ-ի կազմման մասնագետի/խմբի հետ պայմանագրի ստորագրման ժամանակ: Շինարարական հարցերով կապալառուն բոլոր համայնքներում ԶԶ-եր կկազմակերպի ընդհանուր բնակչության համար նախքան շինարարությունն սկսելը, որպեսզի համայնքների անդամներին տեղեկացնի շինարարության ժամանակացույցի, մոտեցումների, անվտանգության մեխանիզմների և բողոքների կարգավորման մեխանիզմի վերաբերյալ:

3. Վերաբնակեցման հետ կապված փաստաթղթերի հրապարակումը

ԶԶ-երի ժամանակ Կալպատարու ընկերությունը կբաժանի Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական գրքուկներ իրավասության աղյուսակի հետ միասին, որում ծրագրի նկարագրությունը, բողոքների կարգավորման մեխանիզմը, իրավասությունները և փոխհատուցումները, ինչպես նաև հաճախակի տրվող հարցերի պատասխանները կներկայացվեն (Հավելված 3):

ԶԶ-երի ժամանակ ՎԶԸ-ն կհրապարակվի համայնքներում:

ՀԲ-ի կողմից ՀՎԳՊ-ի հաստատումից հետո պատճենը կհրապարակվի մեկ շաբաթով, որը ժամանակ կտա բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնելու ՀՎԳՊ-ի վերաբերյալ իրենց մեկնաբանությունները և բողոքները: ՀՎԳՊ-ն կհրապարակվի՝

- ԱԵԱ համար ՏԻՄ-երի գրասենյակներում
- Պատճենը կհրապարակվի ԲԵՑ-ի կայքում (www.hven.am)

Վերջնական ՎԳՊ-ն հայերենով կհրատարակվի ԲԵՑ-ի և ՀԲ-ի կայքերում: ՀՎԳՊ-ի հաստատված պատճենը առկա կլինի նաև տարածաշրջանային լիազոր մարմինների գրասենյակներում, ինչպես նաև ազդեցության ենթարկված համայնքների ՏԻՄ-երի գրասենյակներում:

ՀԶՀՊ Հավելված 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավիտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ Հրազդան ՁԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կՎ բարձրավիտ Էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի

շրջանակներում ազդակիր անձանց մարդահամարը և ազդեցության ենթարկված սեփականության գույքագրումը կմեկնարկի 2015թ. մարտի 10-ին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ մարդահամարի և գույքագրման օրը՝ 2015թ. մարտի 10-ը հանդիսանում է վերջնաժամկետ, որից հետո սեփականության վրա կատարված բարելավումների դիմաց փոխհատուցում չի տրվելու:

Ազդակիր անձանց մարդահամարը և ազդեցության ենթարկված սեփականության գույքագրումն իրականացնելու է «Ֆինափ» ՍՊԸ-ն:

ՀԶՀՊ Հավելված 2

Տարածաշրջանում գործող ՀԿ-ների ցանկ

#	Մարզ	Անուն	Կոնտակտային անձ	Տվյալներ
1	Վայոց Ձոր	Հայաստանի Կանաչների Միություն ՀԿ, Վայոց Ձորի մասնաճյուղ	Շիրակ Միքայելյան	shirakvayq@gmail.com +374 282 2-11-70 , +374 093 28-93-26
2	Վայոց Ձոր	Տարածաշրջանային Չարգացման Կենտրոն ՀԿ	Ալեքսան Ավագյան	arpa@list.ru +374 281 2 06 01, 2 06 03, +374 281 2 21 13 (fax)
3	Վայոց Ձոր	Կանանց Տարածաշրջանային Ասոցիացիա ՀԿ, Եղեգնաձոր	Սահանուշ Գաբրիելյան	sahanushgabrielyan@yandex.ru +374 281 2.20.10, +374093 081 660
4	Վայոց Ձոր	Ընդդեմ օրինական կամավորության ՀԿ, Վայքի մասնաճյուղ	Նորայր Հովակիմյան	vqkvayk@mail.ru +374 282 2 29 09, +374 093 74 50 84
5	Սյունիք	Գորիսի Օրիոն Կենտրոն	Նվեր Պողոսյան Մելադա Հարությունյան	374 94/ 81 50 52,/374 096/09 08 95, info_goris@aarhus.am , nver.goris@mail.ru , nver.goris@gmail.com , mharoutunyan@mail.ru
6	Սյունիք	Էկո-Սիս ՀԿ	Կամո Սաֆրազյան	+374 55 77-68-00 ecosisian@yahoo.com

Ծրագրի տեղեկատվական գրքույկ

**Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման վերակառուցման
ծրագիր Հայաստանում
Փոխհատուցման միջոցառումների տեղեկատվական գրքույկ**

Ծրագրի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը վարկ է վերցրել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից բարձր լարման էլեկտրահաղորդման ցանցի կրիտիկական հատվածների կառուցման համար: Բարձրավոլտ էլեկտրացանցեր Փակ Բաժնետիրական Ընկերությունը սահմանել է էլեկտրահաղորդման գծի հատվածները Հրագրանի ՋԷԿ-ից (հյուսիս-արևելքում) Շինուհայրի ենթակայան (հարավում): Նորատուս, Լիճք, Վարդենիս, Վայք, Որոտան 1 էլեկտրահաղորդման գծերը ներառող այդ հատվածը միացնում է էլեկտրաէներգիայի արտադրման երկու գլխավոր կենտրոններ և սպասարկում Հայաստանի կենտրոնական-արևելյան մասի էլեկտրաէներգիայի մեծ թվով սպառողներին:

Ծրագիրը ներառում է նոր հենարանների/սյուների մոնտաժումը, ներառյալ հիմքերը, գոյություն ունեցող հաղորդալարերի, մեկուսիչների և ենթակառուցվածքների, ինչպես նաև սարքավորումների այլ կարևոր մասերի փոխարինումը: Նոր գծի երկարությունը կլինի մոտավորապես 230 կմ և հիմնականում կկառուցվի առկա 220 կՎ էլեկտրահաղորդման գծի միջանցքին զուգահեռ: Էլեկտրահաղորդման առկա գիծը հասել է իր ծառայության ժամկետի ավարտին և շահագործումից դուրս կբերվի նոր գիծը կառուցելուց հետո:

Այս ծրագիրը շատ կարևոր քայլ է էլեկտրահաղորդման որակի բարելավման և Հայաստանում էներգահամակարգի անվտանգության բարձրացման համար: Ծրագրից կշահեն ինչպես այս էլեկտրահաղորդման գծով սպասարկվող համայնքները, այնպես էլ ամբողջ երկիրը:

Ծրագրի սահմանները եզրագծվում են Կոտայքի մարզում Հրագրան քաղաքով, Լճաշեն, Լճափ, Հայրավանք, Երանոս և Լիճք, գյուղական և Գավառ քաղաքային համայնքներով, Վայոց Ձորի մարզում՝ Սեյմի լեռնանցքով և Արփա գետով, Աղնջաձոր, Քարազուխ, Սալլի, Շաթին գյուղական և Եղեգնաձոր և Վայք քաղաքային համայնքներով, Սյունիքի մարզում Անգեղակոթ, Շաքի, Աղիտու, Ույծ, Վաղատին, Նորավան և Շինուհայր գյուղական համայնքներով:

Նախագծային աշխատանքների ընթացքում հիմնական նպատակն էր հնարավորիս խուսափել մասնավոր հողերի օգտագործումից: Ինչպես նշվեց, էլեկտրահաղորդման գիծը կանցկացվի հիմնականում գոյություն ունեցող գծին զուգահեռ: Վերջինից շեղումները կատարվել են միայն բնակավայրերը, շենք շինությունները, օգտագործելի մասնավոր հողակտորները և հետագայում նախատեսվող բնակելի տարածքները շրջանցելու նպատակով: Սակայն, որոշ դեպքերում հենարանների տեղադրումը մասնավոր հողերում անխուսափելի է եղել: Այս պատճառով էլ նախատեսվում է համայնքային և մասնավոր որոշ փոքր հողակտորների ձեռքբերում (օտարում)՝ հենարանների հիմքերի համար: Նման դեպքերի համար ձեռքբերողը (Բարձրավոլտ էլեկտրական ցանցերը) փոխհատուցելու է այդ հողատարածքների ձեռքբերման, և այլ կորուստների (մշակաբույս, ծառ, շինություն և այլն) դիմաց: Որոշ դեպքերում մոտեցման ճանապարհների կամ շինարարական աշխատանքների արդյունքում կարող են վնասվել մշակաբույսեր, ծառեր: Շինարարական աշխատանքների ընթացքում հասցրած ցանկացած վնասի համար ևս նախատեսված է համապատասխան փոխհատուցում:

Փոխհատուցումների հաշվարկման և տրամադրման մոտեցումները և սկզբունքները մշակվել են ՀՀ օրենսդրության և Համաշխարհային բանկի սոցիալական ապահովության քաղաքականությանը համապատասխան և արտացոլված են վերաբնակեցման քաղաքականության շրջանակում: Այդ փաստաթղթի պատճենը հասանելի է տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում:

Այս գրքույկի նպատակն է տեղեկացնել ծրագրի ազդակիր անձանց նրանց իրավունքների, բողոքները ներկայացնելու ընթացակարգի, փոխհատուցումների հաշվարկի սկզբունքների, օտարման

գործընթացի փուլերի մասին: Գրքույկի վերջում անդրադարձ է արվել մարդկանց կողմից փոխհատուցման գործընթացի վերաբերյալ հաճախակի տրվող հարցերին և Ծրագրի աշխատակազմի կոնսուլտային տվյալներին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու կամ բողոքներ ու առաջարկներ ուղարկելու համար:

ՈՐՈՂԵ ԵՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ ԷԼԵԿՏՐԱԳՆԱՂՈՐԴՄԱՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ

Ընդհանուր առմամբ Ծրագիրն ազդեցություն չի ունենա ամբողջ հողատարածքի վրա: Էլեկտրահաղորդման գծի շինարարության համար հողատարածքն անհրաժեշտ է հենարանի յուրաքանչյուր հիմքի և հենարանին ժամանակավոր մոտեցման համար: Հետագայում հենարանների մոնտաժումը և Էլեկտրահաղորդման գծի անցկացումը կարող է ժամանակավոր ազդեցություն ունենալ մշակաբույսերի կամ ծառերի վրա:

Ծրագիրը կունենա հողերի վրա մշտական և ժամանակավոր ազդեցություն:

Մշտականի պարագայում, հողի ձեռքբերումն անհրաժեշտ կլինի հենարանների հիմքերի կառուցման համար: Ձեռքբերվող հողերը, ինչպես նաև դրան հարակից այլ վնասները կփոխհատուցվեն ստորև նկարագրված սկզբունքների համապատասխան:

Ժամանակավոր ազդեցություն կարող է լինել հետևյալ դեպքերում՝

- հողի ուսումնասիրման ընթացքում մշակաբույսերը/ծառերը վնասելու դեպքում,
- մուտքի ճանապարհների շինարարության համար մշակաբույսերը/հողատարածքը վնասելու դեպքում,
- գիծն անցկացնելու ժամանակ մշակաբույսերը վնասելու դեպքում:

Ժամականավոր ազդեցության արդյունքում հասցված բոլոր վնասները կփոխհատուցվեն:

ԱԳ-ում հնարավոր է կատարել գյուղատնտեսական աշխատանքներ (բարձրության սահմանափակումով) կամ օգտագործել որպես արոտավայրեր, բացառությամբ հենարանի հիմքի մշտապես փակված տարածքից:

ՓՈՒՆՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ծրագրի շրջանակներում փոխհատուցվող տրամադրվելու է՝

- բոլոր տնային տնտեսությունները, ովքեր կորցնում են իրենց օրինական (կադաստրում գրանցված), օրինականացման ենթակա (կադաստրում չգրանցված, սակայն գրանցման ենթակա) կամ օգտագործվող հողերը,
- վարձակալները,
- հողին կցված կառույցների, բույսերի, ծառերի կամ այլ օբյեկտների տերերը:

Փոխհատուցման ենթակա կորուստների համար սահմանվում է վերջնաժամկետ: Վերջնաժամկետը մանրամասն մարդահամարի և կորուստների գույքագրման սկիզբն է: Ծրագրի ազդեցության տակ գտնվող տարածքներում նոր բնակեցումները, բարելավումները կամ գործողությունների սկսումը վերջնաժամկետից հետո ենթակա չեն փոխհատուցման:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Ե ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Եթե Դուք, որպես ԱԵԱ, ունեք դժգոհություն կամ բողոք ծրագրի իրականացման, փոխհատուցման գործընթացի կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ, ապա ստեղծված բողոքարկման մեխանիզմը հնարավորություն է տալիս արտահայտելու Ձեր բողոքը/դժգոհությունը: Բողոքարկման մեխանիզմը սահմանված է այս Ծրագրի կողմից և կազմված է երեք հիմնական քայլերից, որի նպատակն է ժամանակին և պատշաճ կերպով լուծել խնդիրները: Փորձ կարվի բոլոր խնդիրները լուծել առաջին քայլի շրջանակում:

Քայլ 1. Բարձրավolտ Էլեկտրացանցերի բողոքարկման հարցերով համակարգող

Առաջին ատյանում Ձեր համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը կընդունի Ձեր բողոք-դիմումները և կփոխանցի դրանք ԲԵՏ-ի բողոքարկման համակարգողին: Դուք կարող եք նաև ուղղակիորեն կապ հաստատել ԲԵՏ-ի բողոքարկման համակարգողի հետ հետևյալ կոնսուլտային հեռախոսահամարով և հասցեով:

- Միշա Բաղրամյան, ԲԵՑ-ի ներկայացուցիչ, Էլ. փոստ՝ hvenbec@gmail.com, հեռ.՝ + 374 10 72 03 80,

ԲԵՑ-ի բողոքարկման հարցերով համակարգողը կապատասխանի գրանցված բողոքներին ոչ ուշ, քան 15 օրի ընթացքում:

Քայլ 2. Բողոքների Կարգավորման Հանձնաժողով

Եթե ԲԵՑ-ի բողոքարկման համակարգողը չի կարողանում լուծել խնդիրը կամ Դուք բավարարված չեք խնդրի լուծման առաջարկված տարբերակով, Դուք կարող եք գրավոր բողոք ներկայացնել հատուկ այդ նպատակով ստեղծված բողոքարկման հանձնաժողովին: Այդ բողոքները պետք է ուղարկվեն ԲԵՑ-ի գրասենյակ (հասցեն նշված է “Չետադարձ կապ բաժնում”) կամ Էլեկտրոնային փոստին: Բողոքը պետք է մակագրել/ուղղել “Չրագրան-Շինուհայր բողոքարկման հանձնաժողովին”:

Քայլ 3. Դատարան

Եթե Ձեզ չի բավարարվում Բողոքարկման Կարգավորման Հանձնաժողովի որոշումը և Դուք ցանկանում եք շարունակել գործընթացը, ապա Դուք կարող եք դիմել դատարան, որի կայացրած որոշումը կլինի վերջնական:

Անկախ ներկայացված բողոքարկման մեխանիզմից և ընթացակարգերից, ԱԵԱ իրավունք ունեն իրենց բողոքները դատարան ներկայացնել ծրագրի իրականացման ցանկացած պահի:

ՓՈՒՆՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱՆԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- ***Որտեղի՞ց ես կարող եմ ձեռք բերել Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը և Վերաբնակեցման գործողությունների պլանը:***

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը և վերաբնակեցման գործողությունների պլանը հասանելի կլինի Տեղական Ինքնակառավարման մարմինների գրասենյակում: Ինչպես նաև Բարձրավոլտ Էլեկտրացանցերի կայքում (www.hven.am): Համապատասխան կոնտակտային անձի մանրամասն տվյալները կարող եք տեսնել Տեղեկատվական Գրքույկի վերջում:

- ***Ինչպե՞ս է վճարվելու փոխհատուցումը:***

Փոխհատուցման վճարումը ՎԳԴ-ի իրականացման կարևորագույն փուլերից մեկն է: Նախատեսված քայլերն են՝

- ա. Ձեզ համար լավագույն պայմաններ ապահովող առևտրային բանկերի ընտրությունը (աշխարհագրական դիրքը և գործարքի արժեքը): Դուք կարող եք նաև գործել իրենց առկա բանկային հաշիվների միջոցով:
- բ. ԱԵԱ հետ հողի օտարման պայմանագրի ստորագրում:
- գ. Փոխհատուցման, նպաստների գումարի փոխանցումը ԱԵԱ հաշվեհամարներին:
- դ. Փոխհատուցումը վճարելուց հետո 14 օրվա ընթացքում ԱԵԱ կողմից ունեցվածքի լքում:
- ե. Հողի/կառույցի տիրապետումը ԲԵՑ-ի կողմից:

- ***Եթե սեփականատերը մահացած է, ինչպե՞ս է տրամադրվում փոխհատուցումը:***

Եթե սեփականատերն ունի ժառանգներ, ապա փոխհատուցումը կվճարվի նրանց համապատասխան ժառանգության փաստաթղթերը ձևակերպելուց հետո: Եթե ժառանգներ չկան, ապա փոխհատուցումը կփոխանցվի դատարանի ղեպով հասնող հաշվին: Խնդրում ենք դիմել նոտարներին կամ իրավաբաններին փաստաթղթերի ձևակերպման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

- ***Հողի ձեռքբերման համար պայմանագիրը ստորագրելու ժամանակ ի՞նչ պետք է ունենամ ինձ հետ:***

Բոլոր անձինք, ովքեր ունեն հողի նկատմամբ սեփականության իրավունք, պետք է ներկայանան նոտարական գրասենյակ: Եթե սեփականատերը չի կարող ներկայանալ, ապա պետք է ներկայացվի լիազորագիր մեկ այլ սեփականատիրոջ անունով:

Պետք է տրամադրվեն ստորև նշված փաստաթղթերի բնօրինակները՝

1. Անձնագիրը
2. Սեփականության վկայականը
3. Եթե բացի սեփականատիրոջից կան գույքի նկատմամբ իրավունք ունեցող այլ անձինք, ապա պետք է ներկայացվի գույքային իրավունքի վկայականը (օրինակ՝ վարձակալության վկայականը, գրավի վկայականը)
4. Ամուսնության վկայական. ամուսիններից մեկի ներկայությունը պահանջվում է Համաձայնագիրը ստորագրելու համար (անկախ փաստաթուղթը կտրամադրվի նոտարի կողմից) հողի/անշարժ գույքի ձեռքբերման նպատակով կամ պետք է առկա լինի ամուսինների կողմից տրվախ լիազորագիրը*

*Ամուսինները համարվում են համասեփականատերեր, եթե սեփականությունը ձեռք է բերվել համատեղ կյանքի ընթացքում, նույնիսկ եթե կրանցից մեկի անունը նշված չէ սեփականության վկայականում:

➤ ***Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ինչպե՞ս նա կարող է ստանալ փոխհատուցումը:***

Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ապա նա կարող է ուղարկել լիազորագիր այլ անձի անունով, օրինակ՝ իր հարազատի կամ մոտ ընկերոջ, հողի օտարման պայմանագիրը ստորագրելու և փոխհատուցումը ստանալու համար: Կարող եք խորհրդակցել նոտարների կամ իրավաբանների հետ լիազորագրի ձևի վերաբերյալ: Եթե չկնքվի օտարման պայմանագիրը, ապա Ձեր գույքը կօտարվի դատական կարգով, և փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվեհամարին: Եթե ոչ մի ներկայացուցիչ չի նշանակված, սեփականությունը օրինական ձևով կօտարվի դատական գործընթացի միջոցով, և փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Հետագայում դատարանը այդ փոխհատուցումը կվճարի ցանկացած անձի, ով կհաստատի իր իրավական հիմքերը այդ գումարը ստանալու համար:

➤ ***Եթե ես չունեմ բանկային հաշիվ, պարտավո՞ր եմ արդյոք փոխհատուցումը ստանալու համար վճարել բանկային հաշվի բացման համար:***

Դուք կարող եք ստանալ փոխհատուցում անմիջապես Ձեր անձնական բանկային հաշվեհամարի վրա: Համոզվեք, որ այդ հաշվեհամարը նշված է հողի օտարման պայմանագրում: Եթե դուք չունեք բանկային հաշվեհամար, ապա Ձեզ համար Ծրագիրը կբացի անվճար հաշվեհամար:

➤ ***Ո՞վ ունի լրացուցիչ անվճար իրավաբանական աջակցության իրավունք Վերաբանակեցման գործողությունների պլանի մշակման և փոխհատուցումների վճարման ընթացքում:***

Խոցելի տնային տնտեսությունները ունեն լրացուցիչ անվճար իրավաբանական խորհրդատվության կամ սոցիալական աշխատողների աջակցության իրավունք: Խնդրում ենք կապ հաստատել Շինարարական կազմակերպության Սոցիալական հարցերով մասնագետի հետ: Կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև:

➤ ***Ո՞վ է համարվում խոցելի տնային տնտեսություն:***

Խոցելի խմբեր են համարվում՝

- Աղքատ տնային տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՅՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
- Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ գինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատող անձ չկա:

- Թռչակառուներից, տարեցներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թռչակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատող անձ չկա:

➤ **Հնարավոր է արդյոք, որ շինարարությունը սկսվի մինչ փոխհատուցումների տրամադրումը:**

Կապալառուն չի սկսելու շինարարություն Ծրագրի հողերի օտարման ազդեցությունների շրջանակում գտնվող որևէ հատվածում, մինչև՝ ա) վերաբնակեցման պլանը ամբողջովին իրականացված է, բ) բոլոր նախատեսված փոխհատուցումները և նպաստները վճարված են, գ) ազդեցության ենթակա տարածքները վերաձևակերևպված են, դ) անկախ մոնիտորինգային գործակալության կողմից պատրաստվել է համապատասխանության հաշվետվություն և հաստատվել է ՀԲ-ի կողմից:

➤ **Ի՞նչ կարող է լինել, եթե սեփականատերը հրաժարվում է պայմանագիրը ստորագրելուց:**

Տվյալ դեպքում կսկսվի հարկադիր օտարման գործընթացը: Ծրագրի համար հարկադիր օտարումներ կկիրառվեն միայն բացառիկ դեպքերում, երբ ԱԵԱ և ԲԵՑ-ի միջև բանակցությունները ձախողվեն: ԲԵՑ-ը չի զբաղեցնի անհրաժեշտ հողակտորները մինչև՝

- օրենքով սահմանված պատշաճ դատական գործընթացի նախաձեռնումը,
- դատարանի որոշումը կայացվել է և պատշաճ կերպով տեղեկացվել ազդակիր ՏՏ-երին/ԱԵԱ ,
- փոխհատուցման/վերականգնման գումարների փոխանցումը դատարանի դեպոզիտային հաշվին,

Համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի՝ դատական կարգով սեփականության օտարման գործընթացը հետևյալն է՝

- Ձեռքբերողը պետք է ուղարկի սեփականության օտարման պայմանագրի նախագիծը (ներառյալ վերազնահատումը, եթե կա) գույքի սեփականատիրոջը և բոլոր այն անձանց, ովքեր ձեռք բերվող գույքի նկատմամբ ունեն որևէ գույքային իրավունք:
- Եթե օտարման պայմանագրի նախագիծը ուղարկելուց հետո **3** ամսվա ընթացքում չի ստորագրվում օտարման պայմանագիրը, ապա ԲԵՑ-ը կարող է սկսել դատարան դիմելու գործընթացը՝ սեփականության իրավունքի փոխանցման համար:
- Գործընթացն սկսելու համար ԲԵՑ-ը պետք է դատարանի դեպոզիտային հաշվին փոխանցի փոխհատուցման հաշվարկված արժեքը, որը պետք է վճարվի ԱԵԱ և պետք է ծանուցի այդ մասին սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց: Եթե ԱԵԱ-ն ստանում է դեպոզիտ հանձնված գումարը, ապա սեփականության օտարման պայմանագիրը համարվում է կնքված: ԲԵՑ-ը ունի դատարանի դեպոզիտային հաշվի տվյալները: Մեկ բանկային աշխատանքային օրը բավարար է փոխանցում կատարելու համար:
- Եթե Օտարման պայմանագիրը չի ստորագրվում փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո **7** օրվա ընթացքում, ապա ԲԵՑ-ը պետք է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայց ներկայացնի դատարան: Դատարանում կարող է քննարկվել միայն առաջարկվող փոխհատուցման գումարը: Գույքի օտարման ձեռքբերողի իրավունքը չի կարող քննարկվել:
- ԲԵՑ-ն իրավունք ունի սեփականությունն օտարել միայն դատարանի որոշման ուժի մեջ մտնելու պահից:

➤ **Ի՞նչ կարող եմ անել, եթե ես իմ բողոքը, հարցը էլեկտրոնային նամակով ուղարկելու, կամ էլ երևան գրասենյակ բերելու հնարավորություն չունեմ:**

Խնդրում ենք, կապ հաստատել Ձեր համայնքում Տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակված պատասխանատուի հետ և նա կօգնի Ձեզ նամակ ուղարկել ԲԵՑ-ի էլ. փոստին:

Փոխհատուցման մանրամասները ներկայացված են ստորև աղյուսակում: Աղյուսակի ամբողջական տարբերակը, որը ներառում է նաև այլ հնարավոր ազդեցության տեսակներ, որոնցից նախագիծը նախնական տվյալներով խուսափել է, ներկայացված է Վերաբնակեցման քաղաքականության շրջանակում, որի բնօրինակը անգլերեն է և դրա թարգմանությունը հասանելի է տեղական ինքնակառավարման մարմիններում գյուղապետարաններ/քաղաքապետարաններ:

Փոխհատուցման հետ կապված իրավասությունները նշված են ստորև ներկայացված աղյուսակում՝

ԱԵԱ կատեգորիան	<u>Ազդեցության կատեգորիան</u>	Փոխհատուցում
Օրինական սեփականատերեր	Գյուղատնտեսական նշանակության հող	<p>Հողի սեփականատերերը կստանան (i) կանխիկ փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ամենաբարձրը կլինի)՝ գումարած 15% դրամական նպաստ: Որտեղ չկա հողի ակտիվ շուկա, փոխհատուցման համար կանխիկ գումարը հաշվարկվում է՝ հիմնվելով միևնույն համայնքում ԱԵԱ համար ընդունելի հավասարազոր բերքատու հողակտորների արժեքի վրա՝ գումարած 15% դրամական նպաստ, կամ (ii) ԱԵԱ համար ընդունելի նրա կողմից կորցրած հողակտորի արժեքին/բերքատվությանը հավասարազոր հողի փոխարինման միջոցով:</p> <p>Հողամասի ոչ անմիջականորեն վնասված հատվածները, որոնք մշակման համար այլևս կենսունակ չեն, ազդեցության գնահատումից հետո կընդգրկվեն ազդեցության ենթարկված հողերի ցանկում: Եթե ԱԵԱ գյուղատնտեսական նշանակության հողի վնասը կազմում է >10%, ԱԵԱ (հողատերերը, վարձակալները և կիսավարձակալ գյուղացիները) կստանան լրացուցիչ դրամական օժանդակություն լուրջ վնասների համար: Փոխհատուցումը ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից:</p>
Օրինական սեփականատերեր	Ոչ-գյուղատնտեսական նշանակության հող (բնակավայրային/առևտրային և նշանակության հող)	<p>Հողի սեփականատերերը կստանան (i) կանխիկ փոխհատուցում շուկայական արժեքով՝ գումարած 15% դրամական նպաստ: (ii) Եթե չկա հողի ակտիվ շուկա, փոխհատուցումը կլինի ԱԵԱ համար ընդունելի հողակտորների փոխարինմամբ կամ կանխիկ գումարի փոխհատուցմամբ՝ հիմնվելով փոխարինվող հողակտորի արժեքի վրա՝ գումարած 15% դրամական նպաստ:</p> <p>Հողամասի ոչ անմիջականորեն վնասված հատվածները, որոնք մշակման համար այլևս կենսունակ չեն, ազդեցության գնահատումից հետո կընդգրկվեն ազդեցության ենթարկված հողերի ցանկում: Հողի սեփականատերերը կստանան (i) կանխիկ փոխհատուցում, որը հավասարազոր է հողակտորի շուկայական արժեքին՝ գումարած 15% դրամական նպաստ: (ii) որտեղ չկա ակտիվ շուկա, ապա հողակտորը փոխարինել միևնույն համայնքում ԱԵԱ համար ընդունելի արժեքին/բերքատվությանը հավասարազոր հողակտորով, կամ (iii) կատարել կանխիկ գումարի փոխհատուցում, որը հավասարազոր է փոխարինված հողակտորի արժեքին՝ գումարած 15% դրամական նպաստ:</p> <p>Հողակտորները, որոնք դառնում են անանցանելի կամ գյուղատնտեսական կամ այլ նպատակով այլևս պիտանի չեն Ճրագրի անուղղակի ազդեցության հետևանքով, կընդգրկվեն Ճրագրի հետևանքով ազդեցության ենթարկված հողերի ցանկում:</p> <p>Փոխհատուցումը ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից:</p>
Օրինական սեփականատերեր	ԱԳ-ի տակ գտնվող (մասնակի կամ ամբողջությամբ) բնակավայրային տիպի հողեր	<p>ԱԵԱ-ց կտրվի հետևյալ ընտրության հնարավորությունը՝</p> <ol style="list-style-type: none"> 2. Ամբողջ հողակտորի արժեքի մասնիկ համար փոխհատուցում, որը հավասար է հողակտորի շուկայական արժեքի անկմանը, քանի որ հողի նշանակությունը բնակավայրայինից փոխվել է և դառել գյուղատնտեսական: 3. Անվտանգության գոտու տակ գտնվող հողի մասի օտարում/գնում: ԱԵԱ-ն կստանա փոխհատուցում, որը հավասար է օտարված մասի շուկայական արժեքին՝ գումարած 15% դրամական նպաստ:

ԱԵԱ կատեգորիան	Ազդեցության կատեգորիան	Փոխհատուցում
		4. Անվտանգության գոտու տակ գտնվող հողի փոխանակում միևնույն չափով և արժեքով ԱԵԱ համար ընդունելի նմանատիպ հողակտորով նույն համայնքում:
Բոլոր տիպի ԱԵԱ-ք, անկախ նրանց իրավական կարգավիճակից	Ծառեր	Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում՝ պետական կամ համայնային ծառերի դեպքում:
Բոլոր տիպի ԱԵԱ, անկախ իրավական կարգավիճակից	Մշակաբույսեր	Դրամական փոխհատուցումը կսահմանվի բերքի մեկ տարվա շուկայական արժեքի համարժեք չափով: Բերքի փոխհատուցումը կվճարվի և սեփականատերերին, և վարձակալներին՝ հաշվի առնելով վերջինների անհատական հողօգտագործման պայմանագրերը:
Օրինական աց-ված ԱԵԱ	Գյուղատնտեսական նշանակության հող	Կօրինականացվի և կվճարվի որպես օրինական սեփականատեր
Ոչ օրինական աց-ված ԱԵԱ	Հողատարածք	Փոխհատուցում ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ամենաբարձրը լինի) համահավասար միանվագ դրամական նպաստով՝ 1) < 1 տարի – 5%, 2) < 15 տարի – 14%, 3) < 25 տարի – 20%, 4) 25 տարի և ավել – 25%, համաձայն:
Օրինական վարձակալներ	Հողատարածք	Կօրինականացվեն և կփոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերերկամ կտրմադրվի նոր վարձակալություն: Եթե դա անհնար լինի, նա կստանա կանխիկ փոխհատուցում ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ամենաբարձրը լինի)՝ գումարած 15% դրամական օժանդակություն, որը համահավասար է հողի մնացած վարձակալած ժամկետի, որը հետևյալն է՝ 1) < 1 տարի – հողի արժեքի 5%, 2) < 15 տարի – հողի արժեքի 14%, 3) < 25 տարի – հողի արժեքի 20%, 4) 25 տարի և ավել – հողի արժեքի 25%:
Աղքատության և շեմից ցածր գտնվող SS-երի փոխհատուցում	Ցանկացած գույքը	Ի լրումն այս աղյուսակում նկարագրված իրավունքների, խոցելի խմբերը (ԱԵԱ, ուլքեր աղքատության շեմից ցածր են, այրիներից և ծերերից բաղկացած տնտեսություններ են) կստանան նվազագույն աշխատավարձի 6 ամսվա չափով վերականգնողական դրամական աջակցություն ամսական 50,000 ՀՀ դրամ (համարժեք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 6 ամսվա միևնույն աշխատավարձին):
ԱԵԱ, որոնք կորցրել են գյուղատնտեսական եկամտի 10% կամ ավելը	2գալի ազդեցությունների համար դրամական նպաստ	Ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին՝ գյուղատնտեսական եկամտի 10% կորստի դեպքում կտրվի ծանր վնասների դրամական աջակցություն գյուղատնտեսական եկամտի կորստի դիմաց, որը համարժեք կլինի կորցրած հողի տարեկան բերքի շուկայական արժեքին և SS-երի վերաբնակեցման համար (ներառյալ վերաբնակեցված վարձակալները)՝ ֆիզիկապես վերաբնակեցվելու դեպքում կտրվի ծանր վնասների դրամական աջակցություն 6 ամիս ժամանակահատվածի համար ամսական 50,000 ՀՀ դրամ (համարժեք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 6 ամսվա միևնույն աշխատավարձին):
Բոլոր տիպի ԱԵԱ-ք,	Ցանկացած գույք	ԱԵԱ կստանան հետևյալ ֆինանսական աջակցությունը՝ ա. Լիազորագրի համար ծախսերը/վճարները (տրամադրված

ԱԵԱ կատեգորի ան	<u>Ազդեցու թյան</u> <u>կատեգորի ան</u>	Փոխհատուցում
անկախ Նրանց իրավական կարգավիճա կից		արտերկրից/այստեղից), բ. Ազգային անձնագրի (Նույնականացման քարտի) Նորացման հետ կապված ծախսերը/վճարները, այն դեպքում, եթե ժամկետը լրացել է, գ. Ժառանգության ճանաչման հետ կապված ծախսերը/վճարները, դ. Գործարքային հարկերը և հողի ձեռքբերման հետ կապված վճարները կկատարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մի մաս:

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

*Եթե Դուք ունեք հարցեր կամ խորհրդատվության կարիք,
կարող եք կապ հաստատել ԲԷՑ-ի ներկայացուցչի հետ.*

ԲԷՑ-ի բողոքարկման հարցերով համակարգող՝ Միշա Բաղրամյան, հեռ. 010.72.03.80

Շինարարական ընկերության սոցիալական մասնագետ՝ Արմինե Պետրոսյան, հեռ. 077.85.38.36

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ՝

Հավելված 3-1

Հանրային քննարկման արձանագրություն

Ծրագրի համարը	Պատվիրատու	Ամսաթիվ
4961-001	Բարձրավիճակ էլեկտրացանցեր ՓԲԸ	2015թ-ի հոկտեմբերի 13 և 14
Ծրագիր.		
Հրգադան ՋԷԿ-ից Շինուհայր ե/կ 220կՎ էլեկտրահաղորդման գծի վերակառուցում իրականացման աջակցող խորհրդատվություն		
Թեմա.		
Հանրային լսումների արձանագրություն		
Ուղարկող.		
Արսեն Հայրիյան, Էներջի Ըղվայզորի		
Ստացող.		
Արթուր Կոչնակյան և Ստառ Մայքլ, Համաշխարհային բանկ Արամ Պետրոսյան և Լուսինե Չաքարյան, ԲԷՑ Դիավալ Սուլե, Լուսինե Չաքարյան և Չարուհի Հայրապետյան, ԿՊԹԼ Յուլյա Վեհի, Հայֆաբ ՕՅ		
Վայրը. Վայոց Ձորի և Սյունիքի քաղաքատարաններ		
Ժամ՝ 11:00, 14:00		

1. ՕՐԱԿԱՐԳ

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ժամկետները և այլ տեղեկություններ Բանախոս՝ Լ. Չաքարյան
- Վերաբնակեցման խնդիրները, տեղեկություն ծրագրի հիմնական փաստաթղթերի մասին (ՎԶԾ, ՎԳՊ) և հանրային քննարկումների նպատակը Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Բողոքների կարգավորման մեխանիզմ (դասընթաց համայնքի ղեկավարների համար) Բանախոս՝ Ա. Հայրիյան
- Հարց ու պատասխան

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՎԶԾ կետ 7-ի, 4-րդ հատվածի ՎԳՊ-ն հրապարակվել է 2015թ. սեպտեմբերի 18-ին: ՎԳՊ-ն հրապարակվել է ԲԷՑ-ի էջկայքում հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև տպագիր տարբերակով ներկայացվել է բոլոր ազգակիր համայնքներին: Հանրային լսումներ են կազմակերպվել 2015թ-ի հոկտեմբերի 13 և 14-ին Վայոց Ձորի մարզում Եղեգնաձորի քաղաքապետարանում և Սյունիքի մարզում Սիսիանի քաղաքապետարանում, ուր հրավիրվել էին 4-րդ հատվածի բոլոր համայնքները: Հանրային լսումներից երկու շաբաթ առաջ բոլոր ԱԵԱ-ները տեղեկացվել են հեռախոսով հանդիպման վայրի և ժամի մասին: Համապատասխան հայտարարություններ են ուղարկվել տեղական իշխանություններին էլեկտրոնային փոստով և փակցվել են Եղեգնաձորի և Սիսիանի քաղաքապետարանների հայտարարությունների տախտակին լսումներից երկու շաբաթ առաջ: Տեղական ԶԿ-ները տեղեկացվել են էլ.փոստով և ԶԿ ցանցով: Հիմնական հարցերը, խնդիրները և մտահոգությունները, համապատասխան պատասխանների հետ ներկայացված են ստորև աղյուսակում:

3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆՉԱԾ ՀԱՐՑԵՐԸ և ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

N	Հարց/մտահոգություն	Պատասխաններ
1	Ե՞րբ կսկսվի հողերի ձեռքբերման գործընթացը:	Հողերի ձեռքբերումը կսկսվի միայն ՀԲ-ի կողմից ՎԳՊ-ի վերջնական հաստատումից հետո:
2	Ի՞նչ գործողություն պետք է կատարվի շինարարությունից հետո մնացած քարերի հետ կապված:	Քարերը և մնացած այլ շինարարական աղբը Կապալառուի կողմից կհեռացվի տեղանքից:
3	Ինչպե՞ս պետք է փոխհատուցվի	Շինարարական աշխատանքների ընթացքում մշակաբույսերին և ծառերին պատճառված վնասը կփոխհատուցվի, համաձայն

շինարարական աշխատանքների ժամանակ վշակաբույսերին պատճառված վնասը:	ՎԳՊ-ի դրույթների (կանխիկ փոխհատուցում ներկա զուտ տարեկան բերքի շուկայական արժեքով):
4 Եթե լիազորագիր պահանջվի, ապա ո՞վ պետք է վճարի դրա համար:	Լիազորագրի հետ կապված ծախսերը/վճարները, ինչպես նաև հողի ձեռքբերման հետ կապված վճարները կմտնի Ծրագրի մեջ, որպես փոխհատուցման մաս:
5 Ի՞նչ կպատահի, եթե հողի սեփականատերը չհամաձայնվի վաճառել հողը ԲԷՑ-ին:	Այդ դեպքում հողը ձեռք կբերվի Գերակա Շահ ճանաչելու Որոշման սահմաններում դատական գործընթացի միջոցով: Ըստ ՀՀ օրենսդրության, եթե համաձայնագրի նախագիծը ներկայացնելուց հետո 3 ամսվա ընթացքում այն չստորագրվի, ապա մեկ ամսվա ընթացքում ԲԷՑ փոխհատուցումը կփոխանցի դատարանի հաշվին և այս մասին կտեղեկացնի ԱԵԱ-ին: Եթե մեկ շաբաթվա ընթացքում համաձայնագիրը չի ստորագրվում և ԱԵԱ-ն չի ստանում փոխհատուցումը, ապա ԲԷՑ-ը դիմում է դատարան:

4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ՎԳՊ հանրային քննարկման հրապարակում Եղեգնաձորում, 2015թ-ի հոկտեմբերի 13

h/h	Անուն, Ազգանուն	Կարգավիճակ
1	Ռազվիկ Բայադյան	Սեփականատեր
2	Հովիկ Մնացականյան	Մալիշկայի գյուղապետարանի ներկայացուցիչ
3	Էդվարդ Հովհաննիսյան	Եղեգնաձորի կադաստրի ներկայացուցիչ
4	Սամվել Մարտիրոսյան	Սեփականատեր
5	Մակիչ Կոստանյան	Սեփականատեր
6	Նաիրի Իսրայելյան	Սեփականատեր
7	Սամվել Հովսեփյան	Վայոց Ձորի մարզպետարանի ներկայացուցիչ, քաղաքաշինության բաժին
8	Սվետա Դովլաթյան	“Վարդաձոր” թերթի խմբագիր
9	Սուրեն Հարությունյան	Սեփականատեր
10	Ժիրայր Հարությունյան	Սեփականատեր
11	Սոնա Մարգարյան	տեղեկատվական բաժին
12	Հարություն Սարգսյան	Վայոց ձորի մարզպետ
13	Սամվել Թարվերոյան	Վայոց Ձորի մարզպետի տեղակալ
14	Միքայել Թևոսյան	Հայֆաբ խորհրդատվական/բնապահպանական փորձագետ
15	Լուսինե Չաքարյան	ԲԷՑ սոցիալական մասնագետ
16	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ սոցիալական մասնագետ
17	Արսեն Հայրիյան	Հայֆաբ իրավական/սոցիալական փորձագետ

ՀՎԳՊ հանրային քննարկման հրապարակում Սիսիան քաղաքում, 2015թ-ի հոկտեմբերի

14

h/h	Անուն, Ազգանուն	Կարգավիճակ
1	Արևհատ Ամիրյան	“Որորտան” թերթի խմբագիր
2	Կարեն Թունյան	Սիսիանի կադաստրի ղեկավար
3	Շահեն Եփրեմյան	Սեփականատեր
4	Համլետ Վարդանյան	Սեփականատեր

5	Գառնո Թորոսյան	Սեփականատեր
6	Սողոմոն Զակոբյան	Սեփականատեր
7	Մանուչար Մկրտչյան	Սառնակունքի գյուղապետ
8	Առուստամ Առուստամյան	Գորայքի գյուղապետ
9	Վարուժան Վարդանյան	Սառնակունքի գյուղապետարանի ներկայացուցիչ, հաշվապահ
10	Զակոբ Խաչատրյան	Ծղուկի գյուղապետարանի ներկայացուցիչ
11	Արսեն Զայրիյան	Չայֆաբ իրավական/սոցիալական փորձագետ
12	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ սոցիալական մասնագետ
13	Լուսինե Չաքարյան	ԲԷՏ սոցիալական մասնագետ

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Լուսմներն անցան արդյունավետ և մասնակիցների ակտիվ մասնակցությամբ: Հատված 4-ի 12 ազդակիր համայնքներից ներկա էին 2 ազդակիր համայնքների ղեկավարներ: Ներկայացվեցին վերաբնակեցման գործընթացի հիմնական փուլերը, ներառյալ ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը, ժամանակացույցը, փոխհատուցումները, գնահատման մեթոդաբանությունը և ձեռքբերման գործընթացը: Բողոքների կարգավորման մեխանիզմը ներակայացվեց և բոլոր համայնքապետերին տրվեցին դիմում-բողոքի ձևանմուշները: Ակտիվորեն մասնակցում էին լրատվամիջոցների և ՀԿ-ների ներկայացուցիչները: Միայն համայնքային և պետական հողեր ունեցող ազդակիր համայնքները ներկա չէին ՀԶ-ը:

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ





ՀԶ Եղեգևածորու





ՀԶ Սիսիանում

Հանրային քննարկման արձանագրություն

Ծրագրի համարը	Պատվիրատու	Ամսաթիվ
4961-001	«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ	2016թ-ի օգոստոսի 17
Ծրագիր.		
Հրգադան ՋԷԿ-ից Շինուհայր ե/կ 220կՎ Էլեկտրահաղորդման գծի վերակառուցում իրականացմանն աջակցող խորհրդատվություն		
Թեմա.		
Հանրային լուսմների արձանագրություն		
Ուղարկող.		
Արսեն Հայրիյան, Էներջի Ընթացողի և Լուսինե Չաքարյան, ԲԷՑ		
Ստացող.		
Արթուր Կոչնակյան և Ջեննիֆեր Շկաբատուր, Համաշխարհային բանկ Արամ Պետրոսյան, ԲԷՑ Դավալ Սուլե, Արմինե Պետրոսյան և Չարուհի Հայրապետյան, ԿՊԹԼ Յուլյա Վեհի, Հայֆաբ ՕՅ		
Վայրը. Վայոց Ձորի և Սյունիքի քաղաքատարաններ		
Ժամ՝ 11:00, 14:00		

5. ՕՐԱԿԱՐԳ

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ժամկետները և այլ տեղեկություններ Բանախոս՝ Լ. Չաքարյան
- Վերաբնակեցման խնդիրները, տեղեկություն ծրագրի հիմնական փաստաթղթերի մասին (ՎԶԸ, ՀՎԳՊ) և հանրային քննարկումների նպատակը Բանախոս՝ Ա. Հայրիյան
- Բողոքների կարգավորման մեխանիզմ (դասընթաց համայնքի ղեկավարների համար) Բանախոս՝ Լ. Չաքարյան, Ա. Հայրիյան
- Հարց ու պատասխան

6. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՎԶԸ կետ 7-ի, 4-րդ հատվածի վերանայված ՎԳՊ-ն հրապարակվել է 2016թ. հուլիսի 18-ին: ՀՎԳՊ-ն հրապարակվել է ԲԷՑ-ի էլեկտրոնային հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև տպագիր տարբերակով ներկայացվել է բոլոր ազգակիր համայնքներին: Հանրային լուսմներ են կազմակերպվել, համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

	Համայնք	Ժամ	Կոնտակտային անձ
Սյունիքի մարզ			
1	Անգեղակոթ	11:30	Արսեն Խաչատրյան, գյուղապետ
2	Սպանդարյան	12:15	Վարուժան Վարդանյան, գյուղապետարանի հաշվապահ
3	Սառնակունք	12:40	Մանուչար Մկրտչյան, գյուղապետ
4	Ծղուկ	13:10	Հակոբ Խաչատրյան, գյուղապետարանի հաշվապահ
5	Գորայք	13:30	Առուստամ Առուստամյան, գյուղապետ
Վայոց ձորի մարզ			
6	Մալիշկա	15:00	Հովիկ Մնացականյան, գյուղապետի տեղակալ
7	Ագարակաձոր	15:45	Սամվել Մարգարյան, գյուղապետի տեղակալ
8	Եղեգնաձոր	16:30	Վարդան Ավագյան, գյուղապետի տեղակալ

Համապատասխան համայնքների գյուղապետերի աջակցությամբ հանրային լուսմներն իրականացան 2016թ-ի օգոստոսի 17-ին: Հանրային լուսմներից երկու շաբաթ առաջ բոլոր ԱԵԱ-ները տեղեկացվել են հեռախոսով հանդիպման վայրի և ժամի մասին: Համապատասխան հայտարարություններ են ուղարկվել տեղական իշխանություններին Էլեկտրոնային փոստով և փակցվել են քաղաքապետարանների հայտարարությունների տախտակին լուսմներից երկու շաբաթ առաջ: Տեղական ՀԿ-ները տեղեկացվել են էլ.փոստով և ՀԿ ցանցով:

Հիմնական հարցերը, խնդիրները և մտահոգությունները, համապատասխան պատասխանների հետ ներկայացված են ստորև աղյուսակում:

7. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆՉԱԾ ՀԱՐՑԵՐԸ և ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

N	Հարց/մտահոգություն	Պատասխաններ
1	Ե՞րբ կտրամադրվի իմ հողի համար փոխհատուցումը /Անգեղակոթ/:	Ձեր հողը գրանցված չէ Պետական Կադաստրում: Գրանցման աշխատանքներն արդեն ավարտվել են , և շուտով Դուք կստանաք փոխհատուցումը:
2	Ե՞րբ մենք կստանանք փոխհատուցումը բնակավայրային հողի ԱԳ-ի համար /Սպանդարյան/:	Փոխհատուցման վճարումը կսկսվի հաջորդ շաբաթվա ընթացքում:
3	Իմ հողատարածքը վնասվել է շինարարական աշխատանքների ընթացքում: Աշխատանքներից հետո երեք փոսեր են մնացել իմ հողում: Ե՞րբ կլցվեն այդ փոսերը /Սպանդարյան, հենարան 196 /:	Ինչ վերաբերում է մոտեցման ճանապարհների փոխհատուցմանը, մենք կգրանցենք Ձեր բողոքը և կփոխանցենք խմբին, ով պատասխանատու է մոտեցման ճանապարհների փոխհատուցման համար: Երեք փոսերն էլ կփակվեն մինչև երկուշաբթի:
4	Իմ գույքն արգելանքի տակ է: Փոխհատուցումը փոխանցվել է, բայց ես չեմ կարող այն ստանալ: Խնդրում եմ խորհուրդ տալ, թե ինչպես կարող եմ ստանալ փոխհատուցումը /Սպանդարյան, հենարաններ 194, 195/:	Մենք կուսումնասիրենք խնդիրը, և Ձեզ կտրամադրենք խորհրդատվություն:
5	Մենք խնդիր ունենք՝ կապված ժառանգության ճանաչման հետ: Խնդրում ենք մեզ խորհուրդ տալ /Սպանդարյան /:	Ժառանգության ճանաչման գործընթացի ընթացքում Ձեզ կտրամադրվի աջակցություն:
6	Մենք հարցեր չունենք՝ կապված հենարանի տեղադրման համար պահանջվող հողի հետ, բայց մեզ մոտ հարցեր կան բնակավայրային հողերի ԱԳ-ի վերաբերյալ: Ե՞րբ կսկսվի փոխհատուցման գործընթացը /Ծղուկ/:	Ձեր համայնքում արդեն սկսվել է փոխհատուցման գործընթացը:
7	Որոշ վնաս է հասցվել համայնքային ենթակառուցվածքին: Ո՞վ է վճարելու դրա համար /Ագարակածոր/:	Համաձայնություն է ձեռք բերվել, որ համայնքի ղեկավարի տեղակալը ավելի մանրամասն տեղեկատվություն կտրամադրի այս խնդրի վերաբերյալ, և ԿՓԹԼ-ն կլուծի խնդիրը:
8	Իմ գլխավորությամբ ՏՏ-ն խոցելի է, և միաժամանակ աղքատ ընտանիքը, որն առանձին ՏՏ է, նույնպես խոցելի է: Արդյոք մենք երկուսս էլ կստանանք խոցելության նպաստ:	Այո, երկու տնային տնտեսություններն էլ կստանան խոցելիության նպաստ:

8. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Վերանայված ՎԳԴ-ի հանրային քննարկման հրապարակում, 2016թ-ի օգոստոսի 17

h/h	Անուն, Ազգանուն	Կարգավիճակ
1	Ալինե Պանյան	Անգեղակոթի գյուղապետարանի ներկայացուցիչ
2	Վազգեն Ենոքյան	Անգեղակոթի գյուղապետի տեղակալ
3	Նաիրա Դանիելյան	Սեփականատեր, Անգեղակոթ
4	Սեյրան Եփրեմյան	Սեփականատեր, Անգեղակոթ
5	Չինար Բաղիկյան	Սեփականատեր, Անգեղակոթ
6	Գարեգին Կարապետյան	Սեփականատեր, Անգեղակոթ
7	Շահեն Եփրեմյան	Սեփականատեր, Սպանդարյան
8	Սենիկ Նազարյան	ԱԳ-ի սեփականատեր, Սպանդարյան
9	Ֆելիքս Ազիզյան	ԱԳ-ի սեփականատեր, Սպանդարյան
10	Վրույր Կարապետյան	ԱԳ-ի սեփականատեր, Սպանդարյան

11	Գևորգ Յակոբյան	Սեփականատեր, Անգեղակոթ
12	Վալեր Ազիզյան	ԱԳ-ի սեփականատեր, Սպանդարյան
13	Իվան Յայրապետյան	ԱԳ-ի սեփականատեր, Սպանդարյան
14	Սաչգիս Մաղաքյան	Սեփականատեր, Սպանդարյան
15	Յրաչ Թադևոսյան	ԱԳ-ի սեփականատեր, Սպանդարյան
16	Վարուժան Վարդանյան	Սպանդարյանի գյուղապետարանի ներկայացուցիչ
17	Գարեգին Գյուլամիրյան	ԱԳ-ի սեփականատեր, Սպանդարյան
18	Մեսրոպ Ամիրյան	Ծղուկի համայնքապետ
19	Գայանե Գասպարյան	ԱԳ-ի սեփականատեր, Ծղուկ
20	Յովիկ Մնացականյան	Մայիշկայի գյուղապետարանի ներկայացուցիչ
21	Միեր Սահակյան	Սեփականատեր, Անգեղակոթ
22	Աշոտ Ստեփանյան	Սեփականատեր, Անգեղակոթ
23	Ժորիկ Մինասյան	Սեփականատեր, Անգեղակոթ
24	Սպարտակ Սարոյան	Սեփականատեր, Անգեղակոթ
25	Վանիկ Ներսիսյան	Սեփականատեր, Անգեղակոթ
26	Մերուժան Մակարյան	Սեփականատեր, Անգեղակոթ
27	Արթուր Ավետիսյան	Սեփականատեր, Անգեղակոթ
28	Խաչատուր Խաչատրյան	Սեփականատեր, Անգեղակոթ
29	Սամվել Մանուկյան	Սեփականատեր, Անգեղակոթ
30	Մելսիդա Թադևոսյան	Սեփականատեր, Անգեղակոթ
31	Սամվել Մարգարյան	Ագարակաձորի գյուղապետարանի ներկայացուցիչ
32	Զանիկ Դավթյան	Սեփականատեր, Եղեգնաձոր
33	Աշոտ Ալվազյան	Սեփականատեր, Եղեգնաձոր
34	Վարդան Ավագյան	Եղեգնաձորի քաղաքապետի տեղակալ
35	Լուսինե Չաքարյան	ԲԷՑ սոցիալական մասնագետ
36	Արսեն Յայրիյան	Յայֆաբ իրավական/սոցիալական փորձագետ
37	Կարեն Յովհաննիսյան	ԿՓԹԼ թարգմանիչ
38	Բասաբ Բանդիդպաղիյայ	ԿՓԹԼ ծրագրի ղեկավար

9. ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Լսումներն անցան արդյունավետ և մասնակիցների ակտիվ մասնակցությամբ: Հատված 4-ի 8 ազդակիր համայնքներից, որտեղ խնդիրներ կային՝ կապված սխալ քարտեզների հետ, 4 ազդակիր համայնքներից մասնակցությունը շատ լավ էր: Սառնակունք, Գորայք և Մայիշկա համայնքներից ոչ մեկ չէր եկել հանրային լսումների: Մայիշկայի գյուղապետարանի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ օգոստոսը Յայաստանում համարվում է ակտիվ գյուղատնտեսական շրջան, և ԱԵԱ-ից շատերը զբաղված են դաշտային աշխատանքներով: Համեմայն դեպս, Բողոքների կարգավորման համակարգողի և ԲԷՑ-ի սոցիալական մասնագետի կոնսուլտային տվյալները տրամադրվեցին, որևէ հարցի դեպքում նրանց հետ կապվելու համար: Ներկայացվեցին վերաբնակեցման գործընթացի հիմնական փուլերը, ներառյալ ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը, ժամանակացույցը, փոխհատուցումները, գնահատման մեթոդաբանությունը և ձեռքբերման գործընթացը: Բողոքների կարգավորման մեխանիզմը ներակայացվեց և բոլոր համայնքապետերին տրվեցին դիմում-բողոքի ձևանմուշները:

10. ՀԱՆՐԱՅԻՆ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ



Սյունիք, Անգեղակոթ



Սյունիք, Սպանդարյան



Սյունիք, Ծղուկ



Վայոց Ձոր, Ագարակաձոր

Հանրային քննարկումների օրակարգ

- ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
- ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
- վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը՝ փուլերը, ժամկետները
- տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին (ՎԶԾ, ՀՎԳՊ, Գերակա Շահի վերաբերյալ օրենք)
- փոխհատուցման ենթակա իրավունքները
- փոխհատուցման իրավասությունները (հիմնվելով ՎԶԾ-ի իրավունքների աղյուսակի վրա)
- հողի, կառույցների, գյուղատնտեսական մշակաբույսերի, ծառերի և այլնի գնահատման մեթոդաբանությունը
- հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումների ժամանակացույցը

Համայնքների ցանկը համապատասխան հանրային քննարկումների ամսաթվերով

N	Համայնք	Հանրային լսումների ամսաթիվը
1	Եղեգնաձոր	Ապրիլ 14, 2015թ.
2	Ագարակաձոր	Ապրիլ 14, 2015թ.
3	Մալիշկա	Ապրիլ 14, 2015թ.
4	Արին	Ապրիլ 14, 2015թ.
5	Գնդեվազ	Մարտ 10, 2015թ.
6	Սարավան	Մարտ 10, 2015թ.
7	Գորայք	Ապրիլ 29, 2015թ.
8	Ծղուկ	Ապրիլ 29, 2015թ.
9	Սառնակունք	Մարտ 10, 2015թ.
10	Սպանդարյան	Ապրիլ 28, 2015թ.
11	Անգեղակոթ	Ապրիլ 28, 2015թ.



ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՀԱՆՐԱՅԻՆ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրազդանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի վերաբերակցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 10 մարտի, 2015

Վայր. Սառնակունքի գյուղապետարան, Սյունիքի մարզ

Ժամ. 12:00

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Ծրագրի շրջանակում վերաբերակցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբերակցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Սառնակունքի գյուղապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Ա. Պետրոսյանը պատասխանեց նաև առաջացած հարցերին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Հնարավոր է, որ կառավարությունը վարձակալի իմ հողը, գնելու փոխարեն:

Պատասխան. Ա. Պետրոսյան

Ոչ: Կառավարությունը գնելու է հողակտորները, և սեփական և համայնքային:

Մասնակիցների ցանկ, Սառնակունք

h/h	Անուն, Ազգանուն	Կարգավիճակ
1	Կրասիկ Մնացականյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
2	Գուրգեն Մկրտչյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
3	Խաչատրյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ

4	Ստեփան Սահակյան	Սեփականատիրոջ
5	Նարեկ Առաքելյան	Սեփականատիրոջ
6	Աստղիկ Ենոքյան	Գյուղապետարանի մասնագետ
7	Ամալիա Մկրտչյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
8	Մանուչար Մկրտչյան	Համայնքի ղեկավար
9	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
10	Սիրանուշ Ռաֆայելյան	ԿՓԹԼ
11	Ռոբերտ Առաքելյան	ԲԷՑ





ՀԱՆՐԱՅԻՆ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 10 մարտի, 2015

Վայր. Սարավանի գյուղապետարան, Վայոց Ձորի մարզ

Ժամ. 14:00

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Սարավանի գյուղապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Ա. Պետրոսյանը պատասխանեց նաև առաջացած հարցերին:

Հարց ու պատասխան

Հարց. Սեփականատեր

Ե՞րբ է տեղի ունենալու հողի փաստացի առքուվաճառքը: Կարո՞ղ եմ գարնանացանը անել ինչպես միշտ:

Պատասխան. Ա. Պետրոսյան

Այո, գարնանացանը կհասցնեք անել:

Հարց. Սեփականատեր

Եթե հենարանը ընկնում է իմ հողամասի մեջտեղում, ինպե՞ս է ծանր տեխնիկան անցնելու շին. հրապարակ

Պատասխան. Ռ. Առաքելյան

Հատուկ ընթացակարգային փաստաթուղթ է մշակվում մոտեցման ճանապարհների վերաբերյալ: Մոտեցման ճանապարհի վրա եղած բոլոր մշակաբույսերի կորուստները կփոխհատուցվեն:

Մասնակիցների ցուցակ, Սարավան

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Սուքիաս Ավագյան	Սեփականատեր
2	Պերճ Մովսիսյան	Սեփականատեր

3	Ռազմիկ Մանուկյան	Առաջատար մասնագետ
4	Մուշեղ Ստեփանյան	Հոդօգտագործող
5	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
6	Սիրանուշ Ռաֆայելյան	ԿՓԹԼ
7	Ռոբերտ Առաքելյան	ԲԷՑ



ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 10 մարտի, 2015թ.

Վայր. Գնդեվազի գյուղապետարան, Վայոց Ձորի մարզ

Ժամ. 15:30

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն LSԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Գնդեվազի գյուղապետարանում ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Ա. Պետրոսյանը պատասխանեց նաև առաջացած հարցերին:

Հարց ու պատասխան

Հարց. Սեփականատեր

Հնարավոր է հենարանը մի փոքր տեղաշարժել, որպեսզի այն կառուցվի մասնավոր հողամասերից դուրս:

Պատասխան. Ա. Պետրոսյան

Ոչ: Հենարանների կորոդինատները ամբողջ ծրագծի համար հաստատված են: Ծրագիրը նախագծվել է այնպես, որ այն որքան հնարավոր է շրջանցի մասնավոր ունեցվածքը (հողամասերը և տները): Սակայն 230 կիլոմետրանոց ծրագիծ կառուցելիս հնարավոր չէ բոլորովին չդիպչել մասնավոր հողերին:

Հարց. Սեփականատիրոջ ներկայացուցիչ

Մեր հողակտորի սեփականատերը իմ մայրն էր: Նա մահացել է: Ես կստանամ փոխհատուցում հողատարածքի կորստի դիմաց:

Պատասխան. Ա. Պետրոսյան, Ռ. Առաքելյան

Այո: Հողակտորը կվերագրանցվի ձեր անունով և դուք կստանաք օտարվող տարածքի գնին համապատասխան գումարը: Մեր մասնագետները կաշխատեն ձեզ հետ և կօգնեն հողի վերագրանցման հարցում:

Մասնակիցների ցուցակ, Գնդեվազ

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Միհրան Հակոբջանյան	Համայնքային հողի օգտագործող (վարձակալության պայմանագրով)
2	Մխիթար Մարգարյան	Սեփականատեր

3	Հայրապետ Մկրտչյան	Համայնքի ղեկավար
4	Արամ Հարությունյան	Սեփականատեր
5	Մխիթար Սահակյան	Սեփականատեր
6	Նահրի Նիկալայան	Գյուղի բնակիչ
7	Մեսրոպ Հարությունյան	Սեփականատեր
8	Բարսեղ Հարությունյան	Գյուղի բնակիչ
9	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
10	Սիրանուշ Ռաֆայելյան	ԿՓԹԼ
11	Ռոբերտ Առաքելյան	ԲԷՑ



ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 14 ապրիլի, 2015

Վայր. Արինի գյուղապետարան, Վայոց Ձորի մարզ

Ժամ. 10:00

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Լ. Չաքարյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Արինի գյուղապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Անվտանգության գոտու տարածքները վտանգավոր են մարդկանց համար:

Պատասխան. Լ. Չաքարյան

Ոչ: Գետնից պահանջված բարձրության ապահովման, ինչպես նաև պահանջված լարման և հոսանքի ուժի պահպանման դեպքում, էլեկտրական լարերի առաջացրած մագնիսական դաշտը վտանգավոր չէ մարդկանց համար:

Հարց. սեփականատեր

Հնարավոր է, որ ԲԷՑ-ը գնի իմ ամբողջ հողատարածքը:

Պատասխան. Ա. Պետրոսյան

Այո: Գերակա շահի մասին օրենքի ուժի մեջ մտնելուց երկու ամսվա ընթացքում ազդակիր անցը կարող է դիմել ԲԷՑ-ին՝ ազդեցության ենթարկված տարածքը ամբողջությամբ ձեռք բերելու պահանջով: Համաձայն ՀՀ օրենսդրության, եթե ձեր հողը կորցնում է իր տնտեսական կամ գործառնական նշանակությունը, ապա ԲԷՑ-ը կգնի ամբողջ հողակտորը: Եթե դուք օգնության կարիք ունեք դիմումը ձևակերպելու հարցում, կարող եք դիմել համայնքի ղեկավարին կամ ուղղակիորեն դիմումների / բողոքների կոորդինատորին:

Մասնակիցների ցուցակ, Արին

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Դավիթ Իսրայելյան	Հոդօգտագործող
2	Ահարոն Իսրայելյան	Հոդօգտագործող
3	Մակիչ Կոստանյան	Հոդօգտագործող
4	Սամվել Առաքելյան	Սեփականատեր

5	Սեյրան Ֆրանգուլյան	Գյուղի բնակիչ
6	Մարինե Բադայան	Աշխատակազմի քարտուղար
7	Հագարապետ Աղաջանյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
8	Նովարդ Եղոյան	Գյուղապետարանի աշխատակից
9	Վազգեն Սայադյան	Համայնքի ղեկավար
10	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
11	Շուշան Զոչարյան	Ֆինսափ
12	Լուսինե Չաքարյան	ԲԷՑ



ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի
Վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 14 ապրիլի, 2015

Վայր. Մալիշկայի գյուղապետարան, Վայոց Ձորի մարզ

Ժամ. 11:30

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Լ. Չաքարյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Մալիշկայի գյուղապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԵՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Ե՞րբ են շինարարական աշխատանքները սկսվելու մեր գյուղում:

Պատասխան. Լ. Չաքարյան

Մոտավորապես մեկ ամսից:

Հարց. սեփականատեր

Կարո՞ղ եք ասել փոխհատուցման մոտավոր գումարը:

Պատասխան. Լ. Չաքարյան

Ոչ հենց հիմա: Այն կհստակեցվի երբ մեր մասնագետներն ավարտեն գույքագրման և գնահատման գործընթացը:

Հարց. սեփականատեր

Մենք կարո՞ղ ենք հիմա իմանալ, թե մեր հողամասի որ մասում է կառուցվելու հենարանը:

Պատասխան. Լ. Չաքարյան

Երբ որ մասնագետները գան և բերեն քարտեզները և հենարանի կոորդինատները, դուք կտեսնեք թե ձեր հողակտորի որ մասում է ընկնում աշտարակը:

Հարց. սեփականատեր

Իմ ներկայությունը պարտադի՞ր է գույքագրման ընթացում:

Պատասխան. Լ. Չաքարյան

Ոչ միայն ձեր ներկայությունը, այլ նաև ձեր ակտիվ համագործակցությունը մեր մասնագետների հետ խիստ ցանկալի են:

Մասնակիցների ցուցակ, Մալիշկա

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Գևորգ Չաքարյան	Սեփականատեր
2	Արմեն Այվազյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
3	Արամ Չաքարյան	Սեփականատեր
4	Միեր Մովսիսյան	Համայնքի ղեկավար
5	Խաչատուր Խաչատրյան	Սեփականատեր
6	Սերյոժա Մովսիսյան	Սեփականատեր
7	Ռոբերտ Սարգսյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
8	Թամար Շահբազյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
9	Մակար Շահբազյան	Սեփականատեր
10	Արծրուն Ստեփանյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
11	Մելիք Գասպարյան	Սեփականատեր
12	Նորիկ Մնացականյան	Աշխատակազմի ղեկավար
13	Մարգարիտ Այվազյան	Գյուղապետարանի աշխատակից
14	Սամվել Բաբոյան	Սեփականատեր
15	Արթուր Բաբայան	Սեփականատեր
16	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
17	Շուշան Զոչարյան	Ֆինափ
18	Լուսինե Չաքարյան	ԲԷՑ



ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի
վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 14 ապրիլի, 2015

Վայր. Ագարակաձորի գյուղապետարան, Վայոց Ձորի մարզ

Ժամ. 14:00

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Լ. Չաքարյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Ագարակաձորի գյուղապետարանում ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Նշահարումները արվել են իմ հողամասի մեջտեղում, առանց որևէ նախագրուշացման

Պատասխան. Լ.Չաքարյան

Ձեզ նախապես չգուշացնելը սխալ է եղել: Հենարանի ճշգրիտ դիրքը ձեր հողամասում պարզ կլինի երբ չափագրող և գնահատող խումբը սկսի աշխատանքը: Եթե անհրաժեշտ լինի մոտեցման ճանապարհի բացել, համապատասխան կորուստները կփոխհատուցվեն:

Հարց. սեփականատեր

Ի՞նչ կլինի, եթե ես չտամ իմ համաձայնությունը իմ հողի վրա հենարան կառուցելու համար:

Պատասխան. Ա.Պետրոսյան

Երբ գույքագրման և գնահատման աշխատանքներն ավարտվեն, ձեզ կտրվի պայմանագրի նախագիծ: Դուք կարող եք չստորագրել այն: Այդ դեպքում փոխհատուցման գումարը կփոխանցվի ձեր անունով բացված բանկային հաշվին, և հողը կօտարվի՝ ՀՀ կառավարության կողմից ընդունված Գերակա շահի օրենքի համաձայն:

Հարց. սեփականատեր

Իմ հողամասը պաշտոնապես գրանցված է իմ կնոջ անունով: Կիսս մահացել է: Արդյո՞ք ես պետք է վերագրանցեմ հողը իմ անունով:

Պատասխան. Ա.Պետրոսյան, Լ.Չաքարյան

Այո: Ծրագիրը կօգնի ձեզ հողի վերագրանցման հարցում և կփոխհատուցի համապատասխան ծախսերը: Խնդրում ենք, որ դուք պահպանեք բոլոր չեքերը, որոնք կհաստատեն ձեր կատարած ծախսերը մատուցված ծառայությունների դիմաց:

Չարգ. սեփականատեր

Մեր գյուղով անցնող մի էլեկտրական գիծ արդեն կա, 35 kV.

Պատասխան. Լ.Չաքարյան

Դա ուրիշ գիծ է: Այս ծրագիրը կառուցում է մեկ այլ, ավելի վստահելի և հզոր գիծ, 220 kV.

Մասնակիցների ցուցակ, Ագարակաձոր

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Պարզև Միրզոյան	Համայնքի ղեկավար
2	Թամարա Մուրադյան	Սեփականատեր
3	Վոսկենատ Գևորգյան	Սեփականատեր
4	Շողիկ Ասատրյան	Սեփականատեր
5	Միասնիկ Աբրահամյան	Սեփականատեր
6	Միլիտոն Սահակյան	Սեփականատեր
7	Սամվել Մանուկյան	Սեփականատեր
8	Գևորգ Գևորգյան	Սեփականատեր
9	Վանիկ Ներսիսյան	Սեփականատեր
10	Խաչատուր Խաչատրյան	Սեփականատեր
11	Սամվել Մարգարյան	Համայնքի ղեկավարի տեղակալ
12	Հակոբ Մահարյան	Սեփականատեր
13	Ռազմիկ Բայաթյան	Սեփականատեր
14	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
15	Շուշան Զոչարյան	Ֆինափ
16	Լուսինե Չաքարյան	ԲԷՑ



ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 14 ապրիլի, 2015

Վայր. Եղեգնաձորի քաղաքապետարան, Վայոց Ձորի մարզ

Ժամ. 16:30

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Լ.Չաքարյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Եղեգնաձորի քաղաքապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Եթե հենարանն ընկնում է իմ հողամասի կենտրոնում, արդյո՞ք ամբողջ հողամասը չի վնասվի:

Պատասխան. Լ.Չաքարյան

Ծրագիրն ունի հատուկ քաղաքականություն մոտեցման ճանապարհների վերաբերյալ: Մոտեցման ճանապարհի տարածքում եղած բոլոր ծառերի ու մշակաբույսերի կորուստները կփոխհատուցվեն:

Հարց. սեփականատեր

Անվտանգության գոտում գտնվելը արդյո՞ք վտանգավոր է մարդկանց համար

Պատասխան. Լ.Չաքարյան

Ոչ: Էլեկտրական լարերն առաջացնում են մագնիսական դաշտ, որը վտանգ է ներկայացնում միայն այն ժամանակ, երբ մարմինը գտնվում է անշարժ վիճակում: Բայց երբ մարդը շարժման մեջ է, օրինակ, աշխատում է հողամասում, մագնիսական դաշտն անվտանգ է:

Մասնակիցների ցուցակ, Եղեգնաձոր

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Վարդան Ավագյան	Համայնքի ղեկավարի տեղակալ
2	Սուրեն Հարությունյան	Սեփականատեր
3	Ժիրայր Հարությունյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ

4	Արմեն Աղաջանյան	Ճարտարապետ
5	Արամայիս Դավթյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
6	Աշոտ Այվազյան	Գյուղի բնակիչ
7	Սոնա Աբրահամյան (Գևորգյան)	Սեփականատեր
8	Գաբրիել Գաբրիելյան	Էներգետիկայի նախարարության ներկայացուցիչ
9	Յերիքնազ Մարգարյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
10	Արմինե Պետրոսյան	KPTL
11	Շուշան Զոչարյան	Finapp
12	Լուսինե Չաքարյան	HVEN



ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի
վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 28 ապրիլ, 2015

Վայր. Անգեղակոթ village mayor's office, Syunik marz

Ժամ. 12:00

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Անգեղակոթի գյուղապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Ե՞րբ են աշխատանքները սկսվելու:

Պատասխան. Ա.Պետրոսյան

Փաստացի աշխատանքները սկսելուց առաջ, մի քանի գործողություններ պետք է արվեն: Մեր այս հանդիպումից քիչ անց կժամանի գույքագրողների խումբը և կսկսի աշխատել յուրաքանչյուր ազդակիր հողամասում: Այնուհետև գնահատող խումբը կգնահատի համապատասխան գույքը, այսինքն հողատատարածքները, մշակաբույսերը, ծառերը, եթե այդպիսիք կան: Դրանից հետո կկազմվի նկարագրության արձանագրություն, որտեղ նշված կլինի փոխհատուցման գումարը: Նկարագրության արձանագրությունը պետք է ստորագրվի յուրաքանչյուր սեփականատիրոջ կողմից: Շինարարական աշխատանքները կսկսվեն միայն այն բանից հետո, երբ փոխհատուցման գումարը փոխանցված կլինի սեփականատիրոջ անունով բացված բանկային հաշվին:

Հարց. սեփականատեր

Իմ հողը ամուսնուս անունով է ձևակերպված, իսկ ամուսինս մահացել է: Ո՞վ է ստանալու փոխհատուցման գումարը:

Պատասխան. Ա.Պետրոսյան

Ձեր հողամասը կվերագրանցվի ձեր անունով և կադաստրի գրասենյակը ձեզ կտրամադրի Նոր սեփականության վկայական: ԲԷՑ-ի կողմից նշանակված է հատուկ իրավաբան, որը ձեզ կօգնի վերագրանցել ձեր հողամասը: Իրավաբանի հեռախոսահամարը նշված է ծրագրի տեղեկատվական գրքուկում, որը ես հենց Նոր ներկայացրեցի և բաժանեցի հանցիպման մասնակիցներին: Բացի այդ, այսուհետ գյուղապետարանում հայտարարություն է փակցված լինելու, որտեղ նույնպես կա

գրված ԲԵՑ-ի կոնտակտային հեռախոսահամարը: Հողի վերագրանցման հետ կապված բոլոր ծախսերը փոխհատուցվելու են:

Հարց. սեփականատեր

Ի՞նչ կլինի, եթե ես չտամ իմ համաձայնությունը:

Պատասխան. Ա.Պետրոսյան

Դուք իրավունք ունեք չստորագրել նկարագրության արձանագրությունը: Այդ դեպքում փոխհատուցման գումարը կփոխանցվի ձեր անունով բացված բանկային հաշվին, և հողը կօտարվի ՀՀ կառավարության կողմից ընդունված Գերակա շահի օրենքին համաձայն:

Հարց. սեփականատեր

Իսկ եթե հենարանը կառուցվում է իմ հարևանի հողի վրա, բայց դրան հասնելու համար շինարարները պետք է անցնեն իմ հողամասի միջով:

Պատասխան. Ա.Պետրոսյան, համայնքի ղեկավար, ԲԵՑ Գործի մասնաճյուղի ներկայացուցիչ

Նման դեպքերի, այսինքն մոտեցման ճահապարհների համար, ծրագիրը մշակել է հատուկ քաղաքականություն: Այս գյուղում մենք արդեն ունեցել ենք նախատեսված: Այն սեփականատերերը, որոնց հողամասերով անցնում են մոտեցման ճանապարհները, օգնել են մեզ իրենց խորհուրդներով թե որտեղով անցկացնել մոտեցման ճանապարհը, որպեսզի հասցված վնասը լինի նվազագույնը: Մոտեցման ճանապարհի վրա գտնվող բոլոր ծառերն ու մշակաբույսերը նույնպես փոխհատուցվել են:

Մասնակիցների ցուցակ, Անգեղակոթ

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Չարուհի Բաբայան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
2	Ռայա Մարգարյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ; գյուղապետարանի աշխատակից
3	Յարգև Խաչատրյան	Սեփականատեր
4	Կիրոշ Աբրահամյան	Սեփականատեր
5	Հովհաննես Օհանյան	Սեփականատեր
6	Բաղիլ Խաչատրյան	Սեփականատեր
7	Արմեն Խաչատրյան	Համայնքի ղեկավար
8	Վալերի Թադևոսյան	Սեփականատեր
9	Գերասիմ Աղամյան	Սեփականատեր
10	Պետրոս Գրիգորյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
11	Ռուստամ Մանուկյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
12	Մնացական Բաղայան	Սեփականատեր
13	Գրիգոր Պողոսյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
14	Ռոմիկ Հարությունյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
15	Վազգեն Ենոքյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
16	Վալերի Հայրապետյան	ԲԵՑ Գործի մասնաճյուղ
17	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
18	Շուշան Բոչարյան	Ֆինաֆ
19	Միքայել Թևոսյան	Energy Advisory ՍՊԸ, խորհրդատու



ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի
վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 28 ապրիլի, 2015

Վայր. Սպանդարյանի գյուղապետարան, Սյունիքի մարզ

Ժամ. 15:00

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Սպանդարյանի գյուղապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Մենք ինչպե՞ս ենք իմանալու հենարանի ճշգրիտ դիրքը մեր հողամասում:

Պատասխան. Ա.Պետրոսյան, Շ.Քոչարյան

Երբ ավարտվեն գույքագրման և գույքի գնահատման աշխատանքները, ձեր հողամասի քարտեզը պատրաստ կլինի, որի վրա նշված կլինի հենարանի դիրքը: Քարտեզը կկցվի կազմված արձանագրությանը, որը կտրամադրվի ձեզ՝ ստորագրելու:

Հարց. սեփականատեր

Իսկ եթե իմ հողն ընկնում է լարերի տակ, չնայած ոչ մի հենարան չի կառուվելու այնտեղ:

Պատասխան. Ա.Պետրոսյան,

Եթե ձեր հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, ապա այն փոխվում է գյուղատնտեսականի, և դուք ստանում եք այս երկու կատեգորիաների շուկայական կամ կադաստրային արժեքի (երկուսից որն ավելի բարձր է) տարբերությանը համապատասխան գումարը:

Մասնակիցների ցուցակ, Սպանդարյան

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Ֆելիքս Ազիզյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ

2	Համլետ Վարդանյան	Սեփականատեր
3	Վրույր Կարապետյան	Սեփականատեր
4	Շահեն Եփրեմյան	Սեփականատեր
5	Աշոտ Սարգսյան	Սեփականատեր
6	Էդիկ Գրիգորյան	Սեփականատեր
7	Մասիս Սարգսյան	Սեփականատեր
8	Վարուժան Վարդանյան	Գյուղապետարանի աշխատակից
9	Վալերի Հայրապետյան	ԲԷՑ Գորիսի մասնաճյուղ
10	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
11	Շուշան Զոչարյան	Ֆինափ
12	Միքայել Թևոսյան	Energy Advisory ՍՊԸ, խորհրդատու



ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի
վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 29 ապրիլի, 2015

Վայր. Գորայքի գյուղապետարան, Սյունիքի մարզ

Ժամ. 12:00

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն ԼՏԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Գորայքի գյուղապետարանում ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. հանդիպմանը ներկա սեփականատերեր

Մենք աջակցում ենք ծրագրին և պատրաստ ենք համագործակցել, ներկա լինել գույքագրման ընթացքում, աշխատել գույքագրման խմբի հետ: Մենք միայն մտահոգված ենք հողերի վերաձևակերպման հետ կապված բյուրոկրատական գործընթացներով. մենք ստիպած ենք լինելու բազմիցս գնալու նոտարական գրասենյակ, հերթ կանգնելու, մինչև որ բոլոր փաստաթղթերը կարողանանք ձեռք բերել: Սա շատ ժամանակ և նույնիսկ ֆիզիկական դիմացկունություն է պահանջում, օրինակ, իմ ծեր մորից: Մենք շնորհակալ կլինենք, եթե ծրագիրն օգնի մեզ կրճատել այս գործընթացները:

Պատասխան. Ա.Պետրոսյան

ԲԷՑ-ը իրավական խորհրդատու է հատկացրել ձեզ օգնելու համար: Ձեզ հենց նոր տրամադրված տեղեկատվական գրքուկում գրված են հեռեխոսահամարները: Բացի այդ, ԲԷՑ-ի հեռախոսահամարը նշված է այն հայտարարության մեջ, որը այսուհետ փակցված կլինի այս շենքում: Ես խորհուրդ եմ տալիս, որ դուք զանգահարեք ցանկացած ժամանակ, և ձեզ կցուցաբերվի անհրաժեշտ օգնություն: Հողի գրանցման և վերագրանցման հետ կապված բոլոր ծախսերը կփոխհատուցվեն ԲԷՑ-ի կողմից:

Մասնակիցների ցուցակ, Գորայք

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Սոսիկ Կարապետյան	Սեփականատեր
2	Հարություն Մկրտչյան	Սեփականատեր
3	Սպարտակ Առաքելյան	Սեփականատեր
4	Առուստամ Առուստամյան	Համայնքի ղեկավար

5	Սամվել Անտոնյան	Գյուղապետարանի աշխատակից
6	Վալերի Հայրապետյան	ԲԷՑ Գորիսի մասնաճյուղ
7	Միքայել Թևոսյան	Energy Advisory ՍՊԸ, խորհրդատու
8	Արտյոմ Գրիգորյան	Համայնքի ղեկավարի տեղակալ
9	Վարոս Կարապետյան	Սեփականատեր
10	Մարտուն Թադևոսյան	Սեփականատեր
11	Քրիստինե Հարությունյան	Գյուղապետարանի աշխատակից
12	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
13	Շուշան Բոչարյան	Ֆինափ



ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի վերաբնակեցման գործողության պլանի հրապարակման և խորհրդատվության

Ամսաթիվ. 29 ապրիլի, 2015

Վայր. Ծղուկի գյուղապետարան, Սյունիքի մարզ

Ժամ. 14:30

Օրակարգ.

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը. փուլերը, ժամկետները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման ենթակա իրավունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Փոխհատուցման հիմնական սկզբունքները
Բանախոս՝ Ա. Պետրոսյան
- Հարցեր, պատասխաններ:

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Կալպատարու Պաուեր Թրանսմիշն LSԴ ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից Ծղուկի գյուղապետարանում՝ ծրագրի ընդհանուր ներկայացման նպատակով: Հանդիպմանը ներկա էին ԱԵԱ-երը, համայնքի ղեկավարը, գյուղապետարանի և ԲԷՑ-ի ներկայացուցիչներ:

Ա. Պետրոսյանը ներկայացրեց ծրագիրը. փոխհատուցման սկզբունքները, հիմնական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկացրեց որ ԱԵԱ-երը պետք է ակտիվորեն համագործակցեն ծրագրի հետ, մասնակցեն տեղազննման և գույքագրման գործընթացին:

Հարց ու պատասխան

Հարց. սեփականատեր

Եթե ես, օրինակ, կարտոֆիլ ցանեմ, այն կվնասվի՞ շին.աշխատանքների ընթացում:

Պատասխան. Ա. Պետրոսյան

Մոտեցման ճանապարհների անցկացման արդյունքում որոշ մշակաբույսերի վնասվելը անխուսափելի կլինի: Վնասները կփոխհատուցվեն: Իր հերթին, ծրագիրն աշխատելու է հնարավորինս նվազեցնել հասցված վնասները: Դրան հասնելու համար շինարարներն ունեն ձեռնարկության կարիքը: Դուք կարող եք շրջել նրանց հետ կից տարածքներով և հուշել այն ուղղությունները, որոնցով ավելի նպատակահարմար կլինի անցկացնել մոտեցման ճանապարհները:

Հարց. սեփականատեր

Մեր հողը հորս անունով է, որը մահացել է: Ո՞վ է ստանալու փոխհատուցումը:

Պատասխան. Ա. Պետրոսյան, ԲԷՑ Գորիսի մասնաճյուղի և Energy Advisory ՍՊԸ ներկայացուցիչներ

Հողը պետք է վերագրանցել ձեր անունով և ստանալ նոր կադաստրային վկայական: Փոխհատուցումը կլինի ձեր անունով: Դուք կստանաք իրավական խորհրդատվություն ԲԷՑ-ի կողմից նշանակված իրավաբանից: Հեռախոսահամարները գրված են ծրագրի տեղեկատվական գրքուկում, որը ձեզ տրամադրվեց, ինչպես նաև հայտարարության մեջ, որը կփակցվի տեղեկատվական տախտակին: Նշենք նաև, որ հողի վերաձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը նույնպես կփոխհատուցվեն:

Մասնակիցների ցուցակ, Ծղուկ

h/h	Անուն, ազգանուն	Կարգավիճակ
1	Սեդա Բախշյան	Սեփականատեր
2	Օվսաննա Սահակյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
3	Պայծառ Ծատուրյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
4	Մարիետա Միքայելյան	Սեփականատեր
5	Կարինե Խալաթյան	Սեփականատեր; գյուղապետարանի աշխատակից
6	Շիրակ Մարգարյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
7	Հրայր Մարգարյան	Սեփականատիրոջ ներկայացուցիչ
8	Էդվարդ Գասպարյան	Սեփականատեր
9	Արայիկ Մարգարյան	Սեփականատեր
10	Ռոբերտ Բաղդասարյան	Սեփականատեր
11	Մնացական Ամիրջանյան	Սեփականատեր
12	Հրայր Թորոսյան	Սեփականատեր; Ավագանու անդամ
13	Վալերի Հայրապետյան	ԲԷՑ Գործիսի մասնաճյուղ
14	Միքայել Թևոսյան	Energy Advisory ՍՊԸ, խորհրդատու
15	Շուշան Զոչարյան	Ֆինաֆ
16	Արմինե Պետրոսյան	ԿՓԹԼ
17	Հակոբ Խաչատրյան	Գյուղապետարանի հաշվապահ



ՀԱՎԵԼՎԱԾ 4 ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԷԼԵԿՏՐԱՍԱՏՎԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան _____ Երկու հազար տասնչորս թվական

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի միջև 2011 թվականի հունիսի 1-ին ստորագրված վարկային համաձայնագրով (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) և ՀՀ Կառավարության կողմից _____ -ին ընդունված թիվ _____ որոշումով ստորև նշված Վճարողը մի կողմից և ԱԵԱ-ն մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. **1. ԱԵԱ՝** «Բարձրավորտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագիրը ՀՀ օրենսդրությամբ և Վարկային համաձայնագրով սահմանված կարգով իրականացման հետևանքով ազդեցության ենթարկված անձինք, որոնք նշված են սույն կետում՝

Անուն, ազգանուն	Ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ

1.2. **Վճարող՝** «Բարձրավորտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ

1.3. **Փոխհատուցում (Նպաստ)**՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի կողմից հաստատված «Վերաբնակեցման գործողությունների պլան»-ի դրույթների համաձայն ԱԵԱ-ն կստանա հետևյալ փոխհատուցումները (Նպաստները)՝

ա	Վարձակալության դիմաց տրվող փոխհատուցում	դրամ
բ	Էական ազդեցության նպաստ	դրամ
գ	Խոցելի անձանց նպաստ	Վերականգնման նպաստ
		Էական ազդեցության նպաստ
ե	Բերք	դրամ

Փոխհատուցման (Նպաստի) ընդհանուր գումարը կազմում է _____ ՀՀ դրամ:

2. ՓՈԽՅԱՏՈՒՑՈՒՄ (ՆՊԱՍ)

2.1. Սույնով Վճարողը պարտավորվում է ԱԵԱ-ի և Վճարողի միջև _____թ-ին կնքված «Անշարժ գույքի առուվաճառքի» պայմանագրից բխող պարտավորությունները կատարելուց հետո _____ () բանկային օրում ԱԵԱ-ին վճարել 1.3 կետում նշված Փոխհատուցումը (Նպաստը) :

2.2. Սույնով ԱԵԱ-ն հաստատում է, որ համաձայն է սույն համաձայնագրի 1.3 կետում նշված Փոխհատուցման (Նպաստի) գումարի հետ և չունի դրա նկատմամբ որևէ առարկություններ կամ բողոքներ:

2.3. ԱԵԱ-ի համաձայնությամբ սույն համաձայնագրի 1.3 կետում նշված Փոխհատուցման (Նպաստի) վճարումը կատարվում է _____ -ի կողմից ներկայացված _____ բանկում բացված _____ հաշվի

համարի վրա:

2.4. Սույն համաձայնագրի 1.3 կետում նշված Փոխհատուցումը (Նպաստը) կայուն է, փոփոխման ենթակա

չէ: Հետագայում կողմերը իրավունք չունեն պահանջել ավելացնելու կամ նվազեցնելու նշված գումարը:

3. ԱԵԱ-Ի ԵՐԱՇԽԱՒԵՆԵՐԸ

3.1. ԱԵԱ-ն երաշխավորում է, որ սույն համաձայնագրի 1.1 կետում նշված անձանցից բացի չկան այլ անձիք որոնք ունեն Փոխհատուցումը (Նպաստը) կամ դրա մի մասը ստանալու իրավունք: ԱԵԱ-ն երաշխավորում է, որ երրորդ անձանց կողմից պահանջներ ներկայացնելու դեպքում պատասխանատվությունը կկրի ինքը՝ անկախ դրանց բնույթից, ժամկետից, ծավալից հիմնավորվածությունից,

3.2. ԱԵԱ-ն պատասխանատվություն է կրում իր կողմից տրված կեղծ երաշխիքների, ներկայացրած կեղծ

տեղեկանքների և տրամադրված կեղծ տեղեկատվության համար, և պարտավորվում է փոխհատուցել

Վճարողին բոլոր տեսակի ծախսերը և վնասները, որը կկրի Վճարողը ԱԵԱ-ի կողմից կեղծ երաշխիքներ տալու, տեղեկատվություն տրամադրելու և կեղծ տեղեկանքներ ներկայացնելու հետևանքով:
3.3 Շինարարական աշխատանքներն իրականացնելու համար տարածքներ և ուղիներ ունենալու անհրաժեշտության դեպքում, ԱԵԱ-ն պարտավորվում է թույլ տալ Վճարողին օգտագործել իրեն պատկանող հողամասը:

4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Վճարողը պարտավորվում է հատուցել շինարարական աշխատանքների ընթացքում ԱԵԱ-ին պատկանող մշակաբույսերին և ծառերին պատճառված վնասը:

4.2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.3. Սույն համաձայնագիրը կազմված է ___ (___) օրինակից, որոնցից մեկական տրվում է յուրաքանչյուր ԱԵԱ-ին և Վճարողի կողմից լիազորված անձին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Վճարողի անունից՝

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ -ի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս _____-ը

ստորագրություն

6.2 ԱԵԱ՝

_____/,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս _____-ը/

ստորագրություն

_____/,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի անդես է գալիս _____-ը /

ստորագրություն

ՎԳՊ-ն իրականացնող միավորի կառուցվածքը և աշխատանքի նկարագրությունը

Առաջարկվել է, որ 5 հոգուց բաղկացած մասնագետներ աշխատեն ՎԳՊԻՄ-ում: Միավորը կվերահսկվի Ծրագրի ղեկավարի կողմից:

Պաշտոն	Ներգրավվածություն	Հիմնական պարտականությունները
Խմբի ղեկավար	Լրիվ դրույքով	Իրականացման ծրագրի ամբողջ կազմակերպչական և համակարգման գործողությունները Վերահսկող ընկերությանը, ԲԷՑ-ի ղեկավարությանը և ՀԲ-ին հաշվետվություններ կայացնելը
Իրավաբան	Կես դրույքով	Իրավական խորհրդատվություն ինդրահարույց դեպքերի համար, Բողոքներին պատասխանելու գործընթացին մասնակցություն Դատարանում ներկայացնելու համար հայցերի կազմում Դատական գործերի ղեկավարում
Տեխնիկական հարցերով օգնական*	Լրիվ դրույքով	Փաստաթղթերի ձևակերպում, ներառյալ ծանուցման գրությունների, նախագծային պայմանագրերի և այլն կազմումը
Որակի մասնագետ	Լրիվ դրույքով	ԱԵԱ հրապարակվող բոլոր փաստաթղթերի որակի ստուգում (պայմանագրեր, գրագրություն), հրապարակման գործընթացի կազմակերպում Բողոքներ՝ բողոքների վերաբերյալ պատասխանների համակարգում ԱԵԱ հետ կապի հաստատում պայմանագրի ստորագրման գործընթացը կազմակերպելու համար, ըստ Խմբի ղեկավարի պահանջի
Վերաբնակեցման մասնագետ*	Լրիվ դրույքով	Տեղանքում պայմանագրի ստորագրման կազմակերպում
Վերաբնակեցման մասնագետ*	Լրիվ դրույքով	Տեղանքում պայմանագրի ստորագրման կազմակերպում
Մասնագետների քանակը կարող է ավելացվել իրականացման գործընթացն արագացնելու նպատակով		

Հիմնական առաջադրանքները, որոնք պետք է իրականացվեն ՎԳՊ-ի իրականացման համար, ներառում, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

1. Պաշտոնական ծանուցումներ
 - a. Արձանագրությունների ստորագրում
 - b. Յուրաքանչյուր հողի սեփականատիրոջը արձանագրությունների ուղարկում
 - c. Ծանուցման գրությունների պատրաստում և ուղարկում բոլոր մասնավոր և համայնքային հողի սեփականատերերին, հենց որ Կառավարության Որոշումը հաստատվի
 - d. Կառավարության Որոշման հրապարակում լրատվամիջոցներին
 - e. Նախագծային պայմանագրերի կազմում, ներառյալ որակի ստուգումը
 - f. Պայմանագրերի նախագծի ուղարկում

2. Պայմանագրի ստորագրում
 - a. Յուրաքանչյուր հատուկ դեպքի վերլուծություն և այս դեպքերի համար մանրամասն գործողության պլանի մշակում
 - b. Իրականացման գործընթացի ժամանակ ԱԵԱ հետ կապի հաստատում (պարզաբանումներ, հանդիպումների կազմակերպում)

- c. Պայմանագրի ստորագրման համար փաստաթղթի լրակազմի վերանայում փաթեթը ամբողջականացնելու պայմանով
- d. ԱԵԱ համար տեղափոխման կազմակերպում
- e. ԱԵԱ հետ կադաստրում աշխատել
- f. Մահացած և Հայաստանից դուրս սեփականատերերին աջակցություն
- g. Խնդրահարույց դեպքերի հետ կապված գրանցման/վերագրանցման համար կադաստրի հետ համակարգում

3. Օտարում

- a. Դատարանի հաշվեհամարին կամ նոտարի հաշվեհամարին փոխհատուցման գումարի փոխանցման կազմակերպում.
- b. Վերազնահատման կազմակերպում, եթե գործը գնում է դատարան
- c. Գործը ներկայացվում է դատարան

4. Վերահսկման գործընթաց

- a. ԲԷՑ-ի ղեկավարության և ՀԲ-ի համար շաբաթական հաշվետվությունների կազմակերպում
- b. Վերահսկող ընկերությանը ներկայացվող բողոքների հաշվետվության համար փաստաթղթերի պատրաստում

5. Հողի նպատակի փոփոխում

- a. Գործընթացի համար դիմում
- b. Գործընթացին հետևում

6. Բողոքներ

- a. Իրականացման գործընթացի ընթացքում բողոքների փաստաթղթայնացում և փոխանցում ԲԷՑ-ի կոնտակտային անձին
- b. ԱԵԱ պատասխանի փոխանցում

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ և ԾԱՌԵՐԻ ՏԵՂԱԶՆՆՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անշարժ գույքի տեղազննում

1. Գնահատողի կողմից հասարակ տեսողական զննությամբ և ԱԵԱ-ներին հարցման ենթարկելու միջոցով լրացվել են հողամասերի և շինությունների հիմնական բնութագրիչները արտացոլող տեղազննման ձևաթերթերը: Հետևյալ նկարագրություններն են ընդգրկվել՝
 - a. Գույքի ընդհանուր բնութագիրը
 - ենթակառուցվածքների առկայությունը, այդ թվում՝ խմելու ջրի, էլեկտրական հոսանքի, կոյուղու, հեռախոսագծերի, բնական գազի և այլնի հասանելիությունը,
 - հիմնական ծառայություններին հասանելիության հնարավորությունը, այդ թվում՝ մետրոյից, առողջապահական հաստատություններից և առևտրային սրահներից հեռավորությունը,
 - ճանապարհի առկայություն, ինչպես նաև շրջակա միջավայրի գնահատում
 - b. Հողամասի բնութագիրը
 - Նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը
 - իրավունքի տեսակը, օր.՝ սեփականություն հանդիսացող, վարձակալված կամ անօրինական կերպով օգտագործվող,
 - լայնությունը, երկարությունը և երկրաչափական կառուցվածքը,
 - տրանսպորտի առկայությունը և երկաթգծին հասանելիությունը,
 - դիրքը, տեղադրությունը, քարքարոտությունը և այլն,
 - բարելավումների առկայությունը և դրանց նկարագրությունը
 - c. Շինությունների և բարելավումների նկարագրություն
 - շինության անվանումը, նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը
 - ենթակառուցվածքի առկայությունը
 - հիմքի, միջհարկային ծածկերի, արտաքին պատերի համար օգտագործված նյութերը,
 - դռների և պատուհանների առկայությունը
 - տեղափոխման ենթակա կահույքի և կենցաղային իրերի առկայությունը և այլն
2. Այս փուլում իրականացվում էր գույքերի ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ կամ անշարժ լինելու կարգավիճակի որակումը: Անշարժ են որակվել այն գույքերը, որոնք անհնար է հողամասից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու: Գույքի մնացած մասը հաշվի է առնվել որպես շարժական:.
3. Այս փուլում իրականացվել է հողամասերի, ինչպես նաև արտաքին և ներքին շինությունների ֆոտոլուսանկարումը:

Մշակաբույսեր և ծառեր

4. Որակավորում և փորձառություն ունեցող գյուղատնտեսը հաշվառել է առկա ծառերը և մշակաբույսերը հողամասի ազդեցության ենթակա հողամասերում: Հաշվառվել են բոլոր մշակաբույսերը, թփերը, պտղատու, դեկորատիվ, ինչպես նաև փայտանյութ տվող ծառերը:

Պտղատու ծառեր և թփատեսակներ

5. Պտղատու ծառերի տարիքը որոշվում է փորձառու գյուղատնտեսի փորձագիտական կարծիքի հիման վրա, որից հետո ծառերը դասակարգվում են՝ ըստ հետևյալ խմբերի.

ա. տնկիներ,

- բ. ոչ պտղատու ծառեր,
- գ. պտղատու/կրող ծառեր

Դեկորատիվ ծառեր, փայտանյութ տվող ծառեր և թփատեսակներ

- 6. Գյուղատնտեսը չափել է փայտանյութ տվող ծառերի բնի հաստությունը, ինչպես նաև դեկորատիվ ծառերի, գեղազարդ թփերի ու ծառերի, պտղատու թփերի բարձրությունը:

Մշակաբույսեր

- 7. Մանրամասն չափագրման հետազոտությունների ընթացքում գյուղատնտեսը որոշել է մշակաբույսերի տեսակը՝ հիմնվելով հասարակա տեսողական հետազոտման վրա:

ԳՆԱՅԱՏՈՒՄ և ՓՈԽՅԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՅԱՇՎԱՐԿ

Գործընթացը կարգավորող փաստաթղթեր

- 8. Փոխհատուցումների հաշվարկի և միավորի գնի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվել է՝ ըստ հետևյալ փաստաթղթերի.
 - i. Համաշխարհային Բանկ, ԳՔ 4.12 – Ոչ կամավոր վերաբնակեցում, 2001թ-ի դեկտեմբեր
 - ii. Վարկային համաձայնագիր (Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու Չարգացման Միջազգային Բանկի միջև, (ամսաթիվ 01.06.2011թ.)
 - iii. Վերաբնակեցման Քաղաքականության Շրջանակ (ՎՔՇ)՝ հաստատված Վերակառուցման ու Չարգացման Միջազգային Բանկի կողմից
 - iv. 2005թ-ի հոկտեմբերի 1-ին ընդունված «Անշարժ գույքի գնահատման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-189-Ն)
 - v. Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ
 - vi. ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ-ի «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների, ինչպես նաև շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» թիվ 09-Ն հրաման:

Գնահատման Շրջանակ

- 9. Ծրագրի շրջանակներում գնահատվել են՝
 - i. Ազդեցության ենթակա սեփականության իրավունքով տնօրինվող բոլոր հողամասերը, ինչպես նաև այն համայնքային հողամասերը, որոնք վարձակալական հիմունքներով կամ ինքնակամ օգտագործվում են անհատների կողմից: Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող շենքը, շինությունները, պարիսպները,
 - ii. Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող բարելավումները,
 - iii. Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող մշակաբույսերը, պտղատու, դեկորատիվ և գեղազարդ ծառերն ու թփատեսակները:

ՀՈՂԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր մոտեցում

- 10. ՎՔՇ-ի համաձայն, ազդեցության ենթակա հողի դիմաց փոխհատուցում կստանան հողամասի սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները, որոնց գույքի նկատմամբ

համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման և անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործողները: Յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է փոխհատուցման հաշվարկի հատուկ մոտեցում: Ընդհանրացված տեսքով այն ներկայացված է ստորև՝

**Գծապատկեր 1
Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի փոխհատուցում**

Սեփականատեր	Հողօգտագործողներ, որոնց գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման	Այսօրինի հողօգտագործող (օրինականացման ոչ ենթակա) օգտագործման անցած տարիների համար
<ul style="list-style-type: none"> փոխարինման արժեք+ 15% 	<ul style="list-style-type: none"> փոխարինման արժեք+ 15% (օրինական կարգավիճակ ստանալուց հետո) 	կփոխհատուցվեն ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ամենաբարձրը լինի) համահավասար միանվագ դրամական նպաստով՝ 1) < 1 տարի – 5%, 2) < 15 տարի – 14%, 3) < 25 տարի – 20%, 4) 25 տարի և ավելի – 25%, համաձայն Բաժին 3-ում նկարագրված գնահատման մեթոդաբանության:
Վարձակալներ Վարձակալության մնացած տարիների համար		
<ul style="list-style-type: none"> մինչև 1 տարի - (փոխարինման արժեք+15%) *0.05 մինչև 15 տարի (փոխարինման արժեք+15%) *0.14 մինչև 25 տարի (փոխարինման արժեք+15%) *0.20 25 և ավելի տարի (փոխարինման արժեք+15%) *0.25 		

Հողի փոխարինման արժեքի գնահատում

11. Հողի գնահատումն իրականացվել է փոխարինման արժեքով՝ հիմք ընդունելով շուկայական սակագները: Շուկայական սակագները գնահատվել են համեմատական մեթոդի միջոցով, ինչպես սահմանված է կառավարության կանոնակարգերով: Սույն մեթոդի հիման վրա որոշվել է հողի արժեքը՝ հաշվի առնելով միևնույն տեղակայություն և նույն կիրառման նպատակ/հատկանիշներ ունեցող վերջերս վաճառված առևձագն երեք համեմատման ենթակա հողամասերի վաճառքի ճշգրտված միջին արժեքը: Եթե գնահատվող հողամասի նույն վայրում ընդունելի համեմատիչներ առկա չեն, մեկ կամ ավելի համեմատման ենթակա հողամասեր են գծագրվել այլ վայրից: Համայնքային և պետական հողերի համար ընտրվել է կադաստրային արժեքը, համաձայն ՀՀ Կառավարության Որոշման (1746-Ն, 2003թ.)

12. Գնահատվող հողամասի և համեմատման ենթակա հողամասի հատկանիշների/որակի միջև փոքր տարբերություններն արտացոլելու նպատակով համեմատման ենթակա հողամասերի միջին շուկայական վաճառքները ճշգրտվել են՝ ըստ մի քանի համեմատության պարամետրերի և համապատասխան գործակիցների:

Գնահատման ընթացակարգը

13. Հողի գնահատման համեմատական մեթոդը կիրառվել է հետևյալ կերպով.
- i) Համանման անշարժ գույքի շուկաները վերլուծվել են:
 - ii) Առևձագն երեք համեմատության միավորներ են սահմանվել:
 - iii) Տարբերակվել են համեմատության անհրաժեշտ տարրերը:
 - iv) Համեմատության միավորների արժեքը ճշգրտվել է՝ ըստ համեմատության տարրերի և համեմատվող անշարժ գույքի համար միջինացված մի քանի փոփոխված գնային ցուցանիշների:
 - v) Ստացված շուկայական արժեքը համեմատվել է կադաստրային արժեքի հետ:
 - vi) Սահմանվել է հողի գինը:

Քայլ 1

14. Համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակը վերլուծելու և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվություն ընտրելու նպատակով՝ Գնահատողը օգտվել է

հրապարակային աղբյուրներից (մասնագիտական ամսագրեր, կայքեր, արտաքին գովազդներ), անհատական տվյալների բազայից⁷, ինչպես նաև ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից ձեռքբերված տեղեկատվությունից: Ստացված տեղեկատվության հիման վրա գնահատողը օգտագործել է ամենահամադրելի/ համապատասխան տեղեկատվությունը (իր համեմատության տարրերով):

Քայլ 2

15. Սկզբունքորեն համեմատիչ արժեքների աղբյուր են հանդիսացել կատարված վաճառքների արձանագրությունները՝ ստացված ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից: Եթե որոշակի հողամասի համար արձանագրությունները չեն ներառել օգտագործելի համեմատիչներ, ապա օգտագործվել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված գույքի ցանկի շուկայական գները կամ հողամասի վաճառքի առաջարկները (Նորությունների թերթերում ու կայքերում)՝ համեմատիչների ձևավորման նպատակով: Յուրաքանչյուր գնահատված հողամաս համադրվել է առնվազն (3) երեք համեմատման ենթակա հողամասերով:

Քայլ 3

16. Համեմատման հողամասերի իդենտիֆիկացումից հետո մի քանի այլ լրացուցիչ պարամետրեր նույնպես հաշվի են առնվել՝ գնահատված հողամասերի և համեմատման հողամասերի հարաբերական որակի/հատկությունների համեմատության նպատակով: Գնային ճշգրտումների պարամետրերը և գործակիցները թվարկված են ստորև՝

Վաճառքի պայման և շուկայի վիճակ

